



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Q/pysedegmazt-

Чиг. Р/4. үзүүлэгчт-


Түүрүүсийн хөснөгт

1905

391.99

B - 66

1905



-6 NOV 2011

ՆԵՐՎԱՆԵԶՈՒՔԵ

ՊԱՏՈՒԻ

ՅԱՄԱՐ

10,105,2000/-

891.99  
C-66

Հրատարակութիւն

Ա. ՆԵՐՄԻՍԵՆԻ և Մ. ԳԵՂՋԵԿԵՆԻ

891.99

Հ-66

ԵՒՐՎԱՆՁԱՐԵ

# ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ. ԶՈՐԱ ԱՐՍՅՈՒՐՈՎ,

Հրատարակութիւն

Ա. ՆԵՐՍԻՍԵՂԻ և Մ. ԳԵՂՐԳԵՂԻ

ԹԻՖԼԻԶ

Ելեքտրաշաբաթ ապարան «ՀԵՐՄԱԿԱ» ընկերութեան  
1905 (98)

Дозволено цензурою 6-го сентября, 1904 г.



6119 - 70

Настоящая пьеса, подъ заглавиемъ «Изъ-за  
чести», разрѣшена г. И. Об. Главноначальствую-  
щаго для представленія на сценахъ края. Сен-  
тября 17-го дня 1904 г. г. Тифлисъ.

Предсѣдатель Комитета *М. Гаккель.*

Секретарь *Н. Меликъ-Нубаровъ.*

*Ներկայ պիեսի ներկայացնելու իրաւունքը  
վերապահուած է Ալեքսանդր Շիրվանզադէին։ Այն  
ահձինք, որոնք, առանց հեղինակից իրաւունք  
ստանալու, կըներկայացնեն պիեսը, կենթար-  
կուեն օրինական դատի։ Իրաւունք խնդրելու  
համար պէտք է դիմել։ Տիֆլիս - А. Ширван-  
задэ.*

## ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐԾ ԱՐԱՐՈՒԵԾՈՎ

ԴՈՒՅՆՈՂ ԱՆՁԻՆՅԱ

ԱՆԴՐԵԱՍ ԷԼԻԶԲԱՐԵԱՆ: Տեղական յայտնի հաւուստերից մէկը: 55 տարեկան առոյգ և ամրակազմ տղամարդ, կարձ խուզած ալեխառն մազերով, ցանցառ միրուքով և կարմիր այտերով:

ԵՐԱՆՈՒԾԻ: Նրա ամուսինը: Քահանայի դուտոր, 46 տարեկան, ժամանակից առաջ թառամած, դժգոյն, նիհար կին համակրելի և գեղեցիկ:

ԲԱԳԻՐԱԾ: Էլիզբարեանների աւագ որդին: Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան, նուանդուն դէմքով: Զեերն ու շարժումներն արագ են, ոճը կարուկ և գրական:

ՍՈՒԻՐԵՆ: Էլիզբարեանների երկրորդ որդին, 23 տարեկան կենսախինդ երիտասարդ, որի գէմքը կըում է շուայտ կենցաղի վաղաժամ հետքերը, բայց համակրելի է: Հագնւում է վերջին տարաղով:

ԲՈԶԱԼԻԱ: Էլիզբարեանների մեծ աղջիկը: 24 տարեկան, բաւական գեղեցիկ բայց չափազանց ինքնագոն գէմքով օրիորդ: Հագնւում է միշտ շքեղ, առանց գոյնուրի խորութիւն:

ՄԱՐԳԻՐԻԾ: Էլիզբարեանների երկրորդ աղջիկ-

կը: 22 տարեկան, մտախոհ դէմքով, արտայայտիչ աշ-  
քերով օրիորդ մի քիչ մօրը նման, բայց աւելի գեղե-  
ցիկ: Հազնուում է համեստ ճաշակով:

ԱՐՏԱՇԵՍ ՕԹԱՐԵԱՆ: Անդրէասի հանգուցեալ  
ընկերոջ որդին և նախկին որդեգիրը: 26—27 տա-  
րեկան, խոհուն դէմքով, նեարդային շարժումներով:  
Հազնուում է միշտ սկ:

ԱԱՂԱԹԻ. Երանուհու եղբայրը և Անդրէասի հա-  
ւատարիմ աջակիցը: Մոտ 50 տարեկան, անվրդով,  
բայց խորամանկ դէմքով: Երեսը սափրում է, քոն-  
քերի մօտ փոքրիկ մօրուսհամներ թողնելով: Հազն-  
ուում է միշտ միատեսակ—լայն վարտիկ, սկ աթլասի  
արխալուզ, վրէն երկարաւուն, լայն պիջակ: Վզովը  
գցած է ժամացոյցի ոսկէ շղթայ: Մէջքին կապած է  
ոսկէ քամար: Միշտ գործ է ածում դեղին սաթի տէ-  
րողորմեա խոշոր հատիկներով: Կօշիկների տակերը մի  
մատնաչափ հաստ են:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԿԱՐԻՆԵԱՆ: Անդրէասի հաշուա-  
պահը: Ժամանակից առաջ ծերացած 42 տարեկան  
տղամարդ: Սովորական ծառայողի միջին տիպար:

ՎԱՐԴԱՆ: Սպասաւոր էլիզբարեանների գրասե-  
նեակում: Երիտասարդ: Խօսում է Շամախու բարբառով:  
ԶԱՐՈՒՀԻ: Երիտասարդ աղախին:  
Գործողութիւնը կատարւում է էլիզբարեանների տանը:  
Մեր ժամանակի անցք:

## ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

### ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

### ԱՐԱՐՈՒԱԾՈՎ ՅԹԱԳԻՆ

Բեմը ներկա ացնում է Անդրէաս և Բագրատ է-  
լիզբարեանների պարապելու սենեակը, որ բոնում է  
սեպհական տան վերին յարկում անկիւնային դիրք  
բնակարանի և գրասենեակի միջև:

Միջին մեծութեամբ սենեակ: Աջ \*) պատի մէջ  
դէպի փողոց երկու մեծ լուսամուտներ, որոնց մէջտե-  
ղում դրած է Անդրէասի գրասեղանը, վրէն, բացի գրե-  
լու պարագաներից, համարակալ, հեռախօսի ապարատ  
և էլէքտրական շարժուն լամպար: Սեղանի քով, պա-  
տի կողմում մի մեծ բազկաթոռ, միւս կողմում՝ մի հա-  
սարակ աթոռ:

Խորքի պատի մէջ երկու դռներ, մէկը բեմի  
կենտրոնական ուղղութեամբ, դէպի գրասենեակ, միւս  
ուղղորովին ձախ, գրեթէ անկիւնում, դէպի նախա-  
սենեակ:

Զախ պատի մէջ ևս դռներ, որոնք տանում են  
դէպի բնակարան: Այս դռների մօտ, դէպի աւանս-

\*) Ծանօթ. Աջ ու ձախը ընդունել հանդիսականների կողմէց:

ցենա Բաղրամի գրասեղանը, վրէն, բացի սովորական պարագաներից, զրելու գործիքներ, գծագրութիւններն մի քանի մասնագիտական գրքեր ինժեների համար: Սեղանի ետևում երկաթէ դրամարկզ: Խորքում, դէպի աջ—վառարան:

Պատերի տակ աթոռներ: Յատակի աջ կողմը ծածկում է գորգով: Լուսամուտները վարագուրած են:

## ՏԵՍԻԼ I.

### ՍԱՂԱԹԷԼ ԵՒ ԿԱՐԻՆԵԱՆ

Վարագոյրը բարձրանալիս Սաղաթէլը, Անդէսաի գրասեղանի քով կանգնած, հեռախօսով խօսում է: Խորքի դոները բացուած են, ներս է մտնուած Կարինեանը եւ սկսում է Անդէսաի գրասեղանի վրայ շատ դանդաղ ինչ-ոք փնտրել: Այս դոները բացուելիս հեռու երեսում է մի բարձր հաշուեղան, ուժի քով կանգնած պարապում է մի երիտասարդ: Մերթ ընդ մերթ երեսում են եւ որիշ ծառայողներ, նաեւ այցելուներ, որոնք այս ու այն կողմ են անցնում զբաղուած դէմքերով: Գործողութեան ընթացքում, մինչեւ գրասեղանակի փակովիլո, այստեղից լուսում են համարակալի շնչիւոց եւ հեռախօսի զանգակի հընչիւններ:

**ՍԱՂԱԹԷԼ.** (Հեռախօսով) «Համէէ՞: Այո, շուտով կը գայ: Հըմ, չեմ լսում: Համ: Լաւ, ուղարկիր: Ցըտեսութիւն»: (Զանգակը հնչեցնում է եւ գործիքը դնում իւր տեղը): Օրհնուի տելե-

Փօն հնաբողը, շատ լաւ բան է վաճառականի համար: Հա, ինչ էի ասում, Արխատակէս, հէնց որ ձեռքիդ գործը վերջացնես, կըսկսես Բաղրամի հաշիւը կազմել: (Հիգնօրէն) Մեր պարոն ինժեները ուղում է իմանալ, ինչքան է ծախսուած իւր գործարանի վրայ:

**ԿԱՐԻՆԵԱՆ.** Բայց գուք ձեր արած ծախսերի հաշիւները դեռ չէք ներկայացրել գրասեղանակին: Պարոն Բաղրամն ամեն մի ծախսի համար առդարացուցիչ գոկումենտ է պահանջում:

**ՍԱՂԱԹ.** Բան է հնարկել պարոն Բաղրամդ—արդարացուցիչ գոկումենտ: Ես Անդրէսս էլիզարեանի մօտ մինչև օրս առանց արդարացուցիչ գոկումենտի եմ ծառայել, էլի կըծառայեմ: Հայրը հաւատում է, թող որդին էլ հաւատայ (Հռովթին): Այդ ինչ ես փնտրում:

**ԿԱՐ.** Մնացականնեանների պայմանադիրը: (Դադարում է փնտրել):

**ՍԱՂ.** Հէր օրհնած, այսքան ժամանակ ծառայում ես այստեղ, էլի չըդիտես, որ Անդրէսս էլիզարեանը սեղանի վրայ երբէք հարկաւոր թղթեր չի թողնում:

**ԿԱՐ.** Ճշմարիտ, ես մոռանում եմ, որ էլիզարեանը բոլոր մարդկանց համարում է գողի ծննդենէ:

**ՍԱՂ.** Այո, նրա կարծիքով, մարդիկ գողանում են ամեն ինչ, որ կողպէքի տակ չէ: Եւ այդ շատ ճիշտ կարծիք է: Աշխարհի երեսին դրուստ մարդ չըկայ, բոլորը գող են: (Տէրողոր-

մեան ճեռների մէջ տըորում է եւ հոտ քաշում):  
ԿԱՐ. Խղճի դէմ բան էք ասում, պարոն Սա-  
ղաթէլ:

ՍԱՂ. Էհ, դու էլ խօսքի տակին գլխին—  
խիղճ: Ինչպէս տեսնում եմ, այդ կերակուրը  
շատ ես սիրում: Ափսոս որ փոր կշտացնող չէ:

ԿԱՐ. Այո, շատերի համար անմարսելի է:

ՍԱՂ. Ինչպէս, օրինակ, հրամանոցդ համար:  
Տեսնում եմ, քառասուն ու երկու տարեկան  
մարդ ես, մազերդ ճերմակել են, մէջքդ ծռուել  
է և էլի, խիղճ-խիղճ ասելով, հալուում ես: Երա-  
նի գիտենայի, այսօր-էգուց որ ոտներդ ձգես,  
կնիկդ գրպանումդ պատանի փող կըզտնի՞:

ԿԱՐ. Կարող է չըգտնել, բայց ես գոնէ  
հանդիստ հոգով կըմեռնեմ:

ՍԱՂ. (Կծու հեզնութեամը) Ինչպէս չէ, կէս  
դիւժին ճընկլըճտեր քաղցած փորով թողնելով  
փողոցում: Էէհ, պարոն, խիղճը լաւ բան է, մի-  
այն ափսոս որ գերի է ընկել փողի ճեռքը և օր-  
օրի վրայ մաշվում է տանջանքից: Հա, ինչ էի  
ուզում հարցնել. այսօր Օթարեանն եկել է այս-  
տեղ:

ԿԱՐ. Ոչ:

ՍԱՂ. Էհ, գոհութիւն Աստծու: (Տէրողոր-  
մեան տրորում է եւ հոտ քաշում:)

ԿԱՐ. Ասացէք, ինդըեմ, ի՞նչ է պատահել  
այդ երիտասարդի և պարոն Անդրէասի մէջ:

ՍԱՂ. Այդ երկար պատմութիւն է: Բայց  
մեր գործը չէ:

## ՏԵՍԻԼ II.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ. (Ներս է մտնում շտապով ծախ  
դղներից վերարկուով ու զիսարկով:) Պապան  
այստեղ չէ: Աւելի լաւ: (Սաղաթէլին) Քեռի, ի  
սէր Աւածու, առւր ինձ իսկոյն երեք հարիւր  
ոռութիւն:

ՍԱՂԱԹԷԼ. (Տէրողորմեան զրպանը զնելով)  
Հէէ հէ, էլի վազեց գլխիս: (Սուրէնին) Ի՞նչ է  
պատահել, էլի բարկացած հս:

ՍՈՒՐ. Հարց ու փորձի ժամանակ չէ: Ինձ  
ձեռաց երեք հարիւր ոռութիւն փող է հարկաւոր:

ԿԱՐ. Երեխ, էլի բակարայում տանուլ էք  
տուել:

ՍԱՂ. Բաս չէ, առուտուրում վնաս է ա ել:  
Սըրանը կամ բակարան է կամ թխլիկ-թխլիկ մամ-  
զէները:

ՍՈՒՐ. (Գրգոռուելով Կարինեանի դէմ) Պա-  
րոն թանաք լզող, այդ ձեր գործը չէ, ինդրեմ  
անկոչ վերահսկողի գեր չըկատարէք: Քեռի, եթէ  
այս ըոպէին երեք հարիւր ոռութիւն չունենամ—կը  
խայտառակուիմ: Պատուի ինդիր կայ մէջ տեղ:՝  
եթէ ինձ սիրում ես—մի ուշացնիր:

ՍԱՂ. Շատ եմ սիրում, Սուրէն ջան, բայց  
որ փող չըկայ, ինչ անեմ: Քեզ յայտնի է, որ  
այժմ հօրդ գործերը եղբայրդ է կառավարում:  
(Տէրողորմեան զրպանից հանում է):

**ՍՈՒԻՐ.** Եղբայրս, Եղբայրս, ամեն տեղ նա  
ինձ խանդարում է: Բայց թող սպասի, ո՞ի օր  
առ սմներս ցոյց կը տամ նրան:

**ՍԱՀ.** Էէ, նա այն պառուղներից չէ, որ քո  
ատամներից վախենայ:

**ՍՈՒԻՐ.** (Անհամընը) Տալու ես փող, թէ չէ:

**ՍԱՀ.** Այ Եղբայր, ես ի՞նչ անեմ, ահա նա  
սնդուկը, սա էլ դու, համեցէք, վերցրու, ի՞նչ  
ես եախիցս կպել:

**ՍՈՒԻՐ.** Բահալին տուր:

**ՍԱՀ.** (Հառաշելով) Զըկայ, Սուրէն ջան, չը  
կայ: Այժմ արքայութեան ղոների պահապահն  
ես չեմ: Մէկէլ, մեր մէջ տասծ, հիմայ այդ սըն-  
դուկում, բացի պայմանագրերից և վէքսեներից,  
ոչինչ չըկայ: Եղբայրդ մեր կարդ ու կանոնները  
փոխել է: Գրանից առաջ այդ սնդուկում տասը-  
քսան հագարներով փող էր լինում շարաթներով  
ընկած: Հիմա եղբայրդ բանկումն է պահում:

**ԿԱՐ.** Նա տում է փողն ու խելքը միշտ  
շարժման մէջ պէտք է լինին:

**ՍՈՒԻՐ.** Ո՞ր այդպէս է, տուր քո զրպանից:

**ՍԱՀ.** Սուրէն ջան, ախար ես փող ո՞րտե-  
ղից ունիմ: Ես մի խեղճ գործակատար եմ:

**ՍՈՒԻՐ.** Էլի մի սկսիր Դազարոսի շարականն  
երդեւ կաշիդ գաբախանում կը ճանաչեմ: Քո կօ-  
շիկների այդ հաստ կարկատանի մէջ էլ փող կայ:

**ՍԱՀ.** Տէր, Անցո զբաժակս այս յինէն:

**ՍՈՒԻՐ.** Դէ լաւ, հօրդ խօսքերը մի կրկ-  
նիր: Սոսում են, դու նրան այնքան ես նման,

որքան ես Պօղոս Առաքեալին: Հանիր քսակդ,  
տեսնենք:

**ՍԱՀ.** (Մելուսի) Դրա ձեռքից ազատուել չե-  
կարելի: (Տէրողորմեան հանդաբար ղնում է զըլ-  
պանը եւ շատ հանդաբար պիշակի զրպանից հա-  
նում է մի ահազին մաշուսծ, կնդուտ կաշուէ  
փողաման): Կարծեմ, հարիւր ոռութուց աւելի  
չունիմ: (Եթեսը դարձնելով, թագոն նայում է  
փողամանի մէջ): Փահ, իսկի հարցիր էլ չըկայ,  
յիսուն է:

**ՍՈՒԻՐ.** Այդ հեշտ է ստուգել: Տնկը ինձ այդ  
տուպրակը, տեսնեմ: (Փողամանը խլում է):

**ՍԱՀ.** (Վախեցած): Վայ, այդ ի՞նչ ես անում:

**ՍՈՒԻՐ.** Ուզում եմ մի քիչ հետազոտել այս  
հնագիտական գզրողը: (Սկսում է փողամանը  
տնտղով եւ մէկ մէկ դուքս է քերուտ անուանած  
իրեր): Այստեղ մտիկ արէք, ինչ ասես—կայ:  
Հին մուրհակներ, ակցիաներ, բանկային կտրոն-  
ներ, գերբովայեա մարկաներ, եաոլիկ գինու  
մշնուց...

**ՍԱՀ.** Աղա, ամօթ է:

**ՍՈՒԻՐ.** (Դուրս է քերուտ մի նամակ): Այս  
ինչ բան է: Վարդագոյն թղթի վրայ նամակ, կնոջ  
ձեռքով գրուած: (Հրոտ է քաշում): Անուշահոտ...  
ՍԱՀ.

(Կարինեանից բաշումով) Աղա, ամա-  
չեր, մարդ կայ այստեղ...

**ԿԱՐ.** (Թագուն ծիծաղուտ է):

**ՍՈՒԻՐ.** (Հանելով նամակի միջից շորի մի-  
կտող): Ահա այս էլ նամակի պատասխանը—դէ-

բիացուի նմուշ, արշինը վեց շահանոց: Տէր ողործած Աստուած, այստեղ մտիկ արէք, դեղատուսեր, սիզնատուրա, աչքի ճար, քինաքինա, ամբողջ դեղատուն: Պակասում է բժիշկը: Հապա, տեսնենք ուր է ցաւդ, որ բժշկենք: Ահա, Օօ, այստեղ երեք հարիւր էլ կայ, հինգ էլ, տասն էլ:

**ՍԱԴ.** (Ամբողջ ժամանակ անհանգիստ, աշխատում է փողամանը խլել: ) Այդ խօմ ափ-աշկարայ կողոպտել է նշանակում: Տեսնում ես, Արիստակէս, օրը ցերեկով:

**ԿԱՐ.** (Մեկուսի) Աւելի լաւ է այդպէս կողոպտել, քան թագուն-թագուն գողանալ, ինչպէս դու:

**ՍՈՒԲ.** Մի վախենար, աւելի չեմ կերցնիլ: Այս, ցվայ, դրայ, հերիք է, (Փողերը դնում է գրամանը, փողամանը վերադարձնում է Սաղաթէլին: ) Ստացիր թանգարանդ, ֆի, մաղութի հոտ է փչում:

**ՍԱԴ.** (Փողամանը ծոցը դնելով) Կարող եմ ասել, որ էլի լաւ պրծայ . . .

**ՍՈՒԲ.** Շնորհակալութիւն: Այժմ պատիւս փրկուած է: Անիրաւները չէին ուզում ինձ հետ ապառիկ խաղալ: Առափիդերգեհէն: (Ուզում է զնալ: )

**ՍԱԴ.** Ամօթ չըլինի հարցնելը—բաս վէքսուլը:

**ՍՈՒԲ.** Քրիր քեզ յայտնի պայմանով, կըստուրագրեմ, բայց, անս, Շէլօկի տոկոս չըբարդես վրէն: (Քայլերն ուղղում է դէպի նախասենեակ: )

ԿԱՐ. (Գլուխը շարժելով, անցնում է զրասենեակ: )

### ՏԵՍԻԼ III.

ՍՍԻՐԷՆ, երԱՆՈՒՀԻ ԵՒ ՍԱՂԱԹԵԼ,

**ԵՐԱՆ.** (Գալիս է ծախ ղրներից տնային հագուստով, առանց զլիարկի: Յուզուած է:) Կաց, մի գնար:

**ՍՈՒԲ.** (Կանգ է առնում:) Էէ, մամա, հերիք է ինչքան լաց ու կոծ բարձրացրիր, ես ներվային մարդ եմ:

**ԵՐԱՆ.** (Սաղաթէլին) Դու նբան փող տուեցի՞ր:

**ՍՈՒԲ.** Այս, մամա, եղբայրդ աւելի բարի գտնուեց քան դու և մեծ որդիդ:

**ԵՐԱՆ.** Յետ վերցրու, Սաղաթէլ, յետ վերցրու: Փողը նրան փչացրեց, փողոցները զյեց:

**ՍՈՒԲ.** Լաւ, մամա, հին երգդ երգելու տեղ չէ, գրասենեակից կըլսեն: (Քրասենեակի ղոները ծածկում է: )

**ԵՐԱՆ.** Էհ, թող լսեն: Այժմ ամենքն էլ գիտեն, որ դու որդի չես ինձ համար, այլ Աստծու պատիժ:

**ՍՈՒԲ.** Ինչու: Որովհետեւ ապրել եմ ուզում: Այնպէս, ինչպէս ապրում են իմ բոլոր ընկերները:

**ՍԱԴ.** Այսինքն, բոլոր անառակ զաւակները: (Մի կողմ) Վայ, ինչ ասացի:

**ՍՈՒՅ.** Քեռի, իմ գործերին մի խառնութեր Քոնն այն է, որ հօրս հաշիւներին վերադիր անես և սպանաղ ու դանձիլ ուտես:

**ՍԱՂ.** (Մեկոսի) Լաւ կծեց, տեղն է քեզ,  
Սաղաթէլ:

**ՍՈՒՅ.** Իսկ դու, մամա, հոգս արա մըւս  
որդուդ համար: Կարող եմ հաւատացնել, որ նա  
ինձանից աւելի վատ ճանապարհի վրայ է: Մեր  
փողը կեղտ է, նրան վչացնելը մեղք չէ: Հաս-  
կացմր, սիրելի մամա: Յըտեսութիւն, ճաշին  
ինձ ըրսպասէք: (Դնում է նախասնենակի դռնե-  
րով:)

#### ՏԵՍԻԼ IV.

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

**ԵՐԱՆ.** (Թուլացած նստում է աթոռներից  
մէկի վրայ:) Տանջեցին ինձ, բութ դանակով  
մորթեցին: Հանել է ոեվօլվերն ու զրել եղբօր  
կըծքին. «Փող տուր, թէ չէ՝ կըսպանեմ»: Ոտ-  
ներս թուլացան, աչքերս մթնեցին, ասացի՝ եր-  
կումն էլ կորան: Մի կերպ բաժանեցի: Ախ, գեռ  
աշխարհի երեսին կանաք կան, որ ինձ նախան-  
ձում են, հարուստի կնիկ եմ:

**ՍԱՂ.** Էէ, ոչինչ, եթէ մէկ որդիդ անառակ  
է, սիւսը խելօք է: Մէկի քանդածը, միւսը շի-  
նում է:

**ԵՐԱՆ.** Էն, չեմ ուզում ոչ քանդողին, ոչ

շինողին: Մէկի համար փողը գերեզման է, միւսի  
համար հայր ու հաւատամք: Երկումն էլ Աստծու  
ճանապարհից դուրս են: Մեր ժամանակում փողը  
երկնային թագաւորի պատիժն է:

**ՍԱՂ.** Օրհնուին նրա կարողի ձեռները: Փողի  
պէս էլ քաղցր բան կայ աշխարհում:

**ԵՐԱՆ.** Հեթանոսներ, Աստուած չունիք, Բե-  
հեղդեբուղին էք երկրպագութիւն տալիս:

**ՍԱՂ.** Էէ նէ, էլի կրկնեցիր մեր հօր խօս-  
քերը:

**ԵՐԱՆ.** Լոյս գայ նրա գերեզմանի վրայ: Նա  
ասում էր, փողը հնարուած է սատանայի ձեռքով,  
որ մարդկանց գեհենը տանի:

**ՍԱՂ.** Ասում էր, որովհետեւ քահանայ էր,  
իսկ մենք աշխարհականներ ենք, մեզ ինչ:

**ԵՐԱՆ.** Վախեցիր Ահեղ Դատաստանից, Սա-  
դաթէլ: Մի պաշտիր փողը կուռքի պէս:

**ՍԱՂ.** Քոյր, Աստծու պատիժն էլ, վարձքն  
էլ այս աշխարհումն է: Ահեղ Դատաստան-մա-  
տաստան շըկայ:

**ԵՐԱՆ.** (Զարհուրած) Կայ, անհաւատ, կայ:

**ՍԱՂ.** Դէ հը, կայ, թող լինի: Բայց հար-  
ցրու մեծ որդուդ, տես նա ինչ է ասում: Բա-  
նից գուրս է գալիս, որ միւս կեանք ասածդ էլ  
անբաղդ մարդիկ են հնարել իրանց այրուած սիր-  
ալ միիթարելու համար: Որդիդ է ասում, լսում  
ես, ասում է՝ գիտութեան խօսքն է:

**ԵՐԱՆ.** Ասիծուի ձեր գիտութիւնը,

**ՍԱՂ.** Քիչքանը այն ճոտած փիյի մոմի տեղ

մեզ պայծառ էլեքտրական լոյս է տուել: Ասա, ինդրեմ, երկաթուղի, շոգենաւ, տելեգրաֆ, տելեֆոն, գրամաֆօն գիտութիւնն է հնարել, թէ քո տէրտէրները:

ԵՐԱՆ. Զուր չեն ասում, թէ տէրտէրի որդին անհաւատ կը լինի:

ՍԱՂ. Ախ, Երանուհի, դու մարդուցդ յիսուն տարով յետ ես մնացել: Խելքի եկ, բայ արա աչքերդ, տես ինչպէս են ապրում միւս հարուստների կանայք: Ուտում են, խմում, քէփ անում, ամեն ամառ գնում են արտասահման, իսկ դու վագում ես... Ահեղ Դատաստան: (Փոքրիկ պատզա:.) Մի նոր բան էլ այն փոքր աղջիկդ է հնարել—Մարգարիար—ճշմարտութիւն: Երէկ սկսեց գլխիս Աւետարան կարդալ. «Քեռի, մարդիկ պարտաւոր են ճշմարտութիւնով ղեկավարուել»:

ԵՐԱՆ. Վատ բան է ասել, համ:

ՍԱՂ. Գիտես, սիրելիս, մեր հանդուցեալ հօր նման ճշմարիտ մարդ հագիւ թէ լինի այս քաղաքում: Բայց ի՞նչ թողեց մեզ համար: Վերջին կոպէկի կարօտութիւն, սով: Մեռաւ թէ չէ, սկսեցինք սրան-նրան ձեռք պարզել: Դեռ փառք Աստծու, որ դու մի քիչ գեղեցիկ էիր, բաղդը քեզ այս տունը գցեց: Ի՞նչ պիտի անէինք, եթէ ելիդրարօվը քեզ հետ չ'ամուսնանար: Հանդուցեալը մի արհեստ էլ չէր սովորեցրել ինձ: Ուզում էր, որ ել տէրտէր դառնամ, այսինքն իւր նման քաղաքի մէկը: Զէ, քոյր, ոչ քեզ եմ հաւանում, ոչ Մարգարին: Ապրել ըբդիտէք: Այ, մեծ աղ-

ջիկդ, քէփս է գալիս, աշխարհի բերանն է պատում: Տեսնում ես տուն ու տեղդ ինչպէս է կարդի գցել, ինչ շիկ է բանեցնում: Մախլաս, դու իսկի նման չես միլլիօնատէրի կնոջ: Էհ, թողնէնք, կարծեմ, Անդրէասի ձայնն է:

### ՏԵՍԻԼ V.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆԴՐԵԱՍ:

ԱՆԴՐ. (Երեւում է գրասենեակի ղոների մէջ զլիարկով ու վերարկուվք: Մի ոտը շէմքի վրայ, խօսում է դէպի գրասենեակ:.) Ասացէք այդ մարդկանց, որ ես այստեղ չեմ: Գիտեմ ինչու համար են շնորհ բերել: Ճանապարհ դրէք: Յետոյ գրասենեակը փակեցէք, գնացէք ճաշելու: Դուք հարկաւոր չէք: Իբրիկունը շուտ եկէք: (Ներօ է զալիս, ղոները ետեւից ծածկելով):

ՍԱՂ. Էլի ովքե՞ր էին:

ԱՆԴՐ. Ազգային ագուաւներ: Փահ, կարծես, բարեգործական ընկերութիւն եմ բայ արել կամ իրանցից յիմար եմ, չըգիտեմ ունի է հարկաւոր օգնել, ումը—ոչ: Հաւաքուել են մի գիւմին անզործներ ու դոնէ գուռն ընկել, թէ ինչ է «Աշխատանքի տան» համար փող ենք հաւաքում: (Սաղաթէլի օգնութեամբ հանում է վերարկուն եւ զլիարկի ու ծեռափայտի հետ տալիս է նրան: Հազած է լայն եւ երկարաւուն պիջակ, լայն վարդիկ: Ժիլետի վրայ ժամացոյցի ոսկէ շղթայ, աջ

ձեռի մատի վրայ ահազին աղամանդեսայ մատանի): Աշխատանքի տունս որն է: Աշխատող մարդն ինքը գործ էլ կունենայ, տուն էլ: Հաւաքել են ծոյլերին ու անպիտաններին, ձրի կերակրում են, թէ ազգ ենք փրկում:

**ՍՍՂ.** Իմաստունի խօսքեր են: (Վերաբերուն ու ծեռափայտը տանում է նախասենեակ և իսկոյն վերադառնում):

**ԱՆԴՐ.** (Նստում է իւր գրասեղանի քով և այդ պահին տեսնում է Երանուճուն): Աս, դու այստեղ ես: Էլի ի՞նչ ես ունքերդ կիտել: (Գըրգուսում է) Մի սկացնիր օրս, մի սկացնիր, առանցքեղ էլ սկացնողներ կան:

**ԵՐԱՆ.** Ուզողին մերժելը մեղք է:

**ԱՆԴՐ.** (Կծու հնգութեամբ): Համ, միլիօնատէրի աղջիկ, ափարիմ: Որ այդպէս է, տուր էլի քո օժիտից կամ հօրդ թողած ժառանգութիւնից, այ այն մեծ-մեծ քարվանսարաներից:

**ԵՐԱՆ.** (Վերկենալով) Դու միշտ իմ հօր աղքատութիւնն երեսովս ես տալիս:

**ԱՆԴՐ.** Ախար, ինչ անեմ, նա էլ միշտ քարոզում էր. «բարութիւն արէք»: Ինքը չունէր, ուրիշներից էր պահանջում: Բարութիւն: Բարութիւնս որն է: Մարդս անասուն է, ցեխի մէջ որ տեսնես, պէտք է ոտով խփես, խորը գցես, ոչ թէ ձեռից բռնես, բարձրացնես: (Սակաւ լըռութիւն: Տնը փոխելով, Սաղաթէլին): Զի եկել այն տղան:

**ՍՍՂ.** Դեռ ոչ:

**ԱՆԴՐ.** Ի՞նչ ես ցցուել աչքիս առաջ: Ի՞նչ ես ուզում ինձանից:

**ԵՐԱՆ.** (Հառաշելով) Ոչինչ:

**ԱՆԴՐ.** Փառք Աստծու, կարծեցի էլի պիտի սկսես նախատել ինձ:

**ԵՐԱՆ.** Ես քեզ Երբ եմ նախատել:

**ԱՆԴՐ.** Դժււ: Դու երեսուն տարի է շարունակ նախատում ես ինձ: Ես քեզ լաւ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես: (Վեր է կենում եւ սկսում է անցուղարձ անել):

**ԵՐԱՆ.** Չեմ իմանում, ինչով եմ քո թշնամին:

**ԱՆԴՐ.** Ինչով: Քո մաքերով: Դու երբէք իմ մասին լաւ բան չես մտածել: (Լոռութիւն): Ի՞նչ է խօսել քեզ հետ Օթարեանը:

**ԵՐԱՆ.** Արտաշէսը: Ոչինչ: Ինչոր քեզ հետ է խօսում, նոյնն էլ ինձ հետ:

**ԱՆԴՐ.** Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի տղայ է:

**ԵՐԱՆ.** Նա օրինաւոր տղայ է, շատ օրինաւոր, համեստ, խելօք...

**ԱՆԴՐ.** Լաւ լաւ, մի երկարացնիր, գովելու աւելորդ է...

**ԵՐԱՆ.** (Հառաշում է):

**ԱՆԴՐ.** (Գրգոռելով) Լսիր, հազար անգամ ասել եմ, էլի եմ կրկնում, թնդ այդ հառաչանքներդ, ախ ու վախդ: Քո դէմքի վրայ, աչքերիդ մէջ, ամեն մի խօսքիդ տակ ես զգում եմ նախատինք: Քո տիսրութիւնն ինձ կատաղեցնում է:

Ես շատ լաւ գիտեմ, որ դու ստուերի պէս հետեւում ես ինձ, ծուռ եմ զնում ոտս թէ ուղիղ, ումբն զրկեցի, ումբն աւելորդ վերցրի, ումբն պակաս տուեցի: Թողի ինձ հանգիստ, դու իմ խիզն ես ինչ է: Զի հարկաւոր, կարօտութիւն չունիմ: Իմ մէջ խիզն էլ կայ, հոգի էլ, Աստուած էլ...

**ԵՐԱՆ.** (Ճարակուսանքով) Ոչինչ չեմ հասկանում ասածներիցգդ...

**ԱՆԴԻՐ.** Աա, շատ լաւ ես հասկանում: (Անհանգիստ նայելով ժամացոյցին): Արդէն երկու ժամն է: Զեկաւ այդ տղան:

**ԵՐԱՆ.** (Զսպելով իրան) Տանն ես ճաշելու: Անդիր. Ի հարկէ, այդ ինչ հարց է:

**ԵՐԱՆ.** (Խորհրդաւոր) Ո՞վ գիտէ քո բանը:

**ԱՆԴԻՐ.** Այ, տեսնում ես, հէնց այդ «ով գիտէ»-ի տակ սատանայ է նստած: Նախատինք, միշտ նախատինք: Օձի նման է կծում: Հեռացիր: Առաւօտից դէս շան պէս անօթի եմ: Գնա, ճաշ պատրաստիր: Մի աման էլ Արտաշէսի համար դիր: Ես նրան ճաշի եմ պահելու: Լաւ վարուիր նրա հետ, այդ ինձ հարկաւոր է: Եթէ Բագրատը տանն է, ուղարկիր այստեղ: (Երանուին գնում է ձախ ղոներով):

**ՏԵՍԻԼ.** VI.

ԱՆԴԻՐԵՍՍ եի ՍԱՂԱԹԷԼ:

**ԱՆԴԻՐ.** (Հռութիւն): Քոյրդ ամեն բան գիտէ: Պէտք է աշխատել, որ նա զործը չըփչացնի: ՍԱՂ. Իսկ դու նբա հետ այնպէս ես վարւում, որ ինքդ կարող ես փչացնել:

**ԱՆԴԻՐ.** Այդ ճշմարիտ է: Ես երբեմն չըգիտեմ ինձ զսպել: Բայց ինչ անեմ, այսօր առաւօտից դէս զրգուուած եմ: Մարդիկ սկսել են խօսել իմ մասին: Աա, ես գիտեմ, որ սև նախանձը նրանց հանգստութիւն չի տալիս: Անդրէյ Պետրովիչ էլիզբերօվի աստղը շատերի աշխն է ծակում: Տներս ու քարվանսարաներս տանջում են մարդկանց: (Հռութիւն) Ծառայողները գնացին:

**ՍԱՂ.** (Գրասենեակի ղոներից ներս նայելով) Գնացել են:

**ԱՆԴԻՐ.** (Խօսում է, կարծես, ինքն իւր հետ: անցուղարձ անելով): Փահ, էլլիզբերօվի աների ու տափերի կէսն իմն է, ասում է, ոչ աւելի, ոչ պակաս: (Հռութիւն): Փամանակ-ժամանակ ինքս էլ մտածում եմ, կարելի է ուղարական եմ: Բայց ինչպէս աշքերս բաց վերցնեմ և ունեցածիս կէսը տամն նրան: Ի՞նչ կասեն մարդիկ: «Հօրս հետ միասին ևս առել տափերը»: Այս, ճշմարիտ է, բայց երբ:

ՍԱՂ. Նոյ նահապետի ժամանակներում:

**ԱՆԴԻՐ.** ճշմարիտ է, ընկերներ ենք եղել,

բայց չէ որ փողն ես եմ աշխատել, ես, Անդրէաս  
էլիզբերօփս։ Դալլաք էլիզբերի թոռնը իւր բոլոր  
կարողութիւնը, դիլքը, անունը, պատիւը ձեռք  
է բերել իւր խելքով ու աշխատանքով։ Տանու-  
հինգ տարի ծառայել եմ Մուսայէլ աղայի մօտ,  
տարել եմ նախատինք, թուք ու մուր։ Շան կեանք  
եմ քաշել, վերջը սուտ-դորթով մի քիչ փող եմ ձեռք  
բերել, դուրս եկել և այն ժամանակ ընկերացել  
Առաքէլ Օթարեանի հետ։

**ՍԱՂ.** Հէէ, երազի պէս միտս է. հին բազա-  
րում բախկալի դուքան ունէիք։ Կանաչեղէն ու  
թթուեղէն էիք ծախում։ Զատիկ-Ջրօրհնէքին էլ  
գնում էիք Սալիան, ձկնեղէն բերում ու ծախում։

**ԱՆԴՐ.** Խօսք չունիմ, Առաքէլն էլ աչքարաց  
էր։ Բայց եթէ նրա խելքով վարուէի, այսօր էլ  
դուքանչու մէկը կըլինէի։ Նա հոտառութիւն չու-  
նէր։ Ես էի, որ անդադար ասում էի. «Առաքէլ,  
առնենք այդ էժան տափերից, յետոյ ոսկի են  
դառնալու»։ Սկսեցինք առնել ծովի ափում հո-  
տած ճահիճներ, աղբանոցներ, սաժէնը յիսուն  
կոտէկից սկսած։ Առաքէլը չէր ուզում, առնողն  
ես էի, ուրեմն ես եմ աշխատել իմ հարստու-  
թիւնը, իմս է այն, միմիայն իմս։ Իսկ այդ լա-  
կոտն եկել է ու ասում է. «Տուր ինձ կէսը»։ Փահ,  
գժնւել եմ, որ տամ։ Եթէ գժուել եմ, ինչնւ չեն  
ինձ գժատուն տանում։ (Դրզուում է)։ Համեցէք,  
այս էլ ձեզ բարեգործութիւն։ Որդեգիր եմ վերց-  
րել հօր յիշատակի համար, ուսում տուել, մարդ  
շինել, տարիներով պահել եմ մօրն ու քոյրերին,

ինչ է այսօր վարձաւ։—Քոո ապերախտութիւն։  
**ՍԱՂ.** Լաւ, քիչ խառնիր արիւնդ։ Մի կերպ  
ոեխը կըկապենք, կըդնայ։

**ԱՆԴՐ.** Ի հարկէ, պէտք է ոեխը կապել։ Ես  
խօմ չեմ կարող նրա հետ դատարան գնալ կըզցի  
ինձ մի թոկից փախած աղվակատի ձեռք, արի  
ու ազատուիր . . .

**ՎԱՐԴ.** (Ներս է մտնում նախասենեակից։  
Հազած է սեւ արխալուդ, դեղնագոյն պիջակ ար-  
խալուդից կարծ, մէջքին արծաթեայ զօտի։ Խօ-  
սում է շատ անփոյթ, Շամախու բարբառով)։ Ան  
Արտաշէսը եկալ ա, ուզում ա քեզ տեսնի։

**ԱՆԴՐ.** Խնդրիք։ (Վարդանը յետ է զնում)։  
Սաղաթէլ, դու անցկաց գրասենեակ, յետոց կը-  
գաս։

**ՍԱՂ.** (Գնում է գրասենեակ, դոնելը ծած-  
կելով)։

**ԱՆԴՐ.** (Նստում է իւր բազկաթոռի վրայ,  
ուշքը ժողովնելով եւ դէմքին սիրալիր արտայա-  
տութիւն տալով)։

## ՏԵՍԻԼ VII.

**ԱՆԴՐԷԱՍ, ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՑՈՅ ԲԱԴՐԱՏ, ԱԻԵԼԻ ՈՒՃ  
ՍԱՂԱԹԷԼ։**

**ՕԹԱՐ.** (Ներս է մտնում նախասենեակից,  
հանդարտ եւ բալաքալարի գլուխ է տալիս)։

**ԱՆԴՐ.** (Սիրալիր) Բարով, որդի։ Այդ ինչ  
է, դու մեզ մոռացել ես։

ՕԹԱՐ. (Սեղմելով Անդրէասի ձեռը): Երէկ ձեր տանն էի:

ԱՆԴԻ. Համ, բաս ինձ չեն ասել: Նստիր, այսօր մեզ մօտ ես ճաշում: Մի քիչ խօսենք, յետոյ կանցնենք այն կողմ: Գործ ճարեցի՞ր:

ՕԹԱՐ. (Նստում է Անդրէասի գրասեղանի քով, երեսը դէպի հասարակութիւն): Այո, մի քանի մասնաւոր դասեր:

ԲԱԳԻ. (Գալիս է ձախ դռներից երկայն կօշիկներով և նստի քծերով ծածկուած պիջակով: Նկատնով Օթարեանին, թենիւ ցնցում է, սառը գլուխ է տալիս, նստում է ձախ գրասեղանի քով և անմիջապէս սկսում է գործով զբաղուել — շափում է կարկիրով, զժագրում, միեւնոյն ժամանակ, ուշադիր է դէպի խօսակցութիւնը):

ԱՆԴԻ. Դասեր: Այնքան ուսում ստանալուց յետոյ վարժապետութիւնն ես անում:

ՕԹԱՐ. Ի՞նչ արած, պարոն Անդրէաս, առ այժմ ստիպուած եմ:

ԱՆԴԻ. Բայց դրանով փոր չի կշամալ, որդի, արի քեզ համար մի տեղ սարքենք մեր գործերում: Հըմ, ինչ կասես, Բագրատ, երկի, քո գործարանում մի պաշտօն կըլինի: Ի հարկէ, յարմար պաշտօն...

ԲԱԳԻ. (Կտրուկ): Իմ գործարանը դեռ շուտ պատրաստ չի լինիլ:

ՕԹԱՐ. Շնորհակալ եմ, պարոն Անդրէաս, ես ծառայելու միաք չունիմ:

ԱՆԴԻ. Ամօթ ես համարում:

ՕԹԱՐ. Ոչ, կարծում եմ, որ կարիք չեմ ունենալ ծառայելու: Իսկ եթէ ունենամ էլ, յամենայն դէպս, ձեր որդուն չեմ ծառայիլ:

ԱՆԴԻ. Ինչու:

ԲԱԳԻ. (Կծու եղանակով, գործը չընդհատելով): Իդէալիստի ճերմակ փետուբները կարող են սեանալ բուրժուայի գործերում:

ՕԹԱՐ. (Զապրաւած) Միայն այն դէպքում, երբ այդ գործերը մուբոտ են:

ԱՆԴԻ. Չեմ հասկանում, ինչու էք այդպէս գրգռուած խօսում երկու ընկեր:

ԲԱԳԻ. (Հեզնօրէն) Ընկեր, հը, ընկեր: Ոչ, հայրիկ, մեր մէջ ընկերական ոչինչ չըկայ:

ԱՆԴԻ. (Յանդիմանութեամբ) Բագրատ:

ԲԱԳԻ. (Մատիտն ու կարկինը ձգելով սեղանի վրայ): Հայրիկ, ես կարծում եմ, որ ժամանակ է մեր հաշիներն այդ պարոնի հետ պարզելու: Նա ինչոր պահանջներ ունի քեզանից:

ԱՆԴԻ. (Խիստ): Այդ քո գործը չէ: Դու քո բանին կաց:

ԲԱԳԻ. (Վերկենայով) Ներիր, հայրիկ, ես չեմ կարող սառը վերաբերուել դէպի մի մարդ, որ ուզում է մեր անունը խայտառակել: Այն էլ մի այնպիսի մարդ, որ դեռ չի դուրս եկել մեր փողերով գնուած հագուսից:

ՕԹԱՐ. (Ցուզուելով վեր է կենում, բայց իսկոյն եւ նթ զսպում է իրան): Պարոն Անդրէաս, զսպեցէք ձեր որդուն: Ես չեմ կամենում դրա հետ վէճի բռնուել այստեղ:

ԲԱԳԻՐ. Եսկ ես թոյլ եմ տալիս ինձ պահանջել ձեզանից բացատրութիւն։ Հայրիկը կարող է ձեղ հետ վարուել ինչպէս կամենում է, իսկ մեր մէջ պէտք է ամեն բան պարզուի հէնց այժմ։

ԱՆԴԻ. (Դրգուած) Ասացի, որ այդ քո գործը չէ, մի խառնուիր։

ԲԱԳԻՐ. Բայց, հայրիկ, իմ ինքնասիրութիւնը վիրաւորուած է։ Ուստի թոյլ տուր նրան մի քանի հարցեր առաջարկել։ (Դառնում է Օթարեանին։) Ես կըկամենայի իմանալ, դուք բարերարուած էք մեզանից, թէ՞ ոչ։

ՕԹԱՐ. (Զսպուած) Այս։

ԲԱԳԻՐ. Ո՞վ է ձեղ ինսամել և բարձր ուսում տուել։

ՕԹԱՐ. (Զսպուած) Զեր հայրը։

ԲԱԳԻՐ. Եւ այդ բոլորը խոստովանելուց յետոյ յանդգնում էք լինել երախտամնու։ Եւ այդ բոլորից յետոյ, դու, հայրիկ, պահանջում ես, որ ես սանոր վերաբերուեմ այդ մարդուն։

ԱՆԴԻ. Ես ասում եմ, որ այդ քո գործը չէ։ Դու ոչինչ չես հասկանում։

ՕԹԱՐ. (Բազրատին) Լսեցէք, պարոն, ձեղ հետ ես այսօր մտադիր չէի հաշուի նստելու, բայց որովհետեւ ստիպում էք, կըխօսեմ։ Այս, ես էլիզբեանների ինամքով մեծացած մարդ եմ։ Դուք ինը տարի պահել ու պահպանել էք ինձ, մօրս ու քոյրերիս։ Բայց ինչպէս—այս միայն ինձ է յայտնի։ Այն, ինչոր ես եմ զգացել տարինե-

ըի ընթացքում, չէի ցանկանալ զգալ ոչ մի ինքնասէր մարդու։ Դուք ձեր ամեն մի կոպէկի մէջ թոյն էք սրակել և այնպէս տուել ինձ…

ԱՆԴԻ. Պարտական մնամ, եթէ արած լաւութիւններս գոնէ մի անգամ էլ երեսովդ տուած լինիմ։

ՕԹԱՐ. Բայց միթէ պիտի խօսէիք, որ ես զգայի իմ ողորմելի դրութիւնը։ Այս, իմ վերաբերմամբ դուք արտաքուստ քաղաքավարի էք եղել։ Բայց այն, ինչոր խօսքերով չէր արտայացտել, արտայայտել էք ձերով, աչքունքով, շարժումներով։ Դուք ինձ ստորացըել էք իմ աչքում ամեն անգամ, երբ ես գժբաղգութիւն եմ ունեցել ձեռք մեկնելու։ Դուք խայթել էք իմ ինքնասիրութիւնը լուռ, ինչպէս, ներեցէք ասել, մի կարիճ…

ԲԱԳԻՐ. (Հեղնօրէն) Զարմանալի է, որ տարիներ շարունակ լոել էք և նոր էք միայն ձայն բարձրացնում։

ՕԹԱՐ. Այս, լոել եմ, որովհետեւ խնայում էի մօրս ու քոյրերիս։ Դիտէի որ եթէ ձայն բարձրացնեմ, պիտի զրկէիք նրանց մի կտոր հացից։ Ես մտածում էի այսպէս։ «Կըթաշեմ մի կերպ այս վիրաւորանքները և մի օր, բոլոր պարաբերս վճարելով էլիզբեաններին, կըթեթեանամ հոգով»։ Մայրս էլ է լոել։ Բայց հարցըէք, ինչ լուռթիւն է եղել այդ։ (Անդրէսսի կողմ)։ Ամսական քսանուհինդ ոուբլի տալով, քսան ու հինգ անգամ նախատել էք նրան։ «Շատ

ես ծախսում, ապրիլ ներքնայարկերում, կար առա ուրիշների համար, լուացք արա, թող աղջկերքդ աղախին մտնեն...»

ԱՆԴԻ. (Անհամըեր) Տէր, մեղայ Քեզ, Աստուած:

ՕԹԱՐ. Իսկ մի օր այնքան անգութ էք եղել, որ առաջարկել էք նրան աղքատանոց մըտնել: Զեր խօսքերն ասեղների պէս խօթուել են խեղճ կնոջ սիրտը: Քոյրերս այսօր էլ առանց արտասուրքի չեն կարողանում յիշել այդ օրը: Եւ ինչո՞ւ, ով է եղել իմ մայրը: Զէ որ ձեր հաւասար ընկերոջ այրին: Մի կին, որ նոյնչափ հարուստ է, որչափ դուք: Երբ նա արտասուրքը աշքերին պատմում էր իւր կրած վշտերը, արիւնս պաղեց երակներիս մէջ: Ես անզօրութիւնից սկսեցի մազերս փետտել, մատներս կրծոտել: Ես վրիժառութեան միջոցներ էի փնտրում, չէի դանում: Եւ ահա այդ ժամանակ հէնց մայրս ինչը հասաւ ինձ օգնութեան...

ԱՆԴԻ. Եւ ասաց, որ ես կողոպտել եմ քո հօրը, հա հա հա:

ԲԱԳԻ. Եւ զրպարտեց իւր բարերարին սև ապերախտութեամբ:

ՕԹԱՐ. (Ուշք չըդարձնելով թագրատի կողմ) Այս, պարոն: Նա հաղորդեց ինձ իմ հօր վերջին խօսքերը. «Ես մեռնում եմ աղքատութեան մէջ, ինձ կողոպտեց ընկերս: Ահա քեզ այս թղթերը, կըյանձնես սրդուս, երբ ուսումը կաւարտի»:

ԱՆԴԻ. (Ցնցուելով) Թղթեր, ի՞նչ թղթեր:

ՕԹԱՐ. Մի քանի ընկերական պայմանագրեր, որոնք պիտի ապացուցանեն, թէ ձեր հարստութեան կէսն ինձ է պատկանում: Դուք, օգտուելով իմ հօր ծանր և երկարատե հիւանդութիւնից, խաբել էք նրան օր օրի վրայ և ձեր անունով վերածել բոլորը, ինչոր եղել է ընկերական:

ԱՆԴԻ. (Վրդովուելով) Այդ սուտ է: Ես ինչ որ ունիմ, օքէնքով և նօտարական դօկումենտներով է հաստատուած ինձ վրայ:

ՕԹԱՐ. Այս, բայց առանց մի կոպէկ վճարելու: Դուք կարողացել էք խաբել նոյն իսկ օքէնքները: Ահա հէնց այս քանը պիտի ապացուցանեն իմ հօր թղթերը:

ԲԱԳԻ. (Կատաղի): Դուրս այստեղից, ստախօս:

ՕԹԱՐ. (Հպարտ եւ կատաղի): Պարմն, խընայեցէք ձեր հօր...

ԱՆԴԻ. (Չեռն ուժգին զարկելով սեղանին, ոտքի է կանգնում): Լոյն, ասում եմ, դու ինձ կատաղեցնում ես:

ՍՍՂ. (Ներս է մոնում:)

ԲԱԳԻ. Բայց նա քեզ անպատուեց: Նա քեզ կողոպտիչ անուանեց:

ԱՆԴԻ. (Զավում է իրան): Թող անուանի, ով է հաւատացողը: Երեխայ է, ոչինչ չի հաւականում, տաքանում է: (Դառնում է Օթարեանին): Որդի, այդ բոլորը, ինչոր ասացիր, դատարկ բաներ են: Ես քեզ ներում եմ հօր պէս: Խօսենք չափահասների նման: Գիտեմ, արիւնդ եռ է գա-

լիս, ապրել ես ուզում, բայց չունիս: Է՞ն, մտածել ես մտածել ու այդ բանը հնարել...

**ՕԹԱՐ.** (Վըղովման նշան է անում):

**ԱՆԴԻՐ.** Մի տաքանար, որդի, խօսենք հանդարտ: Է՞ն, ինչ արած, շատ եմ օգնել հօրդ յիշատակի համար, էլի կօգնեմ: Արի ստացիր ինձանից մի քանի հազար ոռութիւ, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ու քեզ էլ աղասիր գլխացաւից:

**ԲԱԳԻՐ.** (Դրականապէս): Երբէք: Ես թոյլ չեմ տալ մի կոպէկ անդամ տալ նրան:

**ԱՆԴԻՐ.** Մեղայ քեզ, Տէր Աստուած, վերջապէս, ձայնդ կտրելու ես, թէ չէ:

**ՍԱՂ.** (Մի կողմից կամցուկ Բազրատին) Թող տայ, գու չես հասկանում:

**ԲԱԳԻՐ.** (Զըլսելով Սաղաթէլին) Այդ անկարելի է: Փող առաջարկել այդ մարդուն, կընշանակէ վախենալ նրանից: Թող դիմի դատարան, ես ինքս քեզ կըսպաշտանեմ նրա զրպարտութեան դէմ, որովհետեւ համոզուած եմ, որ նա քեզ զրպարտում է:

**ՕԹԱՐ.** Զգուշացէք, պարոն, այդ խօսքերը կարող են թանգ նստել ձեզ:

**ԲԱԳԻՐ.** Աս, թողէք այդ փռազները: Ես ձեր բարոյական ոյժը լաւ եմ ճանաչում և զուր չեմ միշտ ձեզ արհամարհել: Սակայն ինչու աւելորդ խօսքեր շռայլել, ահա կարճ-կտրական իմ խօսքը. արէք, ինչոր կարող էք, ես ձեր հակառակորդն եմ: (Ծտասլով իւր զրասեղանից վերցնում է մի

քանի թղթեր): Քեռի, ես գնում եմ գործարան: Պատուիրիր Զէյլմանին, որ խողովակները շուտով ուղարկի: Հայրիկ, ինձ ճաշի չըսպասէք: (Արագութեամբ հեռանում է նախասենեակի ղոներով, ծգելով Օթարեանի վրայ մի արհամարհական հայեացը):

**ՍԱՂ.** (Մեկուսի): Աֆարիմ տղայ, կրակի կտոր է:

### ՏԵՍԻԼ VIII.

**ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ԲԱԳԻՐԱՏԻ, ՅԵՑՈՅ ՄԱՐԳԱՐԻՏ:**

**ԱՆԴԻՐ.** Տեսնում ես, որդի, էլի մենք, հին մարդիկս, աւելի բարի ենք, քան դուք, նորերդ: Արի, քարը վէշիցդ թափիր, ստացիր երեք հազար ոռութիւ, հաշտուենք:

**ՕԹԱՐ.** Էլ ուրիշ ասելիք չունիք:

**ԱՆԴԻՐ.** Ուրեմն, համաձայն ես (Ճալով Սաղաթէլին սնդուկի բանալին): Սաղաթէլ, տուր ինձ չէքի տեսրակը: Իսկ դու նստիր և մի թուղթ գրիր, որ ոչինչ պահանջ չունիս:

**ՍԱՂ.** (Բանալին առնելով, մօտենում է սընդուկին):

**ՕԹԱՐ.** Մնաք բարով:

**ՍԱՂ.** (Կանգ է առնում):

**ԱՆԴԻՐ.** Ո՞ւր: Սպասիր: Հաշիւր—հաշիւ, բարեկամութիւնը—բարեկամութիւն: Դու մեզ մօտ պիտի ճաշես:

ՕԹԱՐ. ՄՆԱՋԷՔ Բարով:

ՄԱՐԳԻ. (Դուրս է զալիս ճախ կողմի դռներից տնային համեստ հագստով: Օթարեանին):  
ՄԱՅՐԻԿԸ ՃԵԿ հրաւիրում է ճաշի:

ՕԹԱՐ. (Քայլերն ուղղել էր դէպի նախասենեակ, կանգ է առնում):

ԱՆԴՐ. Տեսնում ես, քեզ ինչպէս են սիրում այս տանը: Իսկ դու ուզում ես երես դարձնել մեզանից:

ՄԱՐԳԻ. (Զարմացած նայում է Օթարեանին) Երես դարձնել մեզանից: Ինչո՞ւ:

ԱՆԴՐ. Ով գիտէ, ինչոր հակառակ քամի է փչել: Բայց դու նրան խելքի կրբերես: Սաղաթէլ, մենք գնանք, Մարգարիտը, երևի, նրան կամաչեցնի: (Օթարեանին): Դէ, որդի, շատ սպասեցնել չըտաս մեզ: (Գնում է Սաղաթէլի հետ ճախ դռներով):

## ՏԵՍԻԼ IX.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ:

ՄԱՐԳԻ. Այդ ինչ է նշանակում: (Բոնում է նըռա ծեռը ջերմագին): Ինչո՞ւ այդպէս այլայլուած ես:

ՕԹԱՐ. Ոչինչ, դատարկ բան է:

ՄԱՐԳԻ. Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ճաշի չես մնում: Ի՞նչ են նշանակում հայրիկի խօսքերը. «դու ուզում ես մեզանից երես դարձնել»: Ասա, ես համբերութիւն չունիմ:

ՕԹԱՐ. Եթէ կարելի է, Մարգարիտ, այսօր ինձանից ոչինչ մի հարցնիր:

ՄԱՐԳԻ. (Վշտացած, բաց է թողնում նրա ծեռը): Շատ գեղեցիկ, չեմ հարցնիլ: Եթէ կամենաս, ես քեզ չեմ էլ պահիլ, քանի որ քեզ համար ձանձրալի է մնալ:

ՕԹԱՐ. Ախ, Մարգարիտ, թող այդ երեխայական ձևերը, դու նման չես ուրիշ կանանց:

ՄԱՐԳԻ. Բայց դու ինձ հետ վարւում ես ինչպէս մի երեխայի հետ. ուր են քո խօսքերը, թէ միմեանց սիրող անձանց մէջ չըպիտի լինի ոչ մի գաղանիք: Այդպէս ես կատարում երգումդ:

ՕԹԱՐ. (Շփոթուած) Բայց կան գործեր, որնց հետ դու չըպիտի ծանօթանաս: Քո սիրող գեռ շատ մանուկ է: (Նորից բռնում է նրա ծեռը եւ ջերմ սեղմում):

ՄԱՐԳԻ. Իսկ ես կարծում էի, թէ չըկայ գործ, որ քեզ վերաբերուի և ինձ ոչ: (Զեռը լուսով) Թող ինձ, դու ինձ վիրաւորում ես: (Երեսը դարձնում է): Դա անզթութիւն է սիրող կնոջ վերաբերմամբ:

ՕԹԱՐ. Ի՞նչ արած, վիրաւորուած ինքնասիթութիւնն երբեմն անգութ է լինում:

ՄԱՐԳԻ. Վիրաւորուած ինքնասիթութիւնը: Ում ինքնասիթութիւնն է վիրաւորուել: Քոնը: Ովէ վիրաւորել: Հայրս, թէ եղբայրս: (Դադար): Բայց դու լողեմ ես: Դու ինձանից դարձնում ես երեսդ: Բաւական է, մի փորձիր համբերութիւնս: Ես ատում եմ կեղծիքը, հասկանում ես: Ասա

պարզ և աներկիւղ, ի՞նչ է պատահել: Աս, հասկանում եմ: Դու խօսել ես հօրս հետի իմ մասին, ինդըել ես նրա համաձայնութիւնը: Մերժել է... Բայց ոչ, ի՞նչ եմ ասում: Հայրիկը սիրավիր էր դէպի քեզ: Վերջապէս, նրա մերժումը չի կարող քեզ վիրաւորել, քանի որ ես սիրում եմ քեզ և իմ գլխի տէրը միմիայն ես եմ: (Դաղար): Սպասիր, իմ մէջ ծագեց ուրիշ կասկած: Դու նրա հետ խօսել ես իմ... Բայց ոչ, դու ընդունակ չես այդ տեսակ անվայել սակարկութեան: Վերջապէս, ասելու ես, թէ ոչ:

ՕթԱՐ. Դու բռնութիւն ես գործ դնում իմ կամքի վրայ, Մարգարիտ: Կրկնում եմ, կան բաներ, որոնց հետ դու չըպիտի ծանօթանաս:

ՄԱՐԳ. (Եռանդով): Ոչ, ասում եմ: Մազի չափ գաղտնիք չըպիտի ունենաս ինձանից: Կամենում ես, այս պայմանով սիրիր ինձ, ոչ—կարող ես հեռանալ: Ուրիշ տեսակի փոխադարձ սէլ ես չեմ ընդունում:

ՕԹԱՐ. (Դրի վճռական շարժումն անելով): Ահ, թող լինի, ինչոք լինելու է: Միևնուն է, անհնարին է քեզանից թագցնել:

ՄԱՐԳ. (Գրեթէ շնչառապառ) Հապա, հապա:

ՕԹԱՐ. Ասա ինձ, Մարգարիտ, սիրում ես հօրդ:

ՄԱՐԳ. Ե՞ս, իմ հօրը: (Դրական եւ ջերմագին) Այս:

ՕԹԱՐ. Ոչ միայն իբրև զաւակ, ոչ միայն արիւնակցի սիրով, այլ և գիտակցօրէն:

ՄԱՐԳ. Զեմ հասկանում միտքդ: ՕթԱՐ. Ուզում եմ ասել, յարգնում ես նրան ինչպէս մարդու:

ՄԱՐԳ. Անտարակոյս: Զէ որ իմ հայրն էլ մի մարդ է:

ՕԹԱՐ. Եւ ազնիւ մարդ, այնպէս չէ:

ՄԱՐԳ. Անկասկած: Իմ հայրն անազնիւ չէ:

ՕԹԱՐ. Համոզմունքով ես ասում այդ:

ՄԱՐԳ. Խորին համոզմունքով: Գոնէ ինձ մինչև օրս յայտնի չէ նրա որևէ է անազնիւ արարքը: Յարգում եմ ինչպէս մի աշխատասէլ և խելօք մարդու, որ երկար տարիների տառապանքով ապահովել է իւր զաւակների դրութիւնը: Նա ինքը տգէտ լինելով, իւր զաւակների կրթութեան համար ոչինչ չի խնայել: (Դաղար): Բայց ինչու ես կասկածանքով նայում ինձ, սիթէ չես հաւատում իմ անկեղծութեանը:

ՕԹԱՐ. Եւ ոչ մի թերութիւն չես գտնում հօրդ մէջ:

ՄԱՐԳ. Ինչու չէ: Նա փողասէլ է, իւր հաշիւների մէջ խիստ է, մտածում է միմիայն իւր գործերի մասին: Բայց չէ որ նրա շրջանի մարդիկ բոլորն էլ այդպէս են: Համարել նրան անազնիւ, ոչ, անկարելի է:

ՕԹԱՐ. (Դաղար): Ի՞նչ կանէիր, Մարգարիտ, եթէ մի օր համոզուէիր, որ նա անազնիւ է:

ՄԱՐԳ. (Դահնազին եւ զայրացած) Արտաշէս...

**ՕԹԱՐ.** (Տարանալով): Այո, այո, անազնիւ  
է գոնէ իւր անցեալում:

**ՄԱՐԳ.** (Նոյն եղանակով): Առտաշէս, մտա-  
ծիւր, ինչ ես ասում:

**ՕԹԱՐ.** Ասում եմ այն, ինչոր գիտեմ: Քո  
հօր անցեալում կայ մի սոսկալի յանցանք:

**ՄԱՐԳ.** Եւ ինչ է այդ յանցանքը:

**ՕԹԱՐ.** (Ձերմ շեշտով): Մի անողորմ զբկո-  
ղութիւն:

**ՄԱՐԳ.** (Ցնցուելով) Ում է զբկել նա:

**ՕԹԱՐ.** Մի անտէր և անօգնական մնացած  
ընտանիք: Իւր հաւատարիմ ընկերոջ որբ զաւակ-  
ներին:

**ՄԱՐԳ.** Քեզ:

**ՕԹԱՐ.** Ինձ, մօրս և քոյլերիս...

**ՄԱՐԳ.** Ահ... (Թուլացած ընկնում է աթո-  
ռի վրայ, ծեռներով երեսը ծածկելով):

Երկարատեւ լրութիւն:

**ՕԹԱՐ.** Դու ինքդ կամեցար իմանալ ճշմար-  
տութիւնը:

**ՄԱՐԳ.** (Ուշը ժողովելով, ոտքի է կանգ-  
նում): Ապացուցիր ասածդ: Լսում ես, ապա թէ  
ոչ, կատեմ քեզ ինչպէս մի զրպարտողի: Բայց ոչ  
ոչ, դու չես կարող զրպարտել քո բարերարին:  
Դու նրան սիրում եիր և յարգում: Անշուշտ այս-  
տեղ մի թիւրիմացութիւն կայ: Դու պէտք է բա-  
ցատրես բոլորը: Միևնուն է, թող նա լինի իմ  
պաշտելի ծնողը, իսկ դու իմ երջանկութիւնը—

Երկուսիցդ աւելի ինձ համար թանգ է ճշմար-  
տութիւնը:

**ԶԱՐ.** (Երեսում է ծախ դռների մէջ): Զեղ  
ճաշի են սպասում:

**ՄԱՐԳ.** Իսկոյն:

**ԶԱՐ.** (Կնում է յետ:)

**ՕԹԱՐ.** Համաձայնութիւր, որ այլ ևս իրաւունք  
չունիմ այս տունն այցելելու:

**ՄԱՐԳ.** Ոչ: Ընդհակառակը, պէտք է այցե-  
լես: Դու իմ սէրը թունառեցիր, դու էլ պար-  
տաւոր ես բժշկել այն: Այժմ կարող ես հեռա-  
նալ, բայց վազը դու կըտաս ինձ բացատրութիւն:

**ՕԹԱՐ.** (Գլուխ է տալիս եւ արագ քայլե-  
րով գնում է նախասենեակ):

**ՄԱՐԳ.** (Թոյլ քայլերով գնում է դէպի ծախ  
եւ, կանգ առնելով, յենում է դռներին:)

Վարագոյըն իջնում է հանդարտ

Երեսում է Զարուհին, որ սփոռց է գցում ճաշի սեղանի վրայ և պատ սկսում է նախաճաշ պատրաստել:

Վարագոյրը բարձրանալուց մի քանի վայրկեան անցած՝ սեղանատնից լսում է պատի ժամացոյցի տասներկու զարկը: Նախասենեակի դռներից մտնում է Վարդանը կարմիր չերքէզիով, գլխին մեծ սպիտակ մորթէ գղակ: Նա բեռնաւորւած է զանազան թղթէ կապոցներով և ձեռքին զգուշութեամբ բռնած է մի թղթարկը, մէջը կանացի գլխարկ:

### ՏԵՍԻԼ 1.

ՎԱՐԴԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ:

ՎԱՐԴԻ. Ուժ, Աստուած վկայ, հոգիս բողազս եկաւ: Իլիպս կոտրուեց: (Սկսում է մէկ մէկ կապոցները ծգել յատակի վրայ: Թղթարկը ծեռքից բաց չի թողնում: Երեսի քրտինքը սըլլում է չերքէզիու փէշով եւ այդ միջոցին գղակը զցում է յատակի վրայ):

ԶԱՐ. (Ներս է մտնում սեղանատանից, սուրծի գաւաթն անծեռոցիկով սրբելով): Հըմ, եկամբ: Բա բա բա, այդ ինչ շատ բաներ ես բերել:

ՎԱՐ. Ա՛շի, աս անտէր չեարքեազին ուսերիս ա քաշիլ տուալ, աս լեազգիի փափաղն ալ գլխիս տիրալ, նստացուրալ ա կօզի վերայ դաղախի պէս, քշի հա քշի: Ա՛լ մաղազին չը մնաց—չըմտնանք, ալ պեան չըմնաց—չառնի: Իստեղ միտիկ արա ա, կասես քի եարմուկա եանք սարքիլու:

ԶԱՐ. (Հետաքրքրուած գաւաթն ու անծեռո-

## ԱՐԱՐՈՒՅԹ ԵՐԿՐՈՐԴ

Ելիզբեանների մեծ հիւրասենեակը, կահաւորուած շատ հարուստ, բայց առանց որոշ ճաշակի: Աջ պատի մէջ երկու դռներ, որոնցից խորքինը տանում է դէպի նախասենեակ, ավանսցենայի կողմինը-դէպի Անդրէասի սենեակը: Երկու դռների միջն գահաւորակ, շուրջը բազկաթոռներ, առջնը կլոր սեղան մետաքսեայ սփոռով ծածկուած, վրէն ճիւղաւոր էլէքտրական լամպաբ:

Խորքում ևս երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատուն, ձախ կողմինը—օրիորդների սենեակները: Զախ պատի մէջ միայն մի դուռն, որ տանում է Բագրատի և Սուրէնի սենեակները: Այս պատի առջն, դէպի բեմի խորքը գահաւորակ, առջնը նոյն պէս կլոր սեղան, շուրջը կիսաբազկաթոռներ: Սեղանի վրայ այլբօմ և գեղեցիկ իրեր: Գահաւորակի ետևում, պատի վրայ հայելի ապակեայ շըշանակով: Նոյն պատի առջն դէպի ավանսցենա — դաշնամուր: Ուկէզօծ աթոռներ, թանգազին թաւշեայ նստարաններ, բազմոցներ, վազաներ, կիսարձաններ, տրոպիական բոյսեր և այլն:

Ցատակը ծայրէիծար ծածկուած է գորգերով: Դռները վարագուրւած են ուրախ գունի վարագոյրներով: Առաստաղից քաշ է արած մի մեծ էլէքտրական ջահ շատ ճիւղերով:

Կէսօր է: Սեղանատան դռները բաց են: Այստեղ

ցիկը ղրել է սսկէզօծ աթոռներից մէկի վրայ եւ կապոցները տնտղում է): Դէրփայու, էլի դէրփայու, կուռժօվիկեր, էլի կուռժօվիկեր, զօնթիկ, վէյեր, շալ, պերչաթկաներ, մի դիւժին: Հապատեմնեմ ինչպիսի գլխարկ է:

ՎԱՐԴ. (Թղթարկող հեռու սկանելով): Հէ հէ, հեռի կաննիր, ասալ ա իսկի մարդի ցոյց չըտաս: Բերանիդ ջիւրը քի քինեայ: Հեարեաս ինքնալ կեամ ա:

## ՏԵՍԻԼ II.

ՆՈՅՆՔ ԵՒ ՌՈԶԱԼԻԱ:

ՌՈԶ. (Ներս է մտնում նախասեննակից գլխարկով եւ վերարկուով): Օ, տոն Dieu, յոդնեցի: Ման եկայ, ման եկայ, հաղիւ կարողացայ իմ ճաշակով մի քանի բաներ գտնել: Այն օրից, որ Պարիզը տեսել եմ, էլ այստեղ ոչ մի բան չեմ հաւանում: (Վարդանին) Ցիմար, ինչու ես յատակի վրայ գցել: (Զարուհուն) Վերցրու, տարիմ սենեակը: Գլխարկը թող այստեղ: (Առնում է Վարդանից թղթարկող եւ դնում սեղանի վրայ):

ԶԱՐ. (Վարդանի օգնութեամբ կապոցները տանում է խորքի ձախ դռներով եւ իսկոյն վերադառնում են):

ՌՈԶ. (Մօտենում է հայելոն եւ հրճուանքով նայում իրան: Ենտոյ վերցնում է իւր գլխի գլխարկը եւ դնում սեղանի վրայ):

ՎԱՐ. } Սպասում են հրամանների: ՎԱՐԴ. }

ՌՈԶ. (Բաց է անում թղթարկող, դուրս է քերում ահազին կարմիր փետուրով մի սպիտակ գլխարկ եւ հիացած նայում): Հապա, մէկէլ տեսնեմ լաւ է սազում: (Դնում է գլխին եւ նայում հայելուն): Հըմ, օրիորդ իլլարեամն ուղում էր ինձ հաւատացնել, որ մօդէլը միայն իւր համար է բերուած: Կարծեմ, վատ չէ, ատ, Զարուհի:

ԶԱՐ. Ույ, օրիորդ, ինչպէս սազում, ինչպէս: ՎԱՐԴ. Կասես, նուռնի ծաղիկ իմ, եա լալազար:

ԶԱՐ. Ով գիտէ, քսան մանէթ էք տուել... ՌՈԶ. (Արհամարհանքով) Ֆիդօն, հիմայ ամեն մի մակլերի աղջիկ էլ քսան մանէթանոց գլխարկ է հագնում: Պարիզից է բերել տուած, արժէ իննըսուն ոռութի:

ՎԱՐԴ. Խննըսուն մանէթ... Վայ սատանայ փոնողանոց Վարդան, իննըսուն մանէթով Շամախիում մին տուն կարելի աշխիլ... հալա կտուրն ալ դուած...

ՌՈԶ. (Առանց նրան նայելու): Դու դեռ այստեղ ես:

ՎԱՐԴ. Հրամանիդ ամ սպասըմ: Ալ պեան չես ասիլու:

ՌՈԶ. (Երեսը դարձնելով նրա կողմը): «Զես» ասիլու: «Զես»-ը որն է, ես քոյրդ եմ, թէ ընկերդ:

ՎԱՐԴ. Ս, բալամ, դէ մենք չօբան մարդ անք, հինչ իմանանք:

**ՈՒԶ.** Հիմա էլ «մենք»։ Այդ ինչ տեսակի մարդիկ են, արքայական եղանակով են խօսում։ ուրիշներին «դռ», իսկ իրանց մասին—«մենք»։ Գնա։ Իվանին ասա, որ կառքն ինձ հարկաւոր չէ։ (Վարդանը շփոթուած հեռանում է նախասենեակ, գդակը մոռանալով յատակի վրայ։ Զարուհուն)։ Ո՞վ կայ տանը։ (Նոր զլխարկը դնում է թղթարկղի մէջ)։

**ԶԱՐ.** Տիրուհին և օրիորդը։

**ՈՒԶ.** Կանչը այստեղ Բիտային։ Տար այս դիմարկը սենեակս։

**ԶԱՐ.** (Վերցնում է թղթարկղն եւ գնում օրիորդների սենեակները)։

**ՈՒԶ.** (Հանում է վերարկոն, ծգում բաղկաթոռների մէկի վրայ, նորից մօտենում է հայելուն եւ մազերն ուղղում)։

**ՎՐԱՅԻ.** (Յետ է զալիս նախասենեակից եւ յատակի վրայ որոնում է գդակը)։ Աշխ, հինչ տեղ կորաւ անտէրը։

**ՈՒԶ.** Այդ ի՞նչ ես փնտուում։

**ԶԱՐ.** (Վերադառնում է, վերցնում է Ռօզալիայի հին զլխարկն ու վերարկոն եւ տանում նախասենեակ)։

**ՎՐԱՅԻ.** Շուլլահիս։ Զամ իմանըմ հինչ տեղ թողի։ (Գտնում է)։ Հա, հեարեաս։ (Վերցնում է)։ Այ, քո տիրոջ վիզը կոտրուի հատ։ (Զեռով զարկում է գդակին)։

**ՈՒԶ.** (Կատաղած) Ի՞նչ ես անում, վայրենի։ Դնուս եկ, անկիրթ հայ։

**ՎԱՐԴԻ.** (Մեկուսի) Աշխ, զբանց զուլուղ անիլը թամամ խաթաբալա եա քի... (Գնում է նախասեակ)։

**ԶԱՐ.** Վերադառնում է նախասենեակից։

**ՈՒԶ.** Արի ու այդ տեսակ արջերից մարդ պատրաստիր։ Իսկ ես գեռ ուզում եմ կարիօլետիս համար նրան ցիլինդր ու ֆուակ հագնել։ Լաւ գործ կլինի, ինչ ասել կուգի։ Զէ, պէտք է այլազգի վարձել։

**ԶԱՐ.** (Վերցնում է սրճի զաւածն ու անձեռցիկը եւ անցնում է սեղանատուն)։

### ՏԵՍԻԼ III.

ՈՒԶԱԼԻՍ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ,

**ՄԱՐԴԻ.** (Ներս է մտնում հազնուած համեստ, բայց աւելի լաւ, քան առաջին արարուածում։ Ձերին պահած է մի անկազմ գիրք։ Զի կարդում)։

**ՈՒԶ.** (Ժիծաղելով) Իսկ և իսկ Մարգարիտա-թառուտ օպերայից գրքոյկը ձեռքումդ, համեստ, ամօթիսած, պակասում է ձախարակը։ Երանի գիտենայի, ինչ ես գտնում ընթերցանութեան մէջ։ (Զգում է զահաւորակի վրայ)։

**ՄԱՐԴԻ.** Ո՞րտեղ էիր։ (Գիրքը դնում է ձախ կողմի սեղանի վրայ եւ նստում)։

**ՈՒԶ.** Օհ, էլ մի հարցնիր, յոգնեցի։ Գըլիսարկս, վերջապէս, ստացայ։ Յետոյ կըտեսնես, ինչ հիանալի բան է։ Այսօր ծախսեցի մօտ 300

ոռութիւն: Հայրիկը բարկանալու է, բայց, ինչ արած,  
բոլորը հարկաւոր բաներ են:

**ՄԱՐԴ.** Ուօգալիս, մինչև Երբ պիտի այդպէս  
անհաշիւ շուայլես:

**ՈՒԶ.** Օհօ, դու ինձ յանդիմանում ես:

**ՄԱՐԴ.** Եթէ կամենաս—այո, քո շուայլու-  
թիւնն արժանի է յանդիմանութեան:

**ՈՒԶ.** (Հեզնաքար) **ՄԵՐԾ,** այ այ այ: Եթէ  
հախանձում ես ինձ, ինքդ էլ կարող ես շուայլել:  
Ի՞նչն է քեզ խանդարում:

**ՄԱՐԴ.** Երկի, կայ մի բան, որ խանդարում է:

**ՈՒԶ.** Օհօ, այսօր դու բաւական հետաքր-  
քրական ես: Ապա, բարեհաճիր ասել, տեսնենք,  
էլի ի՞նչ է պատահել: Դէմքդ շատ խորհրդաւոր է:

**ՄԱՐԴ.** Ուօգալիս, հասկացիր, վերջապէս,  
ինչ է կատարում այս տանը: Զի կարելի հան-  
գիստ հոգով շուայլել այն փողերը, որոնց վրայ  
ծանրանում է մի մեծ մեղադրանք: (Վեր է կենում):

**ՈՒԶ.** (Վեր է կենում արագութեամբ) Բայց  
ով է այդ մեղադրանքը դնողը: Ո՞վ: Քո Արտաշէս  
Օթարեանը: **ՄԵՐ** կեղտոտ և անամօթ զրպարտիչ:

**ՄԱՐԴ.** (Մեղմ յանդիմանութեամբ, բայց  
վրդովուած) Ուօգալիս...

**ՈՒԶ.** Բաւական է, մի համարձակուիր պաշտ-  
պանել նրան իմ մօտ: Քեզանից առաջ ես եմ ճա-  
նաչել նրան: Ես ատում եմ այդ մարդուն: Ատում  
եմ հոգոյս բոլոր ուժով: Նա ապերախտ է, ինչ-  
պէս օձ, որին մեր հայրը տաքացրել է իւր ծո-  
ցում: Եւ ես զարմանում եմ, որ հայրիկը մինչև

օրս նրան ցոյց չի տուել մեր տան դռները:  
**ՄԱՐԴ.** (Հառաշելով): Ով գիտէ, գուցէ այդ  
այնքան էլ հեշտ չէ:

**ՈՒԶ.** (Կանգ առնելով եւ խիստ) Բիտա, դու  
չափից անցնում ես: Դու պէտք է շատ անպի-  
տան աղջիկ լինիս, որ հաւատաս հարազատ ծնո-  
ղիդ զրպարտողին:

**ՄԱՐԴ.** (Նոյն եղանակով) Ախ, գուցէ շատ  
եմ փափակում չընաւատալ, բայց...

**ՈՒԶ.** (Հնդհատելով) Բայց վախենում ես զըր-  
կուել նրա բարեհաճ ուշաղրութիւնից, այնպէս չէ:

**ՄԱՐԴ.** Ի՞նչ ես ուզում ասել: Որ ես սի-  
րում եմ Օթարեանին: Այո, սիրում եմ և շատ  
եմ սիրում, թող այս յայտնի լինի քեզ և ամեն-  
քին: (Անց ու դարձ է անում):

**ՈՒԶ.** (Ճաղաքար, ատելութեամբ ու նա-  
խանձով) Ի՞նչ քաջն ես, իսկ և իսկ հերոսուհի:  
Ասենք, ես վաղուց գիտէի այդ: Բայց չէի երե-  
ւակայում, թէ սէրդ այնքան թունդ է, որ պատ-  
րաստ ես հօրդ պատիւն անգամ զոհել նրան:

**ՄԱՐԴ.** Միայն այն դէպքում, եթէ այդ պա-  
տիւը մաքուր չէ:

**ՈՒԶ.** Ի՞նչ ես ուզում ասել:

**ՄԱՐԴ.** Այն, որ ես մի ըոսէ անգամ չէի  
տատանուիլ երես դարձնել Օթարեանից, եթէ  
համոզուէի, որ նրա դատն արդար չէ: Այն, որ  
ես կըսկէի Աստծու պէս պաշտել հայրիկին, ե-  
թէ համոզուէի, որ նա անպարտ է իւր ընկերոջ  
գերեզմանի առաջ: (Հնկճումլով, դառն ու մոայլ

ծայնով): Հայրիկը մինչև օրս դեռ չի կարողացել հերքել Արտաշէսի պահանջը փաստերով: Մեր գերդաստանի գլխին կանգնած է մի սոսկալի յանցանք: Նա ճնշում է իմ հոգին արձիճի պէս: Ես շրջիտեմ գլուխս ամօթից ուր թագյնեմ: (նստում է ըազկաթոռներից մէկի վրայ եւ զլուր ղնում սեղանի վրայ):

**Ո09.** (Տակաւին ծաղրաբար) Ի հարկէ, բաշի քեզանից ով ունի պատուի մասին հասկացողութիւն կամ գերդաստանական հալարտութիւն: Մենք ամենքս թեթեամիտներ ենք: (Լուրջ) Երկուսից մէկը. կամ դու խելագարուել ես կամ այդ մարդը մի հասարակ ինտրիգան չէ, այլ խարդախ դեւ: Աւրիշ կերպ չեմ կարող բացարել քո այժմեան տրամադրութիւնը: (Թեթեւ լսութիւնից յետոյ, մօտենում է): Լսիր, Բիտա, ես իմ հօր հարազատ զաւակն եմ, պարտաւոր եմ սիրել ու պաշտպանել նրան թէկուզ նա վերջին տեսակի աւազակ լինի: Եւ ահա իմ ասելիքը, թող քո Օթարեանը ինչ ուզում է հնարի իմ հօր մասին, իսկ ես կաշխատեմ խայտառակութեամբ դուրս վոնդել նրան մեր տնից: Հասկացար: Դու կարող ես կատաղել իմ դէմ, թշնամանալ ինձ, բայց այդ ոչինչ նշանակութիւն չի ունենալ ինձ համար: (Հեռանում է):

**ՄԱՐԳ.** Ախ, թող ով ինչ ուզում է անի, ինձ համար միւնոյն է: Ես կըլսեմ միայն իմ խղճի ձայնին: Ես կարծում եմ, որ չի կարող լի-

նել ոչ որդիական և ոչ մի ուրիշ սէր ստի և խարէութեան մէջ:

**ԶԱՐ.** (Սեղանատան դռներից) Նախաճաշը պատրաստ է:

**Ո09.** Գնանք: Հայրիկն իսկոյն կըգայ: Դու պարտաւոր ես քո յիմարութիւնները թագյնեն նրանից:

**ՄԱՐԳ.** Ես ախորժակ չունիմ:

**Ո09.** (Ատելութեամբ լի մի հայեացք ծգելով Մարզարտի վրայ, անցնում է սեղանատոն):

**ՄԱՐԳ.** (Մնում է ընմի ծախ կողմում մըտածմունքների մէջ):

#### ՏԵՍԻԼ IV.

**ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԵԱՍ, ԲՈԳԻՄԸ ԵՒ ՄԱՂԱԹԷԼ:**

Վերջին երեքը ներս են մտնում նախասենեակից:

**ԱՆԴՐ.** Մի հակառակիր ինձ: Ինչպէս ասում եմ, այնպէս էլ պէտք է լինի: Կրակը իւղով չեն հանգցնիլ:

**ԲԱԳԻՐ.** Եթէ միայն կրակ է: Դատը մենք կըտանենք, քանի որ նա փաստեր չունի: Թող պահանջի օրէնքով: Երբ քաղաքացիական դատը կըվերջացնենք, մեր կողմից կըսկսենք նրա դէմ քրէական դատ: Այս անհրաժեշտ է քո, իմ և մեր ամբողջ գերդաստանի պատուի համար:

ԱՆԴՐ. Որ վզովս թոկ զցես, հրա հետ դաշ-

տի չեմ դուրս դար:

ԲԱԳԻ. Հայր, մանուկ հասակիցս քեղանից  
անդադար լսել եմ, որ քո հարստութիւնը վաս-  
տակել ես արդար քրտինքով:

ԱՆԴՐ. (Գրգռութլով) Սաել եմ, ասել եմ,  
էլի եմ ասում, բայց դու քիչ կը կնիք: Այդ տղան  
ինձ զրպարտում է, բայց ես էլի ուզում եմ նրա  
հետ հաշտուել:

ԲԱԳԻ. Չեմ հասկանում, բոլորովին չեմ  
հասկանում:

ԱՆԴՐ. Սաղաթէլ, գնա, գրասենեկից մի  
մարդ ուղարկիր, որ շուտով նրան կանչեն աստեղ:

ՍԱՀ. Դում է նախասենեակի դռներով:

ԱՆԴՐ. (Նոր միայն նկատում է Մարգար-  
տին, որ ամբողջ ժամանակ, կանգնած ճախ պա-  
տի տակ, ուշադիր դիտում հօրը): Աս, դու ա-  
կանջ էիր գնում: Տէր Աստուած, Տէր Աստուած,  
մի բոպէ հանգստութիւն չունիմ: Կարծես, ա-  
մենքն երգուել են ինձ խելքից հանել:

ՄԱՐԴ. Ներիր, հայրիկ, ես հեռանում եմ:

ԱՆԴՐ. Լաւ, դու էլ մի նեղանար: Ես մե-  
ղաւոր չեմ, եղբայրդ է ինձ կատաղեցնում: Բայց  
ոչ, դու էլ պակաս չես, դու էլ մօրդ պէս ինձ  
չես սիրում, դու ատում ես ինձ:

ՄԱՐԴ. (Անշափ վշտացած) Հայրիկ...

ԵՐԱՆ. | Երեւում են սեղանատան դռների մէջ:  
ՌՕԶ. |

### ՏԵՍԻԼ V.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՍԱՂԱԹԷԼԻ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ  
ՌՕԶԱԼԻԱ:

ԱՆԴՐ. Կորիր, ես քո հայրը չեմ, դու խորթ  
ես ինձ համար: Ես այս տանն օտար եմ, օտար,  
իմ մասին մտածող չըկայ: Ես ձեր աչքում մի  
համբալ եմ, ուրիշ ոչինչ...

ՌՕԶ. Գոնէ իմ մասին, հայրիկ, իրաւունք  
չունիս այդ ասելու: (Առաջ է զալիս:)

ԱՆԴՐ. Աս, եկան, հաւաքուեցին: Գնա,  
քեզ էլ եմ ճանաչում: Դու այն ժամանակ ես  
մտածում իմ մասին, երբ հարկաւոր է պարտ-  
քերդ վճարել մաղաղիններին: Դուք ինձ կերպ,  
քանդեցիք: (Հետզինտէ աւելի ու աւելի զրգութ-  
յով:) Ես ոչ ոքի համար մարդ չեմ, ոչ ուրիշնե-  
րի, ոչ իմ տնացինների: Ամենքն ինձ համարում  
են ոսկու տոպրակ, ուրիշ ոչինչ: Յարգում են  
երեսանց, իսկ ետեկցս չարախօսում են: Երբ  
կարիք ունին, վազում են գլխիս, երբ չունին—  
ես չըկամ նրանց համար:

ԲԱԳԻ. Պէտք է խոստովանել, որ այդ մա-  
սամբ ճիշտ է:

ԱՆԴ. Ճիշտ է, բայ չէ: Հէ, ես յիմար չեմ,  
ճանաչում եմ մարդկանց հոգին: Ամենքն իրանց  
գլխի մասին են մտածում: Հէնց մէկը դու ինքդէ:  
Սուտ է, դու էլ ինձ չես սիրում, դու էլ ինձ  
փողի համար ես պատւում: Այո, այո, ես մարդ

չեմ քեզ համար, այլ փողի մնդուկ: Բայց երկար  
խարել չես կարող: Ել ոչ մի կոպէկ չեմ տալու:  
ԲԱԳԻ. Հայրիկ, հանգստացիր:

ԱՆԴԻ. Այս, չեմ տալու, թող գործարանդ  
կիսատ մնայ: Ի՞նձ ինչ: Ես իմ հօրից փող  
ոտացել եմ, որ դու ինձ պլոկում ես, ամ: Թուք  
ու մուքով, զրկանքներով, քաղցած փորով եմ  
ես մարդ դարձել: Գնա, ինքդ էլ արիւն քրտինք  
թափիր, այն ժամանակ կասեմ խելօք ես: Ամենքդ  
գնացէք, ձեր աշխատանքով ապրեցէք: Այստեղ  
մտիկ արէք, տեսէք ինչ տուն ու տեղ են սար-  
քեր: Ինչիս է հարկաւոր այս ոսկէզօծ կահ-կա-  
րասին: Ո՞վ եմ ես, ո՞ր խանի կամ իշխանի  
տղան: Հէ, մի նախկին գեադայ, պանիր ու հա-  
ցով ապրած լակոտ: Ինչու էք ինձ քանդում:  
Դուք էք մեղաւոր, որ Օթարեանը կպել է եա-  
խիցս: Այս այս, դուք: Նա տեսնում է, որ դուք  
տակն ու վրայ էք անում իմ հարստութիւնը, ու-  
զում է ինքն էլ ձեզ պէս շռայրել: Դուք ինձ հա-  
մար թշնամիներ էք ստեղծում...

ՄԱՐԴԻ. Հանդարա լալիս է:

ԱՆԴԻ. Լաց, էլի արտասուր: Հոգիս բերանս  
բերիք, խեղգեցիք, սպանեցիք: Հերիք է, հեռա-  
ցիք. Ես ատելով ատում եմ արտասուրք: Անդրէաս  
ելիզբերովի մօտ ոչ լաց եղէք, ոչ ծիծաղեցէք:

ՄԱՐԴԻ. Բարձր ձայնով հեկեկալով, անց-  
նում է իր սկնեակը:

ԵՐԱՆ. Ինչպէս սիրտ արիր նրան վիրաւո-  
րելու: Նա Աստծու գառն է:

ԱՆԴԻ. Աստծու գառը, հօրդ պէս: Ես ատե-  
լով ատում եմ Աստծու գառներին: Տուէք ինձ  
Սաթայէլին, ես նրա հետ աւելի հեշտութեամբ  
կըհաշտուիմ, քան Աստծու գառների հետ: Դնա-  
ցէք, ինչ էք ագռաւների պէս զլիսիս հաւաքուել,  
ինձ խօմ չեն թաղում, ինձ ուզում են միայն կո-  
ղոպտել, տկլորել, փողոցները զցել: Գոնէ դուք  
ինայեցէք ինձ: Դէհ, կորէք, հայդա: (Նստում է  
աջ կողմի ըազկաթոռներից մէկի վրայ):

ԵՐԱՆ. |  
ԲԱԳԻ. { Անցնում են սեղանատուն:

ՌՕԶ. Մնում է ըեմի վրայ:

## ՏԵՍԻԼ VI.

ԱՆԴԻԱՍ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ:

ԱՆԴԻ. Նստած է խորին ստածողութեան  
մէջ եւ տանջում է:

ՌՕԶ. Ուզում է մօտենալ ու խօսել, բայց  
չի վստահանում:

ԱՆԴԻ. (Հառաշում է, ձեռը զարկելով սե-  
ղանին): Ա՞հ...

ՌՕԶ. Հայրիկ, ի՞սչն է քեզ այդպէս տան-  
ջում:

ԱՆԴԻ. (Գլուխը բարձրացնելով, անտար-  
ըեր) Քո բանը չէ:

ՌՕԶ. Ներիր, հայրիկ, քո հոգսերը վերա-  
բերւում են և քո գաւակներին:

ԱՆԴՐ. (Դարձեալ անտարբեր): Ես հոգս չունիմ: (Ներվային արագութեամբ ոտքի կանգնելով): Բան ունիս ասելու:

ՌՈԶ. Այս, հայրիկ, ունիմ, բայց չեմ համարձակւում:

ԱՆԴՐ. Դէս, կարճ կապիր, ես գնում եմ:

ՌՈԶ. Գիտես ինչ, հայրիկ, այն մարդը, որ մոռացել է քո բարերարութիւնը և ուզում է քեզ կողոպտել, այստեղ, մեր տանը զինակից ունի:

ԱՆԴՐ. (Հետաքրքրուած) Ամ, ի՞նչ, պարզ առաջ:

ՌՈԶ. Մարգարիտը սիրահարուած է Օթարեանի վրայ:

ԱՆԴՐ. Ի՞նչ, սիրահարուած: Ով ասաց քեզ:

ՌՈԶ. Հէնց ինքը Մարգարիտը, սրանից մի կէս ժամ առաջ:

ԱՆԴՐ. Յետոյ: Նա էլ սիրում է Մարգարին:

ՌՈԶ. Պէտք է կարծել, թէկ այն տեսակ մարդու հաւատալ չի կարելի:

ԱՆԴՐ. (Մի քանի վայրկեան մտածում է, յանկարծ դէմքը պայծառանութ է ուրախութիւնից): Ասում ես, ինքը, Մարգարիտը խոստովանեց:

ՌՈԶ. Այս, հայրիկ: Ես գիտեմ, որ նրանք ամեն օր տեսակցութիւն ունին գրսերում: Հայրիկ, ես պարզ համարեցի քեզ զգուշացնել այս մասին: Կարծում եմ, մեր գերգաստանի պատիւը պահանջում է այդ սէրը խափանել հէնց այժմեա-

նից: Ճշմարիտ է, Մարգարիտը մի առանձին արժանաւորութիւն չունի, բայց ինչ էլ լինի, քո աղջիկն է: Օթարեանը արժանի չէ քո փեսանդառնալու:

ԱՆԴՐ. (Շարունակ մտածելով) Ի հարկէ, ի հարկէ: Շնորհակալ եմ, որ ինձ զգուշացրիր: Գնա, իսկոյն Մարգարիտն կանչիր այստեղ:

ՌՈԶ. Բայց, հայրիկ, շատ էլ չըբարկանաս նրա վրայ: Յիմար է, չի հասկանում:

ԱՆԴՐ. (Անհամըեր) Գնա, նրան կանչիր այստեղ:

ՌՈԶ. (Մեկուսի) Տեսնենք, ինչպէս պիտի պաշտպանես սիրեկանիդ: (Գնում է խորքի ծախ դոներով):

## S E U H I L VII.

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ:

ԱՆԴՐ. Մինչեւ Մարգարիտ զալը, մտազրադ անցուղարձ է անում, զանազան շարժումներով իւր միտքն արտայատելով:

ՄԱՐԳ. Դուրս է զալիս խորքի ծախ դոներից հանդարտ քայլերով:

ՌՈԶ. Դուրս է զալիս անմիջապէս քրոջ ետեւից, քանի մի վայրկեան կանգ առնում, նայում է եւ անցնում սեղանատուն, դոները ծածկելով:

ԱՆԴՐ. Առաջ եկ, լալկան աղջիկ: Հայրը որ-

գու վրայ չի կարող բարկանալ, ինչ է: Հէ, բաս  
ի՞նչ կանէիք դուք, երես առածներ, եթէ մեր  
ծնողների պէս ծնողներ ունենայիք: Հայրս վզա-  
կոթիս որ տալիս էր — աչքերիցս պէծեր էին թըռ-  
չում: Դէ լաւ, բաց արա աչքունքդ, ծնողի դէմ  
ոխ չեն պահիլ:

**ՄԱՐԴ.** Հայրիկ, ես քո դէմ ոխ չունիմ:  
**ԱՆԴԻՐ.** Այ, օքնեալ լինիս, աղջիկս: Ես գի-  
տեմ, որ դու բարի սիրտ ունիս, դէհ, արի հաշ-  
տուենք: (*Մօտենում է եւ ծակատը համբուրում*):  
Բայց ես էլի քեզ վրայ բարկացած եմ: Գիտես  
ինչ, աղջիկս, դու հօրդ հետ անկեղծ չես:

**ՄԱՐԴ.** (*Զարմացած նայում է հօրը*): Ան-  
կեղծ . . .

**ԱՆԴԻՐ.** Ինչու ես զարմանում:

**ՄԱՐԴ.** Հայր, առաջին անգամն եմ ես քեզա-  
նից այդպիսի բան լսում: Դու երբէք ինձ արժա-  
նի չես համարել այդ տեսակ խօսակցութեան:

**ԱՆԴԻՐ.** Որովհետեւ դու ինքդ քեզ հեռու ես  
պահում ինձանից: Դու, երեխ, մտածում ես, էհ,  
իմ հայրը մի տղէտ և խորամանկ վաճառական է,  
չարժէ, որ սիրտս բաց անեմ նրա առաջ:

**ՄԱՐԴ.** Ոչ, հայրիկ, սխալում ես, հաւա-  
տացնում եմ քեզ: Ես միշտ պատրաստ եմ եղել  
քեզ յայտնել իմ բոլոր մտածմունքները, ամենայն  
անկեղծութեամբ, միայն թէ արժանի համարէիր  
ինձ լսելու: Բայց դու... դու միշտ սանձահարել  
ես իմ լեզուն քո մոայլ բնաւորութեամբ:

**ԱՆԴԻՐ.** (*Ուրախ ծեւանալով*): Այս: Ապրիս

գաւակս: Դէ որ այդպէս է, ասա ինձ, ինչու այս  
քանի օրերս տիսուր ես:

**ՄԱՐԴ.** (*Ծփոթուելով*) Զըգիտեմ . . . ես . . .  
տիսուր չեմ:

**ԱՆԴԻՐ.** Այ, տեսամբ: Դու կեղծել չես սի-  
րում, բայց հիմայ կեղծեցիր: Ուզում ես, որ քո  
տեղ ես պատասխանեմ: Դու տիսուր ես, որով-  
հետև վերջերս քեզ հաւատացրել են, թէ քո հայ-  
րըն ազնիւ մարդ չէ:

**ՄԱՐԴ.** Հայրիկ . . .

**ԱՆԴԻՐ.** Այսո, սիրելիս, զու ինձանից թաղ-  
ցնել չես կարող: Ես մարդու մի շարժումից կա-  
րող եմ իմանալ, թէ նա ինչ է մտածում իմ մա-  
սին: Հապա, պատմիր, տեսնեմ, ինչեր է ասել  
քեզ իմ մասին քո սիրած երիտասարդը . . .

**ՄԱՐԴ.** Բոլորովին շփոթում է ու կարմըում:

**ԱՆԴԻՐ.** Լաւ, մի ամաչիր: Բոլորը յայտնի է  
ինձ: Մի վախենար, չեմ բարկանում: Ես Արտա-  
շէսին վատ տղայ չեմ համարում: Եթէ վատ հա-  
մարէի, վաղուց նրա ոտը կտրած կըլինէի իմ տը-  
նից: Միայն, աղջիկս, նա գեռ երեխայ է, չի  
հասկանում իւր արածը: Նա իմ բարերարութիւն-  
ները մոռանում է: Էհ, Տէրը նրա հետ, երեխ,  
մի օր խելքի կըգայ, կըտեսնի, որ սխալուած է:

**ՄԱՐԴ.** (*Ուրախ ծեւանալով* եւ, միեւնոյն ժամա-  
նակ, դեռ կասկածելով): Այս, սխալուած է քո  
մասին:

**ԱՆԴԻՐ.** Ի հարկէ, բաս ի՞նչ էիր կարծում:

**ՄԱՐԴ.** Հայրիկ, ինչու թաղցնեմ, ես երբէք

չեմ կասկածել ոչ քո անցեալի և ոչ ներկայի ազնւութեան մասին։ Բայց նա ինձ համոզում է, որ . . .

**ԱՆԴՐ.** Որ ես կողոպտել եմ նրա հօրը, այնպէս չէ։ Բայց ինչով է համոզում, խօսքերով, թէ փաստերով։

**ՄԱՐԳ.** Հայրիկ, ես ոչ քեզանից կարող եմ փաստ պահանջել, ոչ նրանից։

**ԱՆԴՐ.** Բայց առանց փաստերի կարող ես ձնողիդ դատապարտել, համար (Կերծ վշտանալով) Ամօթ քեզ, Մարգարիտ, ամօթ։ Դու ինց ապակ ես տալիս . . .

**ՄԱՐԳ.** (Վշտահար եւ ամօթահար)։ Հայր . . .

**ԱՆԴՐ.** (Տակաւին վշտացած ձնւանալով) Ահ, թիղ ինձ, ես ինչ հայր եմ, երբ հարազատ աղջիկս, ուրիշի դատարկ խօսքերով, ինձ համարում է գող, աւազակ։ Թաղի ինձ, դնա նրա ետեւից։ Նա է քեզ համար թանդ, իսկ ես ով եմ, ինչ եմ։ Ոչինչ, ցեսի կտոր։

**ՄԱՐԳ.** Դու ունիս իրաւունք ինձ նախատելու, հայր, ես շտապել եմ եզրակացութիւն անելու։ Ներիր ինձ, աղաչում եմ։

**ԱՆԴՐ.** Ներումն խնդրելուց ի՞նչ օգուտ, դու պէտք է աշխատես մեղքդ քաւել, սխալդ ուղղել։

**ՄԱՐԳ.** Բայց ի՞նչպէս, հայրիկ, ի՞նչ միջոցով, սովորեցրնե, ես կրքաւեմ իմ մեղքերը։

**ԱՆԴՐ.** Այ ինչպէս։ Լսիր։ Նա ասում է, թէ իւր ձեռքում ունի ինչոր գրաւոր ապացոյցներ իմ դէմ։ Դու . . . (Նայելով շուրջը)։ Բայց այստեղ

անյարմար է ասել։ Կարծեմ, գալիս են։ Գնանք իմ սենեակը, այնտեղ կըբացատրեմ ինչոր հարկաւոր է։ Գնանք։ (Գնում են աջ կողմի առաջին դռներով)։

### ՏԵՍԻԼ VIII.

ՍՈՒՐԵԿՆ ԵՒ ՍԱՂԱԹԵԼ։

Ներս են մտնում նախասնեակի դռներից։

**ՍՈՒՐԵԿՆ.** Այս, քեռի, երեակայել չես կարող, թէ ինչքան ծիծաղելի էր։ Արուլօվը, քաղաքի առաջին քէֆ անողն և ամենից շատ ծախսողը, յանկարծ մնում է թատրոնի դռների մօտ քիթը քաշ։ Իսկ քո քրոջ որդին բանում է գեղեցկուհի Առլօվայի թերից և կառք նստեցնում։

**ՍԱՂ.** Ամօթ չըլինի հարցնելը—այդ ի՞նչ պարձենալու բան է։

**ՍՈՒՐԵԿՆ.** (Ոզետըուած շաբունակելով) Ամենքի ուշադրութիւնը մեզ վրայ է, բոլորը նայում են նախանձով։ Արուլօվի աչքերից կըակ է թափւում։ Կրակոտ Ալի-Բաբան կառքը թոցնում է և մեզ կայծակի արագութեամբ բերում է Գրանդ Հօթէլ։ Ծառաները ձեռքի ոտքի են ընկել։ Սեղանը պատրաստ է։ Հիւրերը սպասում են . . .

**ՍԱՂ.** Ամօթ չըլինի հարցնելը—ի՞նչ հիւրեր։

**ՍՈՒՐԵԿՆ.** Ինձ նման դարդիմանդներ։ Մեղ ծափահարում են։ Կառքից ծառաները բերում են

թատրոնում ստացուած փունջերը—կէմն իմ նուիրածն է։ Առլօվան հիացած է նուէրներից։ Երբէք այդպիսի բենեֆիս չի ունեցել։ Յետոյ ինչ քէֆ, ինչ քէֆ։ Շամպանիան ջրի պէս է հոսում։ Խմում են Առլօվայի կենացը, յետոյ իմը։ Մէկ, երկու, երեք, յանկարծ ես սեղանի տակ եմ։ Կծում եմ Առլօվայի ոտը։ Նա, ծիծաղելով ու ծվալով, նայում է ներքեւ։ Ոտքի եմ կանգնում գեղեցկուհու կօշիկը ձեռքիս, լեցնում եմ շամպանիայով և խմում եմ նրա կենացը։ Ագեռութիւնն անասելի է։ Առլօվան սքանչացած է, ասում է առաջին անգամն եմ տեսնում ձեզ նման երկրպագու գեղարուեստի։ Ահ, շարժանա, մերվէյլ… Կին չէ, այլ դիցուհի… (Չեռը զարկելով Սաղաթէլի ուսին) Այժմ, քեռի, նրա սիրան իմն է ամբողջովին։ (Չեռը զարկելով Սաղաթէլի փորին) Կըկամենամ, ծանօթացնեմ, ամ, առաքինի Բաղդասար…

ՍԱԴ. Գնա բանիդ է։ Դու ինձ այն ասա, ինչ նստեց այդ քէֆը։

ՍՈՒԻՐ. Համեմատաբար, ոչինչ, դատարկ բան—վեց հարիւր ոռութիւն։

ՍԱԴ. (Զարժացումից յետ թոշելով) Փահ, քո տունը չըքանդուի, օղմաւ…

ՍՈՒԻՐ. Կծեց, համ։

ՍԱԴ. Վեց հարիւր մանէթ, մի գլշերնում։ Դէ լաւ, ամօթ չըլինի հարցնելը—Երբ ես վեքուէներս այնա անելու։

ՍՈՒԻՐ. Երբոր պայմանաւորուած ժամանակըգգայ, այնա կանեմ։

ՍԱԴ. Ես պէտք է սպասեմ քո հօր մահուան։

ՍՈՒԻՐ. Այո, ինչ արած։

ՍԱԴ. Բայց նա ինձանից առողջ է, կարող է ինձ նման տասին թաղել։

ՍՈՒԻՐ. Ես ինչ անեմ, դու ինքդ ես ինձ սովորեցրել։ Տալիս ես 300, ստանում ես 2 հագարի վեքսել, որ հօրս մահից յետոյ վճարեմ։ (Հոռովիլին)։ Ախ, քեռի, գլուխս սկսեց ցաւել։ Տրամադրութիւնս փչացաւ։ Ամեն անգամ այդ տեսակ մեծ քէֆից յետոյ կեանքն ինձ թւում է յիմար, ձանձրալի բան։ (Նկատելով Երանուհուն, Թօզալիային եւ Բազրատին) Ահա գալիս է ընտանեկան իդիլլիան։

## ՏԵՍԻԼ IX.

ՆՈՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՈԶԶԱԼԻՌ ԵՒ ԲԱԳՐԱՏ։

Դուրս են զալիս սեղանատանից

ԵՐԱՆ. Սաղաթէլ, Զարուհուն հրամայիր, որ քեզ նախաճաշ տայ։

ՍԱԴ. Ասմիջապէս անցնում է սեղանատուն։

ԵՐԱՆ. (Սուրէնին)։ Իսկ քեզ ասելն աւելորդ է. դու, երկի, կուշտ ես։

ՍՈՒԻՐ. Մախոխ լինէր, ուրախութեամբ մի աման կուտէի։

ԵՐԱՆ. Ո՞րտեղ էիր ամբողջ զիշեր:

ՍՈՒԻՐ. Աստղագիտութեամբ էի զբաղուած, մամա: Այժմ աստղերն երկնքից իջել են օպերեատային թատրոն:

ԲԱԳԻՐ. Ամաչելու ես մի օր, թէ չէ: Ի՞նչ իրաւունքով ես Դիլբարեաններից ստացել բնակարանի վարձը և ծախսել:

ՍՈՒԻՐ. Յարգելի ինժեներ—տեխնոլոգ, կարծեմ, ես նոյնպէս իմ հօր հարազատ որդին եմ, ինչպէս դու:

ԲԱԳԻՐ. Դու ապականեցիր մեր ընտանիքի անունը:

ՍՈՒԻՐ. Դեռ հարց է, ես, թէ դու, պարոն գեշտամախեր: Ես կեղալ փշացնում եմ, իսկ դու պաշտում ես: Են, բերանս բաց մի անէք, թէ չէ—լեզուս չար է:

ՈՒԶ. Գիտեմ, ինչ է քո չար լեզուն: Մայրիկ, երէկ նա ինձ անուանեց աղուէսի պոչ:

ՍՈՒԻՐ. Իսկ այսօր կանուանեմ Մարքիզուհի Դալլաքեան, ինչ էիր այսօր ուսել ու փրուել կարեթում: Ուղղակի ծիծաղելի էր: Այն կարտօֆելի տոպրակ կարդանին էլ կարմիր չերքէզի է հազրել ու առաջը նստեցրել: Հերիք չէ, որ անունդ Գիւլում է, փոխել ես Ռոզալիայի, հիմայ էլ իշխանուհու շիկ ես բանեցնում: Հէէ, դալլաք էլիզբարի թոռն: Թողէք, Աստուած սիրէք, ամենքդ ինձ համար ծիծաղելի էք, բացի խղճալի մայրիկից:

ՄԱՐԳ. Դուրս է զալիս հօր սեննակից:

ՍՈՒԻՐ. Եթէ ձեր մէջ կայ մէկը, որ կարող է ինձ նախատել, ահա, սա է: (Ցոյց է տալիս Մարզարտին):

### ՏԵՍԻԼ X.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ:

ՈՒԶ. Ինչ ասել կուզի, երևելի ուկօմենդասիօն է:

ՍՈՒԻՐ. (Կծու) Յամենայն դէպս, արժէ Օթարեանի համակրանքից զրկուելուն:

ՈՒԶ. Մայրիկ, զապիր նրան: Նա ինձ վիրաւորում է: (Սուրէնին): Սուտ է, նա ինքն է զրկուել իմ համակրանքից:

ՍՈՒԻՐ. Այս, այն օրից, երբ զգացել ես, որ դու չես նրա հաւանելին: Իսկ առաջ, երբ ուսանող էր: Քիչ էր մնում նրա անունով մոմ վառէիր: Այս այնքան ճիշտ է, որքան այս, որ այս րոպէիս իմ զրպաններում մեծ օդափոխութիւն կայ: (Դաղլար): Ո՞րտեղ է հայրիկը:

ԲԱԳԻ. Թո բանը չէ:

ՍՈՒԻՐ. Հէ, թագցրէք ինձանից, բայց ես ամեն բան գիտեմ. գայլը թակարդ է ընկել, իւր թաթերն է կըծոտում:

ԲԱԳԻՐ. Կարծեմ, դու սկսում ես չափից անցնել:

ՈՒԶ. Նա հարբած է, չարժէ հետը խօսել:

ԵՐԱՆ. Գժուել է:

**ՍՈՒԻՐ.** Ե՞ն, ի՞նչ էք ամեն կողմից ապշած մտիկ անում: Ամբողջ քաղաքն է խօսում: Պէտք է բանրասանքներին վերջ տալ: Երկուսից մէկը —կամ Օթարեանը ճշմարիտն է ասում կամ զըրպարտում է: Եթէ զըրպարտում է, պէտք է պատժել: (Յազրատին) Աա, վախենում ես, դողո՞ւմ ես, դատարանով ես սպառնում:

**ԲԱԴԻՐ.** (Վիրատորուած եւ վրդովուած) Վախեկոտը նա է, որ մի կնոջ պատճառով ապտակ է ստանում և կուլ տալիս:

**ՍՈՒԻՐ.** Զայնդ կտրիր, շուն: (Յարձակուսէ վրէն):

**ԵՐԱՆ.** (Ընկնում է որդիների մէջ): Աման, Տէլ Աստուած:

**ՄԱՐԳ.** Աստուած իմ, և սա ընտանիք է...

**ԱՆԴԻՐ.** (Երեւում է իւր սենեակի դոների մէջ առանց պիջակի, ժիշտով): Այդ ի՞նչ աղմուկ է: (Նկատելով Սուրէնին): Աա, այդ գուլ ես, անառակ գաւակ: Ես քեզ կըխեղդեմ շան պէս: (Յարձակուսէ վրէն):

**ՍՈՂ.** (Որ դուքս է վազել Անդրէասի ծայնին սեղանատնից, անձեռոցիկը կըծքին փաթաթած): Հանգստացիր, Անդրէաս... (Բոնում է նրա թեւից, յետ քաշում):

**ԱՆԴԻՐ.** Կորիր... Ես քեզ ասել եմ, որ աչքիս չերեաս...

**ՄԱՐԳ.** (Բոնելով Սուրէնի թեւից): Ամօթ է, խելքի եկ: (Տանում է նրան ծախ կողմի դոներով եւ իսկոյն մենակ վերադառնում):

**ԱՆԴԻՐ.** Ահա իմ կեանքը, պառկեցի մի քիչ հանգստանալու, չըթողին: (Թոյոյ է աալիս, որ Սաղաթէլն իրան տանի իւր սենեակը): Անիծուիք դուք...

**ՈՒԶ.** (Մարգարտին): Օ՛ձ, այդ դու ես նըրան սովորեցրել:

**ՄԱՐԳ.** Ամաշիր ասածիցդ, Ռօղալիա:

**ԵՐԱՆ.** Հիմայ էլ դուք: Այս ի՞նչ տուն է, Տէր Աստուած:

**ՈՒԶ.** Սպասիր, մի օր ես քեզ հետ հաշուի կընստեմ: (Ուզում է գնալ իւր սենեակը, բայց, Օթարեանին տեսնելով, կանգ է առնում):

## Տ Ե Ս Ի Լ XI.

ԵՐԱՆՈՒՀԻ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՕԹԱՐԵԱՆ ԵՒ ՈՒԶԱԼԻՄ:

**ՕԹԱՐ.** (Ներս է մտքում նախասենեակի դոներից ուրախ դէմքով): Բարով ձեզ, մայրիկ: (Զեռը համբուրում է) Օրիորդ Ռօղալիա, բարով: (Ուզում է ձեռ տալ):

**ՈՒԶ.** (Արհամարժանքով, բայց վրդովուած): Մէնք ծանօթ չենք, պարոն:

**ՕԹԱՐ.** (Ցնցուելով): Օրիորդ, այդ ի՞նչ է նշանակում:

**ՈՒԶ.** (Կծու ծիծաղով) Սիրահարներ: (Անցնում է իւր սենեակը):

## ՏԵՍԻԼ XII.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՌՕԶԱԼԻԱՅԻ:

**ՕԹԱՐ.** (Ապշած նայելով Ռօգալիայի ետեւից, մօտենում է եւ մերենաբար սեղմում Մարգարտի ձեռը): **ՉԵՅ** իմանում, ինչնվ եմ ես արժանացել նրա ատելութեանը:

**ԵՐԱՆ.** (Որ նստել է աջ կողմի բազկաթոռներից մէկի վրայ): **ՈՀԻՆՉ**, որդի, մի նեղանար: **Այստեղ** մի փոքրիկ ընտանեկան խոռվութիւն պատահեց: Ռօգալիան վշտացած է:

**ՕԹԱՐ.** Եթէ ես որհեէ բանով մեղաւոր եմ նրա առջև, պատրաստ եմ ներումն ինդրել:

**ԵՐԱՆ.** Էհ, ուշադրութիւն մի դարձրու, երեխայ է, չի հասկանում: Նստիր, ինչպէս է մայրդ:

**ՕԹԱՐ.** (Զսպելով իրան) Շնորհակալ եմ, մայրիկ, դուք շատ բարի էք դէպի մեզ:

**ԵՐԱՆ.** Ես քեզ սիրում եմ հարազատ որդուս պէս: Ուրախ եմ, որ մեծացել ես և օրինաւոր մարդ դարձել: Լսել եմ, որ քո և իմ մարդու մէջ ինչոր վէճ է բացուել: Այդ ինձ շատ է ցաւեցնում, որդի, շատ . . .

**ՕԹԱՐ.** Մայրիկ, ինչ էլ որ պատահի, իմ սէրն ու յարգանքը դէպի ձեզ չի պակասիր: Դուք բարձր էք բոլոր վէճերից:

**ԵՐԱՆ.** Էհ, օրհնեալ լինիս, իմ ցանկութիւնն էլ այն է, որ բարեկամ մարդիկ հաշտ ապրին,

փողի համար չըմոռանան Աստծուն:

**ԶԱՐ.** (Գալիս է օրիորդների սեննեակից՝ սեղանատուն անցնելու): **Տիրուհի**, օրիորդը ձեզ խնդրում է: (Անցնում է սեղանատուն եւ իսկոյն ընմով վերադառնում է օրիորդների սեննեակը ձեռքին մի զբաֆին ջուր եւ դատարկ բաժակ):

**ԵՐԱՆ.** Էհ, էլի, երեխ, հաստերիկան սկսուեց: (Շտապով գնում է օրիորդների սեննեակը):

## ՏԵՍԻԼ XIII.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ:

**ՕԹԱՐ.** (Անհամընը մօտենալով Մարզարտին) Ի՞նչ է պատահել այստեղ, ասա:

**ՄԱՐԳԻ.** Սովորական խոռվութիւն: Սուրէնն ընդհարուեց Ռօգալիայի և Բագրատի հետ ու միմեանց վիրաւորեցին:

**ՕԹԱՐ.** Բայց ես ինչով եմ մեղաւոր, որ քոյլդ ինձ անպատուեց:

**ՄԱՐԳԻ.** Ներողամիտ եղիր, Ռօգալիան չըգիտէ իրան զապել: Ես համոզուած եմ, որ յետոյ ինքը կըզջայ: (Զարուհուն, որ այդ միջոցին, օրիորդների սեննեակից դուրս գալով զբաֆինն ու րաժակը ձեռքին, անցնում է սեղանատուն): Ի՞նչպէս է:

**ԶԱՐ.** Ոչինչ, մի քիչ լաց եղաւ, հանդարտուեց: (Հնում է սեղանատուն):

**ՄԱՐԳԻ.** Թողնենք այդ: Աւելի կարևոր գործ

կայ: Հայրս ուղարկել է քեզ կանչելու:

ՕթԱՐ. Այո: Ուր է նա:

ՄԱՐԴ. Իւր սենեակումն է, հանգստանում է: Նստիր: Եթէ կամենաս, իսկապէս ինձ ես հարկաւոր: Նստիր: (Նստում են աջ կողմի քաղկաթոռների վրայ): Դու ինձ երկու կըակի մէջ ես գցել: Ես հաւատում եմ քեզ, բայց ուղում եմ հօրս էլ հաւատալ: Դուրս բեր ինձ այս անտանելի դրութիւնից: Երկուսից մէկը—կամ դու մոլորուած ես կամ հայրս իսկապէս մի յանցաւոր է:

ՕթԱՐ. Լսիր, Մարգարիտ: Ես քանիցս քեզ ասել եմ, որ այդ դատն ինձ համար բարոյական մեծ նշանակութիւն ունի: Հաւատա, փողն արժէք չունի իմ աչքում:

ՄԱՐԴ. Ախ, միթէ ես քեզ նոր եմ ճանաչում: Բայց, հասկացիր, քո և իմ հօր փոխադարձ թշնամութիւնը կարող է ինձ կործանել, ահա ինչիցն եմ վախենում:

ՕթԱՐ. Սիրելի, անզին Մարգարիտ, մի պըդտորիր հոգիդ մոռայլ մտքերով: Ես զիտեմ, որ դու պաշտում ես հօրդ, բայց ես այնքան նրա դէմ չեմ զինուած, որքան եղօրդ դէմ:

ՄԱՐԴ. Բազրատը բարեսիրտ չէ, ես զիտեմ այդ:

ՕթԱՐ. Նա ինձ արհամարհել է ընկերական շրջաններում: Նա ինձ ստորացըրել է տեղի և անտեղի: Նա ինձ քանի քանի անգամ անուանել է ձրիակեր: Ես ուղում եմ ազատուել մուրացկանի

վիրաւորական գրութիւնից: Ուզում եմ արժանանալ քո սիրոյն: Միթէ չես հասկանում իմ պահանջի իսկական նպատակը:

ՄԱՐԴ. Հասկանում եմ, շատ լաւ եմ հասկանում: Բայց ե՞ս ինչ անեմ, ե՞ս: Դու զիտես, որ ես քեզ սիրում եմ անսահման, բայց չէ որ սիրում եմ և հօրս: Այսօր նա ինձ այնպիսի խօսքեր ասաց, որ ամօթից պատրաստ էի գետինը մտնել: Զեմ կարծում, որ նա այդ խօսքերն ասէր, եթէ իսկապէս իրան մեղաւոր զգար: Նա փաստեր է պահանջում և կամենում է, որ ես ստուգեմ այդ փաստերը:

ՕթԱՐ. Եւ դու ուզում ես ստուգել: Հասկանում եմ: Քո մէջ կուռւմ են երկու հաւատար զգացումներ—հաւատը դէպի հայրդ և հաւատը դէպի ինձ:

ՄԱՐԴ. Ահա հէնց այդ է ձիշտը, ինչ լաւ զգացել ես իմ դրութիւնը:

ՕթԱՐ. Շատ լաւ, ես քեզ դուրս կըբերեմ այդ երկդիմի դրութիւնից:

ՄԱՐԴ. Այո, այո, դուրս բեր:

ՕթԱՐ. Կըներկայացնեմ քեզ իմ բոլոր ապացոյցները:

ՄԱՐԴ. Ես հէնց այդ մասին էի ուղում քեզ իմնդրել:

ՕթԱՐ. Թողլ այդպէս լինի: Ինձ համար քեզանից աւելի մեծ դատաւոր չի կարող լինել: Բաւական է, որ դու, միայն դու, ասես եղբօրդ, թէ ես ձրիակեր չեմ եղել, և ես պատրաստ եմ

հրաժարուել իմ ժառանգութիւնից: Ես կարող էի դատարանի դիմել, բայց այդ չեմ անում միայն քո պատճառով: Ուրեմն լու եղիբ մեր դատաւորը:

**ՄԱՐԴ.** Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ: Եւ հաւատա, որ ես կը լինիմ արդար դատաւոր:

**ՕԹԱՐ.** (Թեթև ցնցումով): Ահ, հէնց այդ է, որ ինձ սարսափեցնում է:

**ՄԱՐԴ.** Ինչու...

**ՕԹԱՐ.** Մարգարիտ, տնւր ինձ խօսք, որ երբ ճշմարտութիւնը կը պարզուի քեզ համար—չես ընկճուիլ նրա դասնութիւնից:

**ՄԱՐԴ.** Մի առաջարկիր ինձ ոչ մի պայման: Դու ինքդ ես ինձ սովորեցրել ճշմարտութիւնն ամեն բանից գերադասել: Բեր այդ թըղթերը, ես ուզում եմ վերջին կասկածը հեռացնել իմ սրտից: Եւ չեմ թաղցնում, որ ում կողմ ես լինի արդարութիւնը—ինձ է կործանելու, որով հետև անդունդը ուր որ բացուի—իս և հօրս մէջ թէ իմ և քո մէջ—ես եմ գլորուելու այնտեղ: Բեր այդ թղթերը, ես պահանջում եմ սիրող կնոջ իրաւունքով:

**ՕԹԱՐ:** (Մինչ Մարգարիտն արտասանում է իր խօսքերը, Օթարեանը տանջում է եւ կոտս իր հետ: Երբ Մարգարիտը վերջացնում է, լոռութիւն): Շատ լաւ, ես կը բերեմ: (Վեր է կենում):

**ՄԱՐԴ.** Հէնց այսօր:

**ՕԹԱՐ.** Մի քանի ըստէից յետոյ ես այստեղ կը լինիմ: (Գնում է նախասենեակի դոներով):

**ՄԱՐԴ.** (Ուղեկցում է նրան մինչեւ դոները, ապա գալիս է քեմի կննտքինը):

**ՏԵՍԻԼ.** XIV.

**ՄԱՐԴԱՐԻՏ ԵՒ ՍՈՒՐԷՆ:**

**ՍՈՒՐ.** (Ներս է մտնում ծախի դոներից): Զըկարողացայ քնել: Հանգիստ չեմ: Մարգու հոգեկան տրամադրութիւնը զարմանալի կատ ունի գրպանի դրութեան հետ: Երբ այս անիծուածը դատարկ է, ինչ ուզում էք ասէք, քնել չեմ կարողանում: Այս, սիրելի Մարգարիտ, այս մինոր հոգեբանական գիւտ է: Հետեւաբար, չես կարող, արդեօք, ինձ հաշտեցնել այն բթամիտ Մօրփէոսի հետ:

**ՄԱՐԴ.** Ես փող չունիմ:

**ՍՈՒՐ.** Դու, կարծեմ, հայրիկից ամսական 300 ուութիւն ես ստանում:

**ՄԱՐԴ.** Ես վաղուց եմ դադարել հայրիկից փող վերցնել:

**ՍՈՒՐ.** Ահա թէ ինչ: Ատմւամ ես փողը, փիլիսոփայ ես:

**ՄԱՐԴ.** Ինչիս է հարկաւոր փողը, երբ տանն ամեն բան պատրաստ կայ:

**ՍՈՒՐ.** Այդ էլ ճիշտ է: Բայց ինձ հարկաւոր է, ախ, շատ է հարկաւոր: Առանց փողի, ես համարեա առանց ոտների եմ: Ես էլ եմ ատում փողը և միշտ աշխատում եմ նրանից բաժանուել:

Երբ գրպանս մի քանի գուշներ են մտնում, մէկէլ  
տեսար մոծակների պէս կծոտեցին ինձ: Ես, ես  
էլ շտապում եմ նրանց բաց թողնել: Բայց, այ-  
նու ամենայնիւ, առանց փողի տխուր է: Այս,  
Մարգարիտ, կեանքը շատ տխմար բան է: (Քիչ  
լոռում է): Տխուր է, շատ տխուր: Ես ուղղակի  
ձանձրացել եմ կեանքից:

**ՄԱՐԳԻ.** (Ծրջելով, թախծալի յանդիմանու-  
թեամբ): Թաման ու երեք տարեկան հասակում:

**ՄՈՒՐԻ.** Թի՞չ է: **ՄԵՐ** ժամանակում մարդիկ  
շատ են տեսնում, շատ են զգում և շուտ ձանձ-  
րանում: Ազնիւ խօսք, հիմայ ես երբեմն ինքս  
ինձանից վախենում եմ: (Հանում է գրաւանից  
ոչվօյլվերը): Այ, տես, մի հարուած, և մուրի-  
կօնն անցայ:

**ՄԱՐԳԻ.** Թոնդ, իմարութիւններ մի արա, կա-  
րող է տրաքել:

**ՄՈՒՐԻ.** Ոչ, այս հեշտ տրաքողներից չէ: (Ցոյց  
է տալիս): Այ, այսպէս է տրաքում. պէտք է այս  
յետ քաշել, մատով սեղմել, և պատրաստ է:

**ՄԱՐԳԻ.** Տնւր ինձ, մի պահիր մօտղ, վտան-  
գաւոր է.

**ՄՈՒՐԻ.** Ես հէնց ինքս ուզում էի դէն ձգել:  
(Տալիս է) Վերցրու, հրաժարիմք ի սատանայէ:  
(Լոռութիւն) Ուրեմն, չունիս:

**ՄԱՐԳԻ.** Չունիմ: (Ոչվօյլվերը նայում է քիչ  
եւ դնում սեղանի վրայ):

**ՄՈՒՐԻ.** (Լոռութիւն): Եւ ոչ գոնէ յիսուն  
ուուրլի:

**ՄԱՐԳԻ.** (Գլխով բացասական նշան է ա-  
նում):

**ՄՈՒՐԻ.** Ցաւալի է, շատ ցաւալի: Կընշանակէ՝  
այսօր Առլօվային չըպիտի տեսնեմ: Այդ անկա-  
րելի է, ամօթ է, կասի հայի տղան ծախսից փա-  
խաւ և էլի կըմօտենայ Աբուլօվին: (Նստում է  
ձախ կողմի քաջկաթոռներից մէկի վրայ, մտա-  
ծում: Լոռութիւն: Յանկարծ ձեռը զարկում է ճա-  
կատին): Է՛վրիկա, Էղիսսօն եմ, Էղիսսօն: Ո՞ր-  
տեղ է Ռօգալիան:

ՄԱՐԳԻ. Իւր սենեակում:

**ՄՈՒՐԻ.** Նա փող կունենայ (Դիմում է ղէպի  
խորքի ձախ ղոնները):

**ՄԱՐԳԻ.** Այդքան վիրաւորելուց յետոյ ուզում  
ես դիմել նրան:

**ՄՈՒՐԻ.** (Կւնգ է առնում): Աս, այդ գատարկ  
բան է: Նա զիտէ, որ իմ սիրտը բարի է, լեզուս  
է միայն չար: Կըհաշտուենք, դժուար չէ: Միքիչ  
կըշոյեմ, կըգովեմ գեղեցկութիւնը, իսկոյն կը-  
կակղի:

Мрачна душа моя,

Рвется она въ даль... (Երգելով անցնում է  
օրիորդների սենեակը):

## ՏԵՍԻԼ Xv.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ԱՆԴՐԵԱՆ:

**ՕԹԱՐ.** (Ներս է մանում նախասեննեակից, այս անգամ վերարկուով): Ահա, սիրելիս, բոլորը: (Ժալիս է մի ծրապ): Այստեղ է իմ պատիւը, ինքնասիրութիւնն և ամբողջ կարողութիւնը:

**ՄԱՐԳ.** Շնորհակալ եմ, դու մեծ հաւատ ես ընծայում ինձ:

**ՕԹԱՐ.** Այս աեսակ հաւատը քո գործնական եղբայրն անշուշտ կրհամարի յիմարութիւն: Սակայն այդ ինձ համար նշանակութիւն չունի: Ես սիրում եմ քեզ, ուրեմն և՛ պէտք է հաւատամ:

**ՄԱՐԳ.** Որքան բարի ես դու և վեհանձն, Աբտաշէս:

**ՕԹԱՐ.** Միայն քո սիրոյ համար: (Համբուռուած է):

**ՄԱՐԳ.** Վաղը կամ միւս օրը դու բոլորը յետ կըստանաս, թող իմ խօսքը քեզ համար գրաւական լինի:

**ՕԹԱՐ.** Բաւական է այդքանը: Ցըտեսութիւն:

**ՄԱՐԳ.** Ցըտեսութիւն: (Ուղեկցում է նըանմինչեւ նախասեննեակի ղոնեսը):

**ԱՆԴՐ.** (Երեսում է իւր սեննեակի ղոնեսը մէջ):

**ՄԱՐԳ.** (Վերադառնում է զեմի կննտքոնը եւ ուզում է զնալ իւր սեննեակը):

**ԱՆԴՐ.** (Իզր թէ օթարեանին չի նկատել): Այն ո՞վ էր:

**ՄԱՐԳ.** Ահա, հայրիկ, ամեն ինչ այստեղ է: Այժմ ես կիմանամ ով է ձեզանից արդարը և ով է մեղաւորը:

**ԱՆԴՐ.** Ապրիս, զաւակս: Քննիր և տես: (Համբուռում է ճակատը):

Գնում են իւրաքանչիւրն իւր սննեակը:

Վարագոյք:

տիպում եմ ու յուզում և միշտ այս եղանակը յիշում:

**ԲԱԳԻՐ.** Եւ նուագում ես պօէտիքական մթութեան մէջ, որպէս իդէալական սիրահար: Բայց ինձ ներիր, ես ատում եմ խաւարը: (Ծուռ է տալիս սեղանատան դռների մօտ էլէքտրական թելի կոճակը):

Առաստաղից քաշ արած ջահը տարածում է պայծառ լոյս:

**ՄԱՐԴԻ.** Բաւական է: (Դադարում է նուագել եւ դաշնամուրի կափարիչը ֆած զցում: Նըկատում է Բազրատի պատրաստովինը): Այդ ժւը ես պատրաստում:

**ԲԱԳԻՐ.** (Կանգնելով հայելու առջև, որ փողկապն ուղղի): Տեխնօգների երեկոյթը: Գնա, հագնուիր, քեզ էլ տանեմ: Որօգալիան պատրաստում է: Դու այնտեղ կըտեսնես տեղական ինտելիգենցիայի ընտիր մասը:

**ՄԱՐԴԻ.** Ինչո՞ւ ընտիր:

**ԲԱԳԻՐ.** Երեկոյթում միայն ինժեներներն են լինելու: Դու այնտեղ չես տեսնիլ ոչ պօրտֆէյլի և ոչ ուղարկու հերոսներին, այսինքն՝ ոչ իրաւաբաններին և ոչ բժիշկներին:

**ՄԱՐԴԻ.** Ինչպէս երեռում է, շատ մեծ կարծիք ունիս քո մամնազիտութեան մասին:

**ԲԱԳԻՐ.** Եռանդի, խելքի և ժամանակիս խեկական ներկայացուցիչներն ինժեներներն են: Կըզան թէ չէ:

## ԱՐԱՐՈՒՅՇ ԵՐՐՈՐԴ

Նոյն տեսաբանը: Երեկոյ է: Վարագոյրը բարձրանալիս բեմում տիրում է կիսախաւար: Բոլոր դռները ծածկուած են, միայն նախասենեակի դռների մի թերթաց է: Այնտեղ լուսոյ մի շերտ, թեք գծով անցնելով բեմով, ընկել է դաշնամուրի վրայ, որի քով Մարգարիտը նստած նուագում է ինչոր թախծալի եղանակ: Նրա ամբողջ մարմինը մթնումն է, միայն գլուխն է երեռում լուսոյ շերտի մէջ:

Մի առ ժամանակ բեմի վրայ, բացի Մարգարտից, ոչ ոք չէ կայ: Հեռու լսում է էլէքտրական զանգակի հնչիւն: Սեղանատան դռներից դուրս է գալիս Զարուհին և անցնում է օրիորդների սենեակները:

ՏԵՍԻԼ I.

ՄԱՐԴԱՐԻՑ ԵՒ ԲԱԳԻՐԱՏ:

**ԲԱԳԻՐ.** (Դուքս է զալիս ձախ կողմի դռներից ֆրակով եւ կրծքին տեխնօգիական ծնմարանի նշան, փողկապը կապելով): Միշտ մի և նոյն տիպուր եղանակը օրուայ մի և նոյն միջոցին:

**ՄԱՐԴԻ.** (Նուագելով) Ասում են, ժամերն իրանց տրամադրութիւնն ունին: Երեկոներն ես

ՄԱՐԴ. Ես տրամադրութիւն չունիմ երեկոյթ գնալու:

ԲԱԳԻ. Զըսիրեցի սկզբից ևել այդ խօսքը— տրամադրութիւն: Մարդուս իրանիցն է կախուած այսպէս կամ այնպէս տրամադրել իրան: Ահ, այս անիծուածը չի կապում:

ՄԱՐԴ. (Դօսենում է, օգնում փողկապը կապելու): Քեզ համար հետ է այդ ասել: Դու հաշտուում ես կեանքի բոլոր հանգամանքների հետ:

ԲԱԳԻ. Եթէ, ի հարկէ, հանգամանքներն արժանի չեն դիմադրութեան: Հակառակ դէպքում զիտեմ առողջ գատողութեամբ կոռուել նրանց դէմ: (Մարզարիսն ուղղել է Բագրատի փողկապը): Շնորհակալ եմ: (Նայելով նղոնզներին) Գիտես, սիրելիս, մեր ժամանակի միակ գերիշանը բանականութիւնն է: Այս տեսակէտից ես չեմ կարող արդարացնել վերջին ժամանակուայ քո տիրութիւնը, որ արդէն սկսել է բողոքի ձև ստանալ:

ՄԱՐԴ. Կըկամենայի ես էլ ուրախ լինել քրոջ պէս, թռչուուել, ինչպէս անհոգ թռչուն: Կըկամենայի ոչնչի մասին չըմտածել, բայց իմ անձնական զուարձութիւններից: Բայց, ինչ արած, չեմ կարող: (Հառաշելով, արմոնզները յենում է դաշնամուրին):

ԲԱԳԻ. (Հեգնաբար): Սիրահարուած ես, տանջուում ես մի անզուգական երիտասարդի, մի անման իդէալիստի համար: (Լուրջ): Բաւական է, Մարզարիտ: Ես չունիմ իրաւունք քեզ յան-

դիմանելու, բայց այլ ես լոել չեմ կարող: Բաւական է: Թոնի երեխայութիւնդ: Դու չափահաս օրիորդ ես, պէտք է հասկանաս, որ չունիս իրաւունք սիրելու քո հարազատ ծնողի զրպարտչին:

ՄԱՐԴ. (Դլուխը բարձրացնելով) Իսկ եթէ նա զրպարտիչ չէ, այն ժամանակ:

ԲԱԳԻ. Դու համոզուած ես:

ՄԱՐԴ. (Դրականապէս եւ եռանդով) Աւելի քան համոզուած եմ:

ԲԱԳԻ. Քոյք, ինձ թւում է, որ քո ուղեղը սկսում է խանգարուել: Տիմար սիրոյ զգացումը հարբեցրել է քեզ: Եթէ այդպէս շարունակես, ես քեզ էլ կատեմ, ինչպէս ատում եմ նրան:

ՄԱՐԴ. Ինձ համար այսուհետև միենոյնն է: Ես ունիմ իմ ձեռքուում փաստեր, որոնք քարերին անգամ կարող են համոզել, թէ մեր հայրը կողոպտել է մի որբ ընտանիք և կողոպտել է ամենայն անզթութեամբ:

ԲԱԳԻ. (Շփոթուած եւ, միենայն ժամանակ, վրդովուած) Մարզարիտ:

ՄԱՐԴ. Հայրիկի ցանկութեամբ ես Օթարեանից պահանջեցի նրա գոկումենտները: Նա տուեց: Բազրատ, բոլորը, ինչոր ասում է նա, զուտ ճշմարտութիւն է: Ահ, այս միտքը կարող է ինձ խելքից հանել: (Ընկճուած անցուղարօն է անում: Հռութիւն):

ԲԱԳԻ. (Շփոթուած, շըզիտէ ինչ ասէ): Դու ինձ բոլորովին շփոթեցրիր: Ո՞րտեղ են այժմ այդ գրաւոր ապացոյցները:

ՄԱՐԴ. Այնտեղ, իմ սենեակում, զբասեղանիս մէջ:

ԲԱՐԴ. Խօսէլ ես հայրիկի հետ:

ՄԱՐԴ. Այո:

ԲԱՐԴ. Ի՞նչ է ասումնա այդ փաստերի դէմ: ՄԱՐԴ. Ի՞նչ կարող է ասել մի յանցաւոր, որին ներկայացնում են իւր յանցանքի լուսանկարը: Նա շփոթուեց, կարմրեց, կապտեց, բայց հերքել, ի հարկէ, չըկարողացաւ: Գնա պարահանդէս, առաւօտը, եթէ կամենաս, կարող ես բոլորը կարդալ:

ԲԱՐԴ. Աս, ի՞նչ պարահանդէս: Ես ամենինչ մոռացայ: Ուրեմն ճիշտ է, որ մեզ սպառնում է մնանկութիւն:

ՄԱՐԴ. Ախ, քեզ մնանկութիւնն է անհանգստացնում, իսկ ինձ տանջում է անպատճութիւնը: Այժմ ամեն ինչ կախուած է Օթարեանի կամքից:

ԲԱՐԴ. Նա կըկամենայ թէ անպատճել և թէ մնանկացնել մեզ: Նա սոսկալի ոխ ունի իմ դէմ: Ցայց տուր ինձ: Ես ուզում եմ իմ աչքով տեսնել այդ թղթերը և անձամբ հաւասարիանալ:

ՄԱՐԴ. (Խորհրդաւոր եւ նոսնդով): Բայց զգայշ նրանց ապահովութիւնը պատուիս եմ երաշխաւորել:

ԲԱՐԴ. (Վելատօրուած) Ես աւազակ չեմ, Մարդարիտ:

ՄԱՐԴ. Գնանք: Տես և համոզուիր, թէ ումի

փողերով ես ուզում մեծ-մեծ ձեռնարկութիւններ սկսել:

Գնում են խորքի ծախ դոներով, այն է՝ օթիորդների սենեակները:

## ՏԵՍԻԼ II.

ԱՆԴՐԵԱՍ ԵՒ ՍԱՂԱԹէԼ:

Գալիս են նախասննեակից:

ԱՆԴՐ. Նա աղջիկ չէ ինձ համար, դատաւոր է: Ամբողջ գիշեր աչքերս չեմ փակել, ամբողջ օրը տանջուել եմ: Ես կարծում էի, որ այդ թըղթերը կորած են: Էհ, սոսւմ էի, կնիկ է, խելքը բան չի կարիլ: Քիչ է պատահել, որ կանայք իրանց մարդուց մնացած հարկաւոր թղթերն այրել են: Բայց այդ մէկը յիմարներից չի եղել պահել է, որ այսօր որդին զլխիս փորձանք բերի: Նա չի խնդրում, Սաղաթէլ, այլ, հոգեհանի պէս, պահանջում է, որ վիզս ծռեմ այդ լակոտի առջե, մեղայ գամ և տամ նրան կարողութեանս կէսը:

ՍԱՂ. Դու ինքով աչքովդ տեսամ այդ թըղթերը:

ԱՆԴՐ. Տեսայ, բաս չէ: Նա ցոյց տուեց մօր մօտ: Կանգնեց հեռուում, մէկ-մէկ կարդաց, յիշեցրեց բոլորը և յետոյ իսկոյն փակեց իւր զրասեղանի մէջ:

ՍԱՂ. Ի հարկէ, մայրն էլ պակասը լրացրեց,  
պատմելով աղջկան իւր գիտեցածը:

ԱՆԴՐ. Օօ, քոյրդ Աստծու պատիժն է իմ  
զլիխն: Ինձ պաշտպանելու տեղ, աւելի խայտա-  
ռակեց աղջկայ մօտ: Ես կատաղեցի, յարձակուե-  
ցի վրէն, որ տեղն ու տեղը խեղդեմ նրան: Բա-  
րելաղդաբար, Մարգարիտը ժամանակին մէջ ըն-  
կաւ, չըթողեց: Նա փաթաթուեց մօր վզին: Պէտք  
է տեսնէիր, ինչպէս էր լաց լինում: Դիակիս վրայ  
էլ նա այնքան արտասուք չի թափիլ: Եւ յետոյ,  
երբ ուշքի եկաւ, ինչ խօսքեր, Տէր Աստուած,  
ինչ լեզու: Հայրիկ, ասում է, մոլորուել կարելի  
է, բայց պէտք է զղջալ, չըզղջան աւելի մեծ ան-  
ազնւութիւն է: Ումի՞ց է սովորել այդ բաները:

ԱԱՂ. Ումից: Ի հարկէ, հէնց այդ լակոտից:  
Դեռ Աստուած գիտէ էլի ինչեր սովորեցրած կը-  
լինի:

ԱՆԴՐ. Փորձեցի ինձ արդարացնել: Ասացի,  
ընկերս մեռնելիս տափերը գին չունէին, եկա-  
մուտ չէին բերում, ինչ կարող էի տալ որբերին:  
Ասացի, յետոյ են թանգացել, ի հարկէ, իմ բաղ-  
դից, որովհետեւ եթէ մեռելը բաղդ ունենար—չէր  
մեռնիլ: Բայց ես խօմ իմ ընկերոջ որբերին չեմ  
մոռացել: Ես օգնել եմ, հիմայ էլ ուզում եմ օգ-  
նել, միշտ կօգնեմ, ձեռք վերցրու: Ոչ, ասում է,  
դու պարտաւոր ես տալ նրանց բոլորը, ինչոր  
համոււմ է օրէնքով: Լսում ես, Մաղաթէլ, բոլորը  
տալ: Կարծում է, այդ կարելի բան է, կարծում  
է, որ դա փող չէ, թէկուզ գողացած փող: Բայց

պիողը դեռ մի կողմ: Իսկ պատի՞ւս: Ի՞նչ կըմտա-  
ծեն մարդիկ: (Անց ու դարձ է անում):

ԱԱՂ. Ինչ պիտի մտածեն: Կասեն, որ էլիզ-  
բարօվը գող էր և այժմ, դատաստանից վախե-  
նալով, գողացածը յետ է տալիս: Արի ու այն ժա-  
մանակ երևացիր հասարակութեան մէջ: Աչքերդ  
թքով կըհանեն: Իսկ Ես... ես քեզ կըհամարեմ  
յիմարի մէկը...

ԱՆԴՐ. Մնում էր մի բան, այն էլ փորձեցի:  
Ասացի. աղջի, սիրում ես այդ երիտասարդին, նա  
էլ քեզ է սիրում: Էլ զրանից լաւ բան: Եկ ձեզ  
պսակեմ: Լաւ օժիտ կըտամ, տուն ու տեղ կը-  
սարքեմ: Տնուր ինձ թղթերը:

ԱԱՂ. Հըը՝, զրան ինչ ասաց:

ԱՆԴՐ. Ոչ, հայրիկ, ասում է, ես քեզանից  
պիողի օժիտ չեմ ուզում, այլ պատուի օժիտ: Քա-  
նի որ դու ընկերոջդ գերեզմանի առջև մեղաւոր  
ես, ես չեմ կարող նրա որդու հետ բաղդաւո-  
րուել: Նա ամեն բռպէ իրաւունք կունենայ երե-  
սիս ասելու. «հայրդ կողոպտել է հօրս»: Այդ նա-  
խատինքն ես տանել չեմ կարող իմ ամուսնուց:

ԱԱՂ. Լեզուին նայիր, լեզուին: Փիլիսոփայի  
պէս է խօսում:

ԱՆԴՐ. Ախ, Մարգարիտն իւր պապի ժա-  
ռանդն է, քո հօր կտորը: Երէկ, երբ նա խօսում  
էր, ինձ թւում էր, որ նրա ետևում, պատի տակ,  
կանգնած է Տէր-Սիմօնը Աւետարանի խօսքերը  
բերանում:

ԱԱՂ. Բայց, ախար, հայրս հոգևորական էր,

պարտաւոր էր ճշմարտութիւն քարոզել, իսկ մենք աշխարհականներ ենք, մեր բանն ուրիշ է: Ինչու չեն հասկանում այդ կանացը:

ԱՆԴԻ. Հիմայ ճանապարհ ցոյց տուր ինձ, Սաղաթէլ, ինչ անեմ, ինչպէս ազատուեմ այդ լակոտից:

ԱԱԴ. Ինչ պիտի անես: Ինքդ վաղուց ես գտել ճանապարհը: Արա այն, ինչոք վճռել ես անելու:

ԱՆԴԻ. Այս, պէտք է անպատճառ անել, ուրիշ ելք չըկայ: Ես հէնց դրա համար աշխատեցի, որ այդ թղթերը Մարդարափի ձեռքն անցնին:

ԱԱԴ. Բայց պէտք է անել շուտով, հէնց այս գիշեր, վաղն ուշ կըլինի:

ԱՆԴԻ. Սուս, ոտների ձայն եմ լսում: Գալիս են: Գնանք իմ սենեակը, այստեղ կըմտածենք, ինչպէս գլուխ բերենք այդ բանը:

Գնում են աջ կողմի առաջին դռներով:

### ՏԵՐԻԼ III.

ՄԱՐԴԱՐԻՑ, ԲԱԳԻՐԱՅ ԵՒ ՌՈԶԱԼԻԱ:

Դուքս են զալիս միաժամանակ օրիորդների սենակից:

ԲԱԳԻՐ. (Յուզուելէ): Բոլոր կասկածներս փառատուեցին, վտանգն անխուսափելի է:

ՌՈԶ. (Հազնուել է պարահանդիսի) համար:

Ձեռնոցներն է հազնում): Ես էլ ասում եմ, քոյրս երէկ ինչ թղթեր էր քրքրում և ինձ տեսնելիս թագցնում: Ինչ ասել կուզի, երեկի սիրահարական նամակներ են—պայմանագրեր, առևտրական թղթեր, ֆի: (Մօտենում է հայելուն և ղիտում իրան):

ԲԱԳԻՐ. (Մտազրադ, ձեռները մէջքին ղրած, անցել է մեմի աջ կողմը): Ասա ինձ, Մարդարիս, կարո՞ղ ես այդ թղթերը մի քանի օր պահել մօտդ:

ՄԱՐԴ. Ոչ:

ԲԱԳԻՐ. Ինչու:

ՄԱՐԴ. Ես խօսք եմ տուել վաղը վերադարձնել նրան:

ԲԱԳԻՐ. Ես կարծում եմ, նախ քան վերադարձնելը, հարկաւոր է մի լաւ մտածել:

ՄԱՐԴ. Ի՞նչ ես ուզում ինձանից, պարզ ասա:

ԲԱԳԻՐ. (Տատանուելով) Ինձ թւում է, որ խելացի բան չէ մի այդպիսի զէնք վերադարձնել մեր հակառակորդին:

ՄԱՐԴ. Ի՞նչ, ուրեմն, դու պահանջում ես, որ ես...

ԲԱԳԻՐ. (Սառն) Որ դու այդ թղթերը չըտաս Օթարեանին:

ՄԱՐԴ. (Վրդովուելով) Ուրեմն դժւ... Ամաշեր կըծքիդ նշանից, Բագրատ:

ԲԱԳԻՐ. (Դրգուուելով) Են, թուղ այդ դատարկ Փռազները, ի սէր Աստծու: Ես գիտեմ, որ այդ պարոնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվե-

ըոյ մտքեր: Բայց մենք ասպետների դարում չենք ապրում:

**ՄԱՐԴ.** (Դառն հեղնութեամբ) Կարծես, մեծ ասպետութիւն է տարրական ազնւութիւն, հասարակ մարդկային խիղճ ունենալը:

**ԲԱՐԴ.** Խղճի և ազնւութեան մասին ամեն մարդ իւր զաղափարն ունի: Էականն այն է, որ եթէ այդ թղթերն անցնին 0թարեանի ձեռքը, ես կըզրկուիմ իմ գործարանից: Իսկ այդ կընշանակէ ծովը նետել իմ բոլոր ծրագրները: Դու շատ լաւ գիտես, որ ես այդ գործարանով հիմք եմ դնում իմ ապագայ ոյժին, ազգեցութեանը և բաղդաւորութեանը: Ես ուզում եմ լինել հզօր Փինանսական սիւն, մէկն այն հսկաներից, որոնց ձեռքումն է մեր ժամանակի ամենամեծ ոյժը — կապիտալը:

**ՈՒԶ.** Մի մարդ, որ կարող է հաղարաւոր անգործների համար աշխատանքի դուռ բաց անել և խեղճ ընտանիքներ կերակրել: Ես քեզ հասկանում եմ, Բագրատ:

**ՄԱՐԴ.** Եւ այդ բոլորը ուրիշի փողերնիվ:

**ԲԱՐԴ.** Զաւակները պատասխանատու չեն իւրանց հայրերի փոխարէն: Մեր ծնողների անցեալը մեզ համար մեռած պատմութիւն է:

**ՄԱՐԴ.** Որը սակայն այսօր յարութիւն է տոել և արատաւորում է մեր ամբողջ գերդաստանը:

**ԲԱՐԴ.** Պէտք է, ուրեմն, խեղճել այն և նորից յանձնել զերեզմանին:

**ՄԱՐԴ.** (Խորին դառնութեամբ) Բագրատ:

**ԲԱՐԴ.** Ահ, ում հայրը չի զրկել մէկին կամ միւսին, այս կամ այն կերպ: Վերջապէս, հէնց նորերից որ մէկը չի զրկում կամ հարստահարում: Տարբերութիւնն այն է, որ հսերը զրկում էին հին ձեռվ, նորերը զրկում են նոր ձեռվ: Մարդարիտ, ներկայ դէպքում պէտք է լինել աւելի խելացի, քան զգայուն:

**ՄԱՐԴ.** (Խորին սրտմտութեամբ) Սյահնքն աւելի շահամոլ, քան ազնիւ: Թոյլ տալ ծնողին կողոպտել մի որը ընտանիք և փողոցները գցել: Մասնակից լինել նրա ծանր յանցանքին, շարունակել նրա սկսածը: Եւ ինչնւ: Որպէս զի ապրենք այս փառայեղ պալատնւմ, ոսկէզօծ կահերաբառ մէջ, զուգուինք-զարդարուինք, բալերու պարահանգէններ այցելենք: Ոչ ոչ, ես չեմ կարող և չեմ ուզում անել այդ: (Անցնում է դէպի ձախ):

**ՈՒԶ.** (Ատելութեամբ եւ գրգռուած) Տա տա, տա տա, ինչ քաջն ես եղել: Ես չըգիտէի: Դու կատարեալ հերոսուհի ես:

**ԲԱՐԴ.** (Զգալով, որ շատ յափշտակուեց): Մարդարիտ, ես յարգում եմ քո գաղափարները, բայց մի՛ յափշտակուիր: Մտածիր, ինչ սթնուլուտումն ենք ապրում: Մեր հասարակութեան մէջ քո արածը ոչ ոքին չի հիացնիլ, ընդհակառակը, շատերը քեզ կըհամարեն յլումար:

**ՄԱՐԴ.** Ես հասարակութեան համար չեմ անում, այլ իմ խղճի համար:

**ՈՒԶ.** (Կատաղի) Զգւում եմ այդ տեսակ

Փռագեօրներից: (Բազրատին) Զուր ես աշխատում նրան բան հասկացնել: Նրա վրայ միայն ոյժը կարող է ազդել: Խլիք նրա ձեռքից այդ թղթերը, պրծաւ գնաց:

ԵՐԱՆ. Երեսում է սեղանատան դռների մէջ:

ԲԱԳԻՐ. (Նոյն մեղմ տօնով) Գոնէ վաղը մի յանձնիր: Սպասիր մի քանի օր, միասին կը խորհրդակցենք: Դու խելօք ես, չես կամենալ մեզ մեր թշնամու ձեռքը գցել:

ՄԱՐԳ. Ահա մեր մայրը, թողէք, տեսնենք, նա ինչ է ասում:

#### ՏԵՍԻԼ IV.

ՆՈՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՅԵՏՈՅ ԶԱՐՈՒՀԻ:

ԵՐԱՆ. (Առաջ է գալիս, ճեռները ծոցը որած, տխուր): Այսքան տարի այդ մարդու արարքները թագցրի երեխաներիցս, Աստծուն է յայտնի ինչ տանջանքներով: Գիշեր-ցերեկ մտածել եմ այդ բանի մասին: Ժամանակ-ժամանակ բերան եմ բաց արել խօսելու, խօսքս կտրել է գոռոցով: Լոել եմ ու կրակս ներսումս պահել:

ՄԱՐԳ. Լսում էք:

ԲԱԳԻՐ. Մայրիկ, դու շատ ես լարուած հայրիկի դէմ:

ԵՐԱՆ. (Սրտմտութնամը) Սուս, դու ոչինչ ըզփիտես: Հայրդ իւր հոգին ծախել է Մաթայէլին: Երէկ գիշեր երազումս տեսայ հանգուցեա-

լին: Կանգնած էր մեր գոների մօտ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշուած: Նա ասում էր. «Երանուհի, դու խօմ զիտես, որ մենք ընկերներ ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստութիւնը, ինչու ես թողնում, որ նա երեխաներիս զրկի մի կտոր հացից:» Ախ, շատ եմ ուզեցել չըթողնել, բայց ով է ինձ լսել: Բագրատ, Բագրատ, իննը տարի է այդ մարդը գերեզմանից անիծում է մեղ:

ԲԱԳԻՐ. (Գրգոռած) Մեռեների անէծքի վրայ երկու արշին հող է ծանրանում:

ԵՐԱՆ. Ախ, մի խօսիր եղօրս պէս, մեղք է: Մենք ամենքս պարտական ենք Ահեղ Դատաստանի առաջ: Ես էլ եմ պատասխանատու, որ չեմ կարողացել հօրդ հեռացնել չար ճանապարհից: Ես գողում եմ սարսափից:

ՄԱՐԳ. (Հաշիւ կարողանալով յուզմունքը զսպել): Ոչինչ, մայրիկ, հանգստացիր: Հայրիկը բարի է, խելօք է, նա իւր սիմալը կուղիի:

ԵՐԱՆ. (Չեռով յուսահատական շարժումն է անում): Էէհ, որ մէկը...

ԶԱՐ. (Ներս է մտնում սեղանատնից) Կլուքից ձեզ տելեփօնով ինդրում են:

ԲԱԳԻՐ. Ահ, այդ երեկոյթն էլ: Ես մոռացյ, որ կարգադրիչ եմ:

ՌՈԶ. Դէ, գնանք, շատ ուշացանք:

ԲԱԳԻՐ. (Շոտենում է Մարգարտին): Յոյս ունիմ, որ մինչև առաւօտ միտքդ կըփոխես:

ՄԱՐԳ. (Զափազանց ազդուել է մօր խօս-

քերից, զգացուած փաթաթում է նրա պարանոցին): **Մայրիկ**, ինչ լաւ սիրտ ունիս:

**ԵՐԱՆ.** (Շոյելով նրա զլուխը) Արի, աղջիկս, դու ես իմ միակ միսիթարութիւնը: Դրանք ուրիշ հոգի ունին, օտար են ինձ համար (Համբուրում է):

**ԲԱԳԻ.** Ատելով ատում եմ այդ տեսակ սանտիմենտայլ տեսարանները: (Դուրս է զալիս նախանեակի դռներով):

**ՈՒԶ.** Պախօպատկա (Հետեւում է եղածորը):

**ԶԱՐ.** Խօզալիային ուղնկցում է նախասեսնեակ:

## ՏԵՍԻԼ V.

**ՄԱՐԴԱՐԻՏ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍՈՒՐԵՆ:**

**ՍՈՒՐ.** (Դուրս է զալիս ճախ կողմի դռներից): Գնաց, վերջապէս, եռանդուն կօմմերսանտը, ճարպիկ սպեկուլեանտը, աստառը շուռ տուած ամերիկացին: Կեցցես, Մարդարիտ: Ես այնտեղից բոլորը լսում էի: Մամա, այս անդամ անառակ որդիդ քեզ հետ համաձայն է: Տուր ձեռդ համբուրեմ: Այսօր ես տեսնուեցի Օթարեանի հետ: (Մարդարին): Թոյլ կըտաս խօսել մայրիկի ներկայութեամբ:

**ՄԱՐԴ.** Ես մայրիկից գաղտնիք չունիմ:

**ՍՈՒՐ.** Պէտք է խոստովանած, որ ջենտմեն տղայ է: Ես լաւ չէի ճանաչում նրան: Այսօր

շատ հաւանեցի: Նա ասում է. «Ես աղքատ եմ, աղքատ էլ կըմնամ, միայն թէ Մարդարիտը չըդադարի ինձ սիրել»: Լսում ես. պէտք է մեծ սիրտ ունենալ, որպէս զի սիրոյ համար հրաժարուել ահազին ժառանգութիւնից: (Զարուհուն, որ վերադարձել է սենեակից եւ ականջ է դնում): Կորիք, ինչ ես ականջ դնում:

**ԶԱՐ.** Գնում է սեղանատուն:

**ՄԱՐԴ.** Իսկ դռւ ինչ ասացիր նրան:

**ՍՈՒՐ.** Ե՞ս: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էր ասել ինձ նման մի զիժ: Ես նրան ասացի. «Արտաշէս, իմ քոյըը հպարտ աղջիկ է: Նա քեզանից զրհաբերութիւն չի ընդունիլ: Դու վեհանձնութեամբ նրանից զերազանցել չես կարող»:

**ՄԱՐԴ.** Շնորհակալ եմ:

**ՍՈՒՐ.** Սրանով էլ վերջացաւ մեր բանակցութիւնը: Այժմ լսեցէք իմ կարծիքը, ախար, շերտ եր դեր, ես էլ ընտանիքի անդամ եմ: Եթէ ապացուցուած է, որ մեր հայրը զրկել է Օթարեանին, ամենքս պարտաւոր ենք պահանջել, որ նա զրկուածներին բաւարարութիւն տայ:

**ՄԱՐԴ.** Մայրիկ, լսում ես, ինչ է ասում:

**ՍՈՒՐ.** Էհ, ինչ ես մայրիկին խօսեցնում իմ մասին: Նա ինձ վրայ խաչ է զրել: Ես շառատան եմ, փչացած: Բայց թող յայտնի լինի ձեզ, որ շուտով կըհրաժարուիմ իմ բաժին ժառանգութիւնից, քան կըհամաձայնուիմ, որ մարդիկ երեսիս ասեն. «դու կողոպտիչի որդի ես»: Այս մէկն

արդէն վճռուած է և ստորագրուած։ (Սիզար է վասում)։

ԵՐԱՆ. Խելքս քեզանից բան չի կտրում։ Համ այդ ես ասում համ էլ ինքդ կողոպտում ես հօրդ։

ՍՈՒԻՐ. Աա, դու մուրհակների մասին ես ակնարկում։ Մամա, Աստուած վկայ, ես չեմ հնարել այդ բանը, այլ քեռիս, քո պատուարժան եղբայրը։ Նա, օօ, նա Շեյլօկի ինսամին է։ Նա ինձ պարտք է տալիս միայն այն պայմանով, որ մէկին հինգ—տասը ստանայ հօրս մահից յետոյ։ Բայց ագահութիւնը երբեմն մարդուն յիմարացնում է։ Այժմ իմ պատուարժան քեռին վախենում է, որ հայրիկից շուտ կը ճանապարհուի ի վերին երուսաղէմ։ Մամա, մինեղանար, եղբայրդ մարդ չէ, այլ գայլի ախորժակից և աղուէսի խորամանկութիւնից կազմած վինիգրետ։ Իսկ ես թէկ անառակ եմ, բայց ջենտլմեն եմ։ Երէկ Բագրատն ինձ վախկոտ անուանեց։ Իբր թէ ապտակ եմ կուլ տուել։ Ուզում ես իմանալ, ինչու եմ կուլ տուել։

ԵՐԱՆ. Ես չեմ ուզում լսել այդ բաները, չեմ ուզում։

ՍՈՒԻՐ. Ոչ, այս մէկը լսիր։ Ես ապտակը ստացել եմ մի շատ պատուական կնոջ պատճառով։ Եթէ կուլ չըտայի, պիտի կոռւէի, եթէ կոռւէի, այդ կինը պիտի խայտառակուէր։ Լսիր, ինչպէս պատահեց։

ԵՐԱՆ. (Ականջները փակելով) Զեմ ուզում լսել, չեմ ուզում։

ՍՈՒԻՐ. Դէ լաւ, թող մնայ։ Լսեցիր, Մարգարիտ, հայրիկը պարտաւոր է իւր անունն ազատել խայտառակութիւնից։ (Ժամացոյցին նայելով) Օ, տաս և կէմն է, ես շոգիացայ։

ԵՐԱՆ. Էլի ուր ես գնում կէս գիշերին, անառակել։

ՍՈՒԻՐ. Աստղերն ուսումնասիրելու։ Առլօվանինձ սպասում է։ Արեվիդերչի։ (Դնում է նախասենեակի դռներով, երգելով)։

ՄԱՐԳԻ. Տեսար, մայրիկ, շառլատան որդիդ աւելի ազնիւ է դատում, քան ինելօրը։

ԶԱՐ. (Սեղանատան դռներից) Խոհարարը հարցնում է, ընթրելու էք։

ԵՐԱՆ. Ես չեմ ուզում։ Ահ, էլի դլացաւուրոնում է։

ՄԱՐԳԻ. Ես էլ չեմ ընթրելու։ (Զարուհին գընում է)։ Մայրիկ, գնա, պառկիր, քո ներվերը բոլորովին քայքայուել են։ Ես էլ ամբողջ գիշեր չեմ քքել, գլուխս պտտում է անքնութիւնից։ (Համբուրում է մօք հետ և անցնում իւր սենեակը)։

ԵՐԱՆ. (Նայելով նրա ետեւից թախծալի)։ Երանի, դու ինձանից բաղգաւոր լինիս։ Ահ... (Անցնում է սեղանատուն)։

## S E U H L VI.

ԱՆԴՐԵԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԻԼ:

Դուրս են զալիս աջ կողմի առաջին դռներից,

Նըս Երանուհին արդէն բոլորովին հեռացել է:  
 ԱՆԴԻ. Փառք Աստծու, վերջապէս, ցրուեցին: Այն, գիշերն աւելի լաւ է, քան ցերեկը:  
 Մթութիւնը մեղքի ընկերն է:

ՍԱԴ. (Տէրողորմեայի հատիկները մէկ-մէկ զցելով): Խէր, շառ, Աստուած: Խէր, շառ, Աստուած: Խէր, շառ, Աստուած: Խէր: Ինչքան դըցում եմ, խէր է գալիս:

ԱՆԴԻ. Բայց սիրտս ասում է, որ լաւ բան չենք մտածել անելու:

ՍԱԴ. Աւելի վատ կըլինի եթէ չանես: Բացադրել ես, ինոդրել ես, աղաչել ես, չի եղել, ճարդ ինչ: Խօմ չես կարող պատիւդ թողնել թւշնամուդ ձեռքում:

ԱՆԴԻ. Զանգակ տուր, տեսնենք ինչ են անում:

ՍԱԴ. Զայն-ձիւն չի լսում: (Մատը սեղմում է էլէքտրական զանգակի կոճակին, որ զոնտափ է աջ պատի առաջին դռների մօտ: Բնմի ետևից լսում է զանգակի թոյլ հնչիմն):

ԱՆԴԻ. Քեզ համար ինչ, դուքս բանը դըլստեցիր: Լաւ կուրտաժ է իմ մեղքն ինձ ծախելու համար—հինգ հարիւր սաժեն տափ:

ՍԱԴ. Ես քեզ խնդրեցի, աղաչեցի, որ ինձ այս գործին խառնես:

ԱՆԴԻ. Դէ լաւ (Զարուհուն, որ ներս է մըտել սեղանատնից): Ո՞վ կայ սեղանատանը:

ԶԱՐ. Ոչ ոք:

ԱՆԴԻ. (Կեղծ բարկանալով) Բաս ինչու ես

Ճրագները վառել: (Զարուհին ուզում է զնալ): Խսնում էնչ է անում:

ԶԱՐ. Հէնց հիմայ պառկեց: Էլի գլխացաւը բռնել է:

ԱՆԴԻ. Պրծանք, այդ էր պակաս: Կանչիր այստեղ Մարգարին:

ԶԱՐ. Նա քնած է:

ԱՆԴԻ. Քնած: Այդպէս շնուտ: Լաւ, գնա: Մենք կլուք ենք գնում, ասա խանումիդ: Դու էլ կարող ես հանգստանալ: Ես ինքս գոները կըփակեմ: Հարկաւոր չես: Հանգըրն սեղանատան ճրագները, դուք անտեսութիւն ասած բանը չըգիտէք: Կարծես, ես փող եմ կտրում կամ մարդ կողոպտում, որ ամեն ինչ շռայլում էք: Գնա:

ԶԱՐ. Գնում է սեղանատոն: Փոքր անցած այնտեղ տիրում է մթութիւն:

ՍԱԴ. Մէկը հիւանդ է, միւսը քնած, Աստուած ինքն է օգնում քեզ:

ԱՆԴԻ. Ահ, մի յիշիր այս բռպէին Աստծու անունը: Նա աւելի կըբարկանայ մեզ վրայ: Հըմ, լաւ էր, չէ, որ ասացի, թէ կլուք ենք գնում: Տես, ով կայ նախասենեակում: (Սաղաթէլը նայում է դէպի նախասենեակ): Դուները կողպիր: (Յուշիկ քայլերով մօտենում է Մարգարտի սենեակի դռներին եւ ականջ դնում: Նայում է իւր զրպանի ժամացոյցին եւ վերադառնում թեմի կընտրոնը):

ՍԱԴ. (Նախասենեակ նայելուց յետոյ դըռները ծածկել է): Այստեղ ոչ ոք չըկայ: Աւելի

յարմար ժամանակ չէիր կարող ընտրել: (Տէրու-  
ղորմեան դնումէ զբանը): Ի՞նչի՞ մասին ես  
մտածում:

**ԱՆԴՐ.** Երբ սատանան մարդու գլխի մէջ մի  
չար միտք է մտցնում, սրտի մէջ էլ մի ահ է  
գցում: Ծածկիր սեղանատան դռները: (Սաղա-  
թէլը ծածկում է): Կարծես, այնտեղից աչքեր են  
նայում մեզ: Մօսս կաց: (Նստում է բազկաթոռ-  
ներից մէկի վրայ):

**ԱՅՀ.** (Գալով քեմի սուաչ) Էհ, շատ բաներ  
ես արել, արա այդ մէկն էլ:

**ԱՆԴՐ.** (Կիսասայն) Արել: Ես մենակ չեմ  
արել, դու էլ միշտ հետո ես եղել: Էհ, էլի հօրդ  
կերպարանքն եկաւ, կանգնեց աչքիս առջև: Նա  
ասում էր. «չարը չարութեան ճանապարհում  
կըկորչի»:

**ԱՅՀ.** Էհ, դու էլ ժամանակ գտար հօրս յի-  
շելու:

**ԱՆԴՐ.** Յիսուն ու վեց տարեկան մարդ եմ,  
Սաղաթէլ, գլխովս հազար ու մի փորձանք է ան-  
ցել: Երդում եմ կոտրել, միամիտներ եմ խարել,  
խեղճեր եմ կոփել ու կողոպտել, երեք անդամ  
կաշառքով ազատուել եմ դատաստանից, բայց  
երբէք այս դրութեան մէջ չեմ եղել: Ի՞նչի՞ն է  
այս, Սաղաթէլ: Այ, տես, սառը քրտինքը պա-  
տեց մարմինս:

**ԱՅՀ.** Վաղն այս ժամանակ կըհաշուես ու  
կըտեսնես, որ մօտ եօթ հարիւր հազար ոռութու-  
կալուածք է մնացել ձեռքումդ:

**ԱՆԴՐ.** Ազահութիւն, աչքածակութիւն, ու-  
րիշ ոչինչ:

**ԱՅՀ.** Էէհէ, դու սկսում ես դատողութիւն-  
ներ անել: Շտապիր, գիշերն անցնում է:

**ԱՆԴՐ.** Զըկարծես, թէ միայն փողի համար  
եմ անում, Սաղաթէլ: Ոչ, այլ այդ լակոտին խրա-  
տելու համար: (Վեր է կենում):

**ԱՅՀ.** Ի հարկէ: Այստեղ պատուի ինդիր  
կայ, փողն ի՞նչ...

**ԱՆԴՐ.** (Առամները կրծտելով) Գոռող, ան-  
պարտաւան: Ուզում է ինձ խեղդել, ինձ, որ կա-  
րող եմ հարիւրին խեղդել այս ճանկերովս: Աա,  
եթէ ձեռքս կընգնին այդ թղթերը, ցոյց կըտամ  
քեզ, թէ ով եմ ես... Սուս, այդ ի՞նչ ձայն է:

**ԱՅՀ.** Ես ոչինչ ձայն չեմ լսում:

**ԱՆԴՐ.** Դէհ, Անդրէսս, մի թուլանար, ա-  
մօթ է: Արա այս մէկն էլ: Ինչ որ լինելու է,  
այն պիտի լինի: (Զգոյշ ըայլերով անցնում է  
Մասգարտի սենեակը):

**ԱՅՀ.** Գայլը մտաւ գառների փարախը — կա-  
սէր հայրս: (Մօտենում է սեղանատան դռներին  
և լրյար հանգնում: Բնեմուտ տիրում է խաւար: )  
Այսպէս լաւ է, ինձ չեն տեմնիլ: (Լոռութիւն: Սե-  
ղանատնից լսում է ժամացոյցի տասն ու մէկ  
զարկը): Հիմա ես էլ եմ վախենում:

Երկարատեւ լրութիւն:

**ԱՆԴՐ.** (Երեսում է դռների մէջ. շափազանց  
այլայլուած է, դողում է, բայց ուրախ է: Զեւ-

բռմ ամուր բռնած է թղթերի մի ծրար։ Հռութիմն։ Ցետոյ շշնչինով։ Սաղաթէլ։

ԱԱՀ. Այստեղ եմ: (Սենեակը նորից լուսաւորում է):

ԱՆԴՐ. (Առաջ է զալիս): Ահա նրա հոգին:  
Ահա ինձ քնից ու հաճախտութիւնից զրկողը:  
Հարստութիւնս, անունս, պատիւս, եօթ հարիւր  
հազարի փրկութիւնը:

ԱԱՂ. Դէ, գնանք, հեռանանք այստեղից:

**ԱՆԴՐ.** Թող գեռ տեսնեմ, նրանք են թէ չէ:  
 (ծրաբը զննում է): Իսկ և իսկ: Ինչպէս լաւ  
 յաջողուեց: Նա քնած էր երեխայի պէս, զիրքը  
 կրծքի վրայ բռնած: Բանալիները բարձի տակ  
 էին: Եերցը ի ու... Զայն չե՞ս լում: (ծրաբը շոտ-  
 առվ դնում է գրպանը):

**ԱԱՀ.** (Անհանգիստ) Լսում եմ: Հեռանմաք:  
Փողոցից լսում է ոստիկանական շուցի ձայն:

ԱՆԴՐ. Աա, ոստիկանները գող են բռնում:  
Երկի, խեղձերից մէկը, քաղցածութիւնից ատի-  
պուած, գողացել է մի փալասի կտոր. Սհս, հե-  
ռանանք:

**ՍԱՂ.** (Մօտենում է աջ կողմի առաջին դրսերին, մի վայրկեան կանգ առնում եւ անհնանում):

### ԱՆԴՐ. ՀԵտեւում է նրան:

**ՄԱՐԳ.** (Դուքս է զալիս զիշերային սպետակ հագոտով։ Նայում է աջ ու ձախ այլայլուած, նկատում է հօրը, որ այդ պահին արդէն դռների մօս է։ Ուժգին ցնցուում է ու ծշում (թոյլ)։

Հայրենիք: (Մի քանի քայլ առաջ է վազում եւ քարձը ծշում): Հայրենիք:

**ԱՆԴՐ.** Դռների միջից սարսափահար յետ  
է նայում Եւ անհետանում:

**ՄԱՐԳ.** Հեկեկալով ընկնում է յատակի վրայ:

Վարագոյրն իջնում է հանդարտ։

## ԱՐԵՐՈՒՄԾ ՀՈՐՌՈՐԴ

Առաջին Արարուածի բեմը: Վաղ երեկոյ է: Գրասեղանների վրայ փառվում են էլէտրական ճրագներ: Գրասենեակի դռները բաց են: Այստեղ ոչ ոք չըկայ:

Վարագոյրը բարձրանալիս՝ ձախ կողմի գրասեղանի քով նստած է Բագրատն և զիդում է իւր գործարանի հաշիւները: Սեղանի մօտ կանգնած է Կարինեանը և բացադրութիւններ է տալիս:

Դէպի աջ, Անդրէասի գրասեղանի քով, նստած է Սաղաթէլը, ոտը ոտի վրայ գրած և հանդարտ տէրոգորմեա է զցում:

ՏԵՍԻԼ. I.

ԲԱԳՐԱՏ, ՍԱՂԱԹէլ եհ ԿԱՐԻՆԵԱՆ:

ԲԱԳՐ. Խողովակների համար պարտ եմ մօտ ութ հազար ոռուբի, մեքենաների համար վճարուած է քսան և եօթ հազար երկու հարիւր: Էնդհանուր գումարն է ծախսերի երեք հարիւր տասներկու հազար... (ՄԵԼՈՒՍԻ): Եւ այս բոլորը կարող է ձեռքից դուրս գալ: Ահ: (Վեր է կենում): Թագցրու այս հաշիւը առ այժմ հայրիկից: Հին վաճառականները սարսափում են համարձակ

ՃԵՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ: Նրանց համար այսօրուայ կողէկը վաղուայ ոռուբլուց թանգ է:

ՍԱՀ. Ինձ համար էլ այդպէս է. քիչ լինի, նազդ լինի: (Տէրողորմեան տըորում է ձեռների մէջ եւ հոտ քաշում):

ԲԱԳՐ. Խանութպանի սկզբունք: (Կարինեանին) Դուք ազատ էք, կարող էք գնալ:

ԿԱՐ. (Սեղանի վրայից վերցրել է հաշուատերը:) Ես ուզում էի ձեզ յիշեցնել...

ԲԱԳՐ. Զեր ոռնկի մասին: Գիտեմ: Լաւ, լաւ, կըմտածեմ:

ԿԱՐ. Վեց ամիս է միենոյն էք ասում: Հարիւր ոռուբի ամսականը իմ տաժանակիր աշխատանքի համար շատ չնչին վարձ է:

ԲԱԳՐ. Բաւական մեծ վարձ է, եթէ համեմատենք ձեր չնչին կրթութեան հետ: Մեր ժամանակում գնահատում է միայն տաղանտը և գիտութիւնը:

ԿԱՐ. Իսկ երկար տարիների բարեխիղճ և աղնիւ ծառայութիւնը ոչինչ:

ԲԱԳՐ. Լաւ, հեռացէք: Ես չեմ սիրում, երբ մարդիկ աշխատում են ինձ բան սովորեցնել: Ցըտեսութիւն:

ԿԱՐ. Գնում է զրասենեակ ղժզամակ ղէմքով: Մի փոքր անցած այնտեղ տիրում է մըթութիւն:

ՏԵՍԻԼ II.

ԲԱԴՐԱՏ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

ԲԱԳԻՐ. (Անհամըեր) Քեռի, այժմ ասա տեսանեմ, ինչ նորութիւն կայ:

ՍԱՂ. Գոհութիւն Աստծու, ամեն բան կարգին է: (Հանդարտ ոտքի է կանգնում, ուղղելով արխալուղի փէշերը):

ԲԱԳԻՐ. Օթարեանն եկել է այստեղ:

ՍԱՂ. (Ուսերը վեր քաշելով) Ես ինչ գիտեմ, խօմ պահապան չեմ: (Սկսում է ծանր քայլերով անց ու դարձ անել):

ԲԱԳԻՐ. Անհրաժեշտ է իմանալ, տեսնուել է նա Մարգարտի հետ:

ՍԱՂ. Կարող է տեսնուած լինել, կարող է չըլինել, Աստծու բանն է:

ԲԱԳԻՐ. Ես չեմ կարողանում ամբողջ օրը Մարգարտին հանդիպել: Զըգիտեմ ինչու, սա փակուել է իւր սենեակում և ոչ ոքի չի ընդունում:

ՍԱՂ. Աստծու բանն է:

ԲԱԳԻՐ. Առ հասարակ այսօր մեր տանը տարօրինակ տրամադրութիւն է ափում: Նկատեցի՞ր, հայրիկը որքան փոխուած էր ձաշի ժամանակ: Ես երբէք նրան այդպէս անկապ խօսելիս չեմ տեսել: Նա սովորականից աւելի էր զինի խմում: Այդ արթուն մարդը, կարծես, ուզում էր գիտմամբ հարթել:

ՍԱՂ. Աստծու բանն է.

ԲԱԳԻՐ. ՔԵզ ինչ է պատահել, չեմ հասկանում: Այսօր շատ շուտ-շուտ ես յիշում Աստծու անունը:

ՍԱՂ. Ես Աստծուն միշտ յիշում եմ: Դու էիր, որ ուզում էիր ինձ շեղել նրա ճանապարհից քո ուսումնական բացադրութիւններով:

ԲԱԳԻՐ. (Կանգ է առնում եւ նայում նրան խորը խորը): Դու ինձ յանդիմանում ես: Այդ վաստի չէ, վատ չէ: Ես ինքս պատրաստուել էր քեզ մի թեթև նախատինք տալու:

ՍԱՂ. Նախատինք տալու: Ի՞նձ, ինչու համար, ինչ եմ արել:

ԲԱԳԻՐ. (Մօտենալով, ծնող դնում է նրա ոսի վրայ եւ կէս բարեկամաբար, կէս լուրջ) Արի, պատուելի քեռի, խոստովանիր, որ դու շատ կըցանկանայիր համոզուել, որ (Ձեռը դէպի երկինք բարձրացնելով) այնտեղ ոչինչ չըկայ:

ՍԱՂ. Եանի ինչ ես ուզում ասել, պարզ խօսիր:

ԲԱԳԻՐ. Ուզում եմ ասել, պատուելի քեռի, որ քեզ նման մարդկանց համար շատ ձեռնտու է ոչ այնտեղ (Ձեռը բարձրացնում է դէպի երկինք): Երկիւղ ունենալ և ոչ այնտեղ: (Ձեռը խփում է Սաղաթէլի սրտին):

ՍԱՂ. Իսկ դու ինչ ես, դու: Դու ումից կամ ինչից ես վախենում, անհաւատ:

ԲԱԳԻՐ. Ես: Ահա (Ձեռը զարկում է իւր ճակատին) թէ ինչիցն եմ վախենում: Իմ միակ Աս-

տուածը բանականութիւնն է։ Հիմայ, քեռի, դառնանք գործնականին։ Ասա, տեսնեմ, քսան ու հինգ տարուայ ընթացքում որքան ես գողացել ելիզբարեաններից։

**ԱԱՂ.** (Ցնցում է եւ վիրատրուած ծեւանում)։ Ի՞նչ, գողացել։ Հարբած ես, ինչ է։

**ԲԱԳԻՐ.** (Սառն լրջութեամբ) Ես երբէք չեմ հարբում, կսիր, քեռի, հօրս հարստահարել ես, ներել է, այդ իւր հաշիւն է, իսկ ես... ես խոնարհաբար ինդրում եմ, իմ գործերում ձեռներդ մի փոքր մաքուր պահես։

**ԱԱՂ.** Տէր Աստուած, Տէր Աստուած, այս տղան գժուել է։

**ԲԱԳԻՐ.** Մի քիչ առաջ, երբ քննում էի գործարանիս հաշիւները, նկատեցի, որ քո ձեռքով գնուած նիւթերը մէկով մէկ աւելի թանգ են նստել։ Ծովքերի համար արդարացուցիչ փաստեր չես ներկայացրել։ Ինչոր էլ ներկայացրել ես, կեղծ է։ Մի խօսքով, բաւական վերադիր ես արել։ Ես գիտեմ, որ քո արածը սովորական բան է գործակատարների համար, բայց իմ վերաբերմամբ զգոյշ կաց։

**ԱԱՂ.** (Վըզովուած՝ զանազան խոշոր շարժումներ է անում, կարծես, պատերին թողոքնելով) Այստեղ մտիկ արեք, սրան, սրան, չի ամաչում, իւր հարազատ քեռուն գող է անուանում։ Եւ երկինքը չի որոտում, պատերը ձայն չեն հանում։ Վայ մեզ, վայ մեր օրին։

**ԲԱԳԻՐ.** Էէ, թող այդ բօշայական ձևերը։

Նրանք ինձ խաբել չեն կարող, Ես քեզ կրկին անգամ խնդրում եմ, ձեռներդ մաքուր պահիր, Ես արթուն մարդ եմ և վրիժառու, մօրս եղբօրն անգամ չեմ խնայել։

**ԱԱՂ.** Սհամօթ, չի էլ կարմրում ասածներից։

**ՏԵՍԻԼ III.**

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆԴՐԵԱՍ։

**ԱՆԴԻՐ.** (Գալիս է ծախի դռներից) Ներքուսուանհանգիստ է, բայց աշխատում է անդրոր ծեսնալ։) Հիմայ Բնչ անենք, Սաղաթէլ։ Կարծեմ, վատ չի լինիլ գնալ կլուք և մի պույլկա պրեֆերանս խաղար վաղուց է չեմ եղել այնտեղ։ Հըմ, Բնչ կասես, պարոն ինժեներ։

**ԲԱԳԻՐ.** Շատ ուրախ եմ, որ ուզում ես հասարակութեան մէջ երեալ։ Կլուք չըգնալդ չար լեզուներին հազար ու մի բամբասանքի նիւթ է տալիս։ Բայց ես զարմանում եմ, որ այդպէս հանգիստ ես։

**ԱՆԴԻՐ.** Ինչո՞ւ չըպիտի հանգիստ լինիմ։ Փառք Աստծու, խօմ տունս կրակ չի ընկել կամ վէքսելներս պրօտեստ չեն անում։ (Ահանգիստ նայում է դէպի այն դռները, ուսկից դուրս է նկել)։

**ԲԱԳԻՐ.** Երէկ դու այդպէս չէիր խօսում։

**ԱՆԴԻՐ.** Երէկը երէկ էր, այսօրը—այսօր։ Սաղաթէլ, այդ աէրողորմեան տուր ինձ։ (Սալաթէլը տալիս է)։ Եհ, փառք Քեզ, Աստուած, մեծ

է Քո ողորմութիւնը: (Նստում է իւր զրասեղանի մօս):

ԲԱԳԻՐ. Հայրիկ, ուրեմն, դու այլ ևս չես վախենում Օթարեանից:

ԱՆԴԻՐ. (Ժիծաղում է նեարդային, արուստական ծիծաղով): Հի հի հի, լսեցի՞ր, Սաղաթէլ: Ասում է, Օթարեանից չեմ վախենում: (Որդուն) Ռով է Օթարեանը, ե՞րբ եմ ես նրանից վախեցել կամ ումից եմ վախեցել: Անդրէաս էլիզբեարօվը վախեցող պտուղներից չէ: (Դարձնալ նայելով ծախի դռների կողմ): Սաղաթէլ, տես ով կայ այն սենեակում: (Բագրատին) Յիմար բաներ ես խօսում:

ՍԱՂ. (Նայել է ծախի դռներով դէպի ներս): Այստեղ ոչ ոք չըկայ:

ԱՆԴԻՐ. Աչքիս մէկն երեաց սպիտակ հագըստով, երկայն մազերով: Ծածկի՞ր այն դռները: Օթարեան—չէ, շուն, կատու, մուկ, խլէզ:

ԲԱԳԻՐ. (Ուշաղիր դիտել է հօրը): Զարմանում եմ: Երէկ դու համարեա սարսափում էիր Օթարեան անունից, այսօր ծաղրում ես նրան: Իսկ ես, ընդհակառակը, երէկ նրան արհամարհում էի, այսօր չեմ կարող:

ԱՆԴԻՐ. Այդ քո գործն է: Ինչ ուզում ես, արա: Դէհ, Սաղաթէլ, գնում ենք կլուք, թէ չէ:

ՍԱՂ. Համաձայնութեան նշան է անում:

ԲԱԳԻՐ. Երէկ երեկոյ ես Մարգարտի մօտ տեսայ և կարդացի այն թղթերը, որոնց գոյութիւնը քեզ յայտնի է: Եթէ Մարգարիտն այդ թղթերը

վերագարձրել է Օթարեանին, չըգիտեմ ինչպէս կարելի է հանգիստ լինել:

ԱՆԴԻՐ. Դու կարող ես այդ մասին չըմտածել: Գործարանդ կիսատ չի մնալ:

ԲԱԳԻՐ. (Ուրախացած) Ի՞նչպէս, հայրիկ, բացադրի՞ր, չէ՞ որ գործը որքան քեզ, նոյնքան էլ ինձ է վերաբերում:

ԱՆԴԻՐ. (Վարդապետած) Դադարելու ես, թէ չէ: Գլուխս տրաքեցրիր: Ես այսօր տրամադրութիւն չունիմ այդ մասին խօսելու:

ԲԱԳԻՐ. (Տարակոտանքով նայում է նախ նըրան, ապա Սաղաթէլին): Ոչինչ չեմ հասկանում: Պէտք է անպատճառ տեսնուել Մարգարտի հետ: Ես կըդնամ և ուժով էլլինի կըմտնեմ նրա սենեակը: Այստեղ մի բան կայ, որ ինձանից թագցնում էք (Դնում է ծախի դռներով):

#### ՏԵՍԻԼ IV.

ԱՆԴԻՐԵԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԻԼ:

ԱՆԴԻՐ. Ահ: (Նեարդային թափով տէրողորդմեան ծգում է սեղանի վրայ եւ վեր է կենում): Քիչ էր մնում բերանիցս խօսք թոցնէի: Զի լինում, Սաղաթէլ, չի լինում, ինչքան աշխատում եմ հանգիստ ձևանալ, չեմ կարողանում:

ՍԱՂ. Մարդասպանն էլ վերջի վերջոյ մարսում է իւր յանցանքը: Դժուարն այսօր է, էգուց, յետոյ կըմոռանաս, կըդնայ:

**ԱՆԴՐ.** Այդ աղջկայ կերպարանքը կէս գիշերին, սարսափած դէմքը, ձայնը... Ես մինչև գերեզման չեմ մոռանալ:

**ՍԱՂ.** Երեխայ ես, ուրիշ ոչինչ: Դու այն ասա—ուրիշները չխմանան, թէ չէ՝ Մարդարիտն ինչ: Նա աղջիկդ է, կըների քեզ:

**ԱՆԴՐ.** (Ասցուղարձ անելով): Մի ասա, չես իմանում ինչ եմ զգում: (Ծնցումով): Տես, ով կայ գրասենեակում, ձայն լսեցի:

**ՍԱՂ.** (Նայում է) Ոչ ոք չըկայ: (Դոները ծածկուած է, յետոյ աէրողորմնան վերցնում):

**ԱՆԴՐ.** Ամեն կողմից ձայն եմ լսում, ամեն տեղ մարդիկ եմ տեսնում: Ի՞նչ կըմտածի հիմայ իւր հօր մասին: Նա, երեի, ամօթից տանջւում է: «Հայրիկ» որ գոռաց, սարսափից ոտներս թուլացան, քիչ էր մնում դոների մօտ ընկնէի: Սաղթէլ, ինձ թւում է, որ նա իմ հոգեհան հրեշտակն է, հետեւում է ինձ շուաքի պէս և վերջը պիտի բռնի օձիքս և ասի. «հաշիւ տուր, ես քողատաւորն եմ»: Ի՞նչ պիտի ասեմ: Սաղթէլ, ես ու դու շատ բաներ ենք արել, բայց այս մէկը չենք մարսիլ, կըմնայ մեր կոկորդում, կըտեմնես...

**ՍԱՂ.** Ի հարկէ, եթէ քեզ այդպէս կըպահես, ինքդ քեզ փորձանքի մէջ կըգցես: Պէտք է սառը լինել, այնումն էլ չըգցել: Մտածիր, թէ ինչ ահագին հարստութիւն ես ազտել, այն ժամանակ արածդ քեզ ոչինչ կերևայ: (Լոռութիւն) Հա, քանի միտդ է, խոսուումդ կատարիր: Մի փոքրիկ թուղթ

տուր, որ հինգ հարիւր սաժէն հող քաղաքի այս ինչ տեղում բաշխում ես ինձ:

**ԱՆԴՐ.** Անաստուած, դու հէնց քո մասին ես մտածում: Ագահ:

**ՍԱՂ.** (Հեղնաբար) Ագահ, քսանից մէկն է ինձ տալիս, էլի ես եմ ագահը:

**ԱՆԴՐ.** Լաւ, յետոյ կըտամ:

**ՍԱՂ.** Ոչ, ոչ, հիմայ, յետոյ կուրանաս: Ես քեզ ճանաչում եմ:

**ԱՆԴՐ.** (Կատաղնով) Յետոյ, ասում եմ:

**ՍԱՂ.** (Նայում է նրան սուր եւ խորհրդաւոր հայեացքով) Դու գիտես:

**ԱՆԴՐ.** (Հասկանում է նրա միտքը) Սա, Սաթայէլ, գու հօրդ գերեզմանն էլ տակն ու վրայ կանես մի ոսկու համար: (Մօտենալով գրասեղանին) Տուր ինձ մի կտոր թուղթ:

**ՍԱՂ.** Ես արդէն ինքս գրել-պատրաստել եմ, մնում է, որ ստորագրես: (Հանում է իւր գրալանից մի գրած թուղթ եւ տալիս է նրան):

**ԱՆԴՐ.** (Թուղթը կարդալով) Սատանայ, նօտարիուսի պէս է գրել: Հինգ հարիւր սաժէն: Քաղաքի կենտրոնում, ամենալաւ տափերիցու մէկը: Շատ է, այգանը չեմ կարող տալ:

**ՍԱՂ.** (Սառն) Խոստացել ես:

**ԱՆԴՐ.** Շատ է, ասում եմ: Կէսը նուիրելու եմ քաղաքային ուսումնաբանի համար: Վաղուց են ինդրում ինձ այդ մասին:

**ՍԱՂ.** Լաւ բարեգործութիւն է, ուրիշ հաշուով: Ստորագրիր:

ԱՆԴՐ. Շատ է, ասում եմ:

ՍԱՂ. (Սառնովթեամբ ծեղը մեկնելով, որ թուղթը վերցնի): Դու գիտես: Ես կարծում էի, որ ազնիւ վաճառականն է ևր խօսքի տէրը պիտի լինի:

ԱՆԴՐ. (Ատամեները կը ճատենով) Աա, գաղաճ: (Ստորագրում է):

ՍԱՂ. Թուղթը վերցնում է, կանխապէս ստորագրութիւնը ցամքիչով շորացնելով, և ծոցը դնում): Ծնորհակալ եմ: Այժմ կարող ես ինձ վրայ յոյս գնել: Դէ լաւ, քիչ մտածիր: Մեղքն այն ժամանակ է մեղք, երբ յայտնի է հասարակութեանը: Իսկապէս ի՞նչ ես արել: Մի քաղցած գայլի ատամները հանել ես—պլծաւ գնաց: Թող այժմ գոռայ, ինչքան ուզում է, թէ ելիզբերովը նրա հօրը կողոպտել է: Փաստեր կը պահանջենք:

ԱՆԴՐ. (Ականջ է դոել ուշադիր այնալիսի դէմքով, որից երևում է, թէ շատ ցանկանում է համոզուել): Այո, փաստեր կը պահանջենք: Թող այժմ գնայ դատարան: Այժմ ես եմ նրա դատաւորը: «Պարոն, կասեմ նրան դատաւորների առաջ, հաստատիր, բեր ապացոյցներ և ժառանգութիւնդ ստացիր»: Նա ապացոյցներ չունի, հա հա հա, չունի, կորել են, անհետացել: Եւ ես կը թքեմ նրա երեսին, վրէժս կառնեմ: Օօօ, Սաղաթէլ, ես շատ եմ տանջուել: (Բաց է անուս քանալիով զրասեղանի արկող) Ահա, այստեղ է նրա լեզուն, գոռոզութիւնը, նրա հոգին: (Հանում է ծրարը և նայում): Երէկ ես էի նրա

ձեռքում, այսօր նա է իմ ճանկերում:

ՍԱՂ. Այրիր, կորչեն, ինչու ես պահում:

ԱՆԴՐ. Օօ, այնպիսի մի խարոյկ սարքեմ, որ քէփդ գայ: Բայց գեռ թող մնայ այստեղ, թող տեսնեմ, կշտանամ: (Թղթերը յետ է դնում): Մտէք այստեղ: Անդրէաս ելիզբերօվի ձեռքից Գաբրէլ Հրեշտակապետն էլ չի կարող ձեզ ազատել: Էհ, այժմ ումիցն եմ վախենում: Իմ աղջկանից:

ՍԱՂ. Նա երբէք քեզ չի մասնիլ:

ԱՆԴՐ. (Ցնցումնով, բանալին շտապով զըլպանն է լնում): Ահ, ոտքի ձայն լսեցի: Տես, ով է գալիս: Պէտք է սառնարիւն լինել...

ՍԱՂ. (Մօտեցել է նախասնեակի դռներին, ըսց արել ու նայել): Նա է: (Դէպի նախասնեակ): Համեցէք... (Յետ է զաշտում, զլուխ տարով Օթարեանին):

### S E U R I V.

ՆՈՅՆՔ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ:

ՕԹԱՐ. (Ներս է մտնում անհանգիստ դէմքով, զլուխ է տալիս Անդրէասին, անուշաղեր թողնելով Սաղաթէլին: Վերարկուով է): Ներեցէք, որ ձեզ անհանգստացնում եմ: Ասացէք, ի ուր Սատու, ի՞նչ է պատահել ձեր տանը: Ինձ ասացին, որ մայրիկն ու օրիորդ Մարգարիտը յանկարծակի հիւանդացել են:

ԱՆԴՐ. Շնորհակալ ենք, պարոն, որ այդպէս մտածում ես մեր մասին։ Բայց մեր տանը հիւանդ չըկայ։ Ուբիշ։

ՕԹԱՐ. Պարոն Անդրէաս, ես զիտեմ, որ ամեն բան արդէն յայտնի է ձեզ։ Չեմ թագցնիլ, ինձ համար Մարգարտի առողջութիւնը թանգ է։ Ահա երրորդ անգամն է այսօր գալիս եմ, ինձ չեն ընդունում, ասելով թէ հիւանդ է։ Այդ ինձ վախեցնում է։ Անկարելի է, որ Մարգարիտը թեթև տկարութեան պատճառով ինձ չընդունի։ Անշուշտ նա շատ ծանը հիւանդ է։

ԱՆԴՐ. (Հեգնաբար) Սաղաթէլ, լսում ես Մարդը տանջւում է։ Հանգիստ կաց, պարոն, իմ աղջիկը հիւանդ չէ, միայն երեխ, չի ուզում քեզ ընդունել։ Սաղաթէլ, կարծեմ, ժամանակ է կլուք գնալու։

ԱԱՂ. Ի հարկէ։ (Նշան է անում Անդրէասին, որ իրան սառն պահի)։

ԱՆԴՐ. Էս, մնաս բարով, պարոն սիրահարք Մեզ ներիր, գործ ունինք։ Եթէ ուզում ես, կարող ես նստել, հանգստանալ։ Բազրատը տանն է, կարելի է նա քեզ ընդունի։ (Անցնում է ընմի խորքը դուրս գնալու համար)։

ՕԹԱՐ. (Զարմացած մի քանի վայրկեան լուր դիտել է նրան)։ Զարմանալի է, բոլորովին անհասկանալի...

ԱՆԴՐ. (Սառն նայելով իւր ժամացոյցին) Ի՞նչն է զարմանալի, պարոն փիլիսոփայ։

ՕԹԱՐ. Ձեր խօսակցութեան եղանակը, ձեր դէմքի հեգնական արտայայտութիւնը, ձեր սառնութիւնը։

ԱՆԴՐ. (Տաքանալով) Բաս ի՞նչպէս կըհրամայես խօսել, աղաս, հըը։ Ուզում ես, որ վիզո ծուեմ, վախենամ, աղաչեմ, պաղատեմ։ (Լուրջ եւ խիստ) Հերիք է։ Դու չըհասկացար պատիւդ։ Ես խոնարհուեցի քրիստոնէաբար, դու գլխիս նստեցիր։ Համբերութիւնն էլ չափ ունի։ Այժմ կարող ես գնալ, ուր ուզում ես. իմ տան դուները քեզ համար փակ են։

ԱԱՂ. (Առանձին Անդրէասին) Մի տաքանար, լաւ չէ

ՕԹԱՐ. (Յուզուած եւ ապշած մի քանի վայրկեան լուր նայում է)։ Ահա թէ ինչ։ Ուրեմն, կաշկանդուած լեզուի կապերը քանդուել են։ Ուրեմն, երեկուայ օրն այստեղ մոռացուել է։ Այսօր իմ առջև փակում էք այն դոները, որոնց երէկ բաց էիք անում կրունգների վրայ։ Ասացէք, պարոն Անդրէաս, դուք ինձ ուզում էք վիրաւորել իսկապէս, թէ կատակ էք անում։

ԱՆԴՐ. Ես գեագա-գիւղաների հետ կատակ չեմ անում։

ԱԱՂ. Անդրէաս, Անդրէաս...

ԱՆԴՐ. (Վրդովուած) Թող ինձ, բաւական է ի՞նչքան երես տուեցի լակոտի մէկին։

ՕԹԱՐ. (Կատաղի) Պարոն...

ԱՆԴՐ. Գոռա, որքան ուզում ես։ Զայնու եօթերորդ երկինք կըբարձրանայ, բայց Աստծուն

շի հասնիլ։ Շարունակիր էլի, ինչու ես լռել։ «Դուք ինձ օգնելով, ինձ վիրաւորել էք։ Ես ինքնասէր մարդ եմ, տանջուել եմ։ Դուք իմ փողերով էք ինձ որդեգրել։ Զեր հարստութեան կէսն իմն է։ Տուէք»։ Անպատկան։ Ահա վեց ամիս է ես զրկուել եմ հանգստութիւնից, քնից, ախորժակից։ Քո տարածած սուտ լուրերը տանջում էին ինձ գիշեր-ցերեկ։ Քո պատճառով մարդիկ սկսել էին ինձ համարել գող և քիչ երմնում երեսիս թքէին։ Քառասուն տարուայ մէջ աշխատած անունս ու պատիւս ունիատակ էին լինում։ Այժմ... այժմ բաւական է։ Դու սպառնում ես ինձ դատի՞ կանչել։ Համեցէք, ճանապարհը բաց է, կարող ես գնալ։ Իսկ իմ տան տան դռները փակ են քո առջև և յաւիտեան չեն բացուիլ։

ՍԱՀ. (Մեկուսի) Այս մարդն ինքն իւր գործը փչացնելու է։

ՕԹԱՐ. (Լսել է մերթ զարմացմանը, մերթ վրդովությով, մերթ իրան զսպելով)։ Եւ այդ համարձակ լեզուով խօսողը Անդրէաս Էլիզարեամնն է։ Նա, որ աշխատում էր ինձ մի քանի հազար ուռելով կաշառել, որպէս զի ես հրաժարութիւմ իմ արդար պահանջից։ Դուք ինձ մինչև անդամ ծաղրում էք։ Դուք ինձ վոնդում էք ձեր տնից, ինչպէս մի փողոցային սրիկայի։ Ինչու։ Որովհետեւ ես մինչև այսօր խնայել եմ ձեզ յանուն ձեր աղջկայ սիրոյն։ Ասացէք, այդ ինչ կերպարանափոխութիւն է, Ո՞վ կամ ինչը ձեզ ազատեց երէ-

Առայ ողորմելի գրութիւնից։ Ո՞վ ներշնչեց ձեզ այդքան քաջութիւն։

ԱՆԴՐ. Ես քո սպառնալիքներից մազի չափ չեմ վախեցել։

ՕԹԱՐ. Սուտ էք ասում, պարոն։ Դուք ինքներդ այս բօղէիս խոստովանեցիք, որ ես ձեզ զրկել եմ քնից ու հանգստութիւնից։ Կընշանակէ, դուք համոզուած էիք, որ ձեր հանգստութիւնն ինձանից է կախուած։ Զգում էիք, որ բաւական է ես ցանկանամ, և դուք կըսովաք իմ ուսների տակ։

ԱՆԴՐ. Լիբր... (Յարձակում է վրէն)։

ՍԱՀ. (Մէջ ընկնելով) Անդրէաս, Անդրէաս. (Հոռոթիւն)։

ՕԹԱՐ. (Բռունցքները սեղմելով, ուզեցել յարձակուել, բայց զսպել է իրան)։ Ոչ ոչ, չըպիտի խելագարուել։ Պէտք է իմանալ ինչ է անցել այստեղ։ Ես ոչինչ չեմ կարող ասել։ Հարկաւոր է տեսնուել Մարդարտի հետ։ Նա ինձ կասի ճշմարտութիւնը։ Երկուսից մէկը—կամ ես խարուած եմ այդ աղջկանից կամ այս մարդը մի զարհուրելի չարագործ է։ Մարդարտի կըբացագրի գաղտնիքը։ Նա պարտաւոր է բացագրել։ Ես նրան հաւատացել եմ ինչպէս երկնային դատաւորի։ Ես կըտեսնուեմ նրա հետ թէկուզ մահուան անկողնում լինի։ (Քայլերն ուղղում է դէպի նախասենեակ)։

ԱՆԴՐ. (Սաղաթէլին) Հրամայիր ծառաներին, որ ներս ըլթողնեն նրան։

**ՕԹԱՐ.** (Կանգ առնելով) Զգուշացէք, պարոն, ապա թէ ոչ՝ ձեզ հետ կը կորչի և ձեր աղջկը: (Շտապով անցնում է նախասենեակ):

**ԱՆԴԻՐ.** (Բարձր ձայնով) Վարդան: Դուրս արեք նրան, դուրս: (Դիմում է նախասենեակի կողմէ):

**ՍԱՂ.** (Բռնում է նրա թերից): Համբերիր, մարդ Աստծու, համբերիր: Լաւ մտածիր, ինչ ես անում:

**ԱՆԴԻՐ.** (Մի կերպ ուշի գալով) Ճշմարիտ ես ասում, ես չըպիտի տաքանայի: Թող ինքը փրփրէր: Բայց ինչ անեմ: Հոգիս բերանս է բերել: Տես, որտեղ գնաց:

**ՍԱՂ.** (Նայում է նախասենեակի դռներով) Դոները բաց արին: Բագրատը խնդրում է նրան ներս մտնել:

**ԱՆԴԻՐ.** Ի՞նչ պիտի անենք, եթէ Մարգարիտը յայտնի նրան:

**ՍԱՂ.** Վկան ես չեմ, մարդ Աստծու, ոչ տեսել եմ, ոչ լսել:

## ՏԵՍԻԼ VI.

ԱՆԴԻՐՔԱՍ, ՄԱՐԳԱՐԻՏ եւ ՍԱՂԱԹԷԼ:

Յետոյ առանց Սաղաթէլի:

**ՄԱՐԳ.** Դուքս է գալիս ծախից եւ կանգ է առնում դռների առջեւ: Դունատ է, դէմքի վրայ

նընտում են անքնութեան եւ հոգեկան տանջանք-ների հետքեր:

**ԱՆԴԻՐ.** Տեսնելով նրան, ուժգին ցնցում է, բայց եւ արագութեամբ իշխում է իրան:

**ՄԵՐ.** Քանի վարյկեան պատկերատը լոււ-թիւն:

**ԱՆԴԻՐ.** Կանգնած է զեսի մէջ տեղում:

**ՄԱՐԳ.** Կանգնած է ծախ դռների մոտ եւ չի նայում հօրը:

**ՍԱՂ.** Ասցել է զեմի աջ կողմը եւ տէրողութեան ծեռին նայում է առաստաղին:

**ՄԱՐԳ.** (Ուզում է խօսել, բայց նեղուած է Սաղաթէլի ներկայութիւնից): Քեռի, մայրիկը, կարծեմ, ուզում էր քեզ տեսնել:

**ՍԱՂ.** (Մեկուսի) Ցանում է ինձ: (Հանդարտ բայլերով անցնում է աջից դէպի ծախ եւ դուրս է գալիս ծախ դռներով: Ծանապարհին յատակի վրայ տեսնելով ինչ-որ թուղթ, վերցնում է եւ դուրս Բագրատի սեղանի վրայ):

**ՄԱՐԳ.** Սաղաթէլին ծանապարհ դնելով, դռները ետեւից ծածկում է:

**ԱՆԴԻՐ.** Լսեցի, որ հիւանդ ես, ինչու ես վերկացել:

**ՄԱՐԳ.** (Այնքան կլանուած է իւր մտքերով, որ զըսթէ չի լսում նրան): Հայրիկ, նա եկաւ ինձ տեսնելու, չըկարողացայ նրան ընդունել: Երբորդ անգամն է գալիս է այսօր, ես փախչում եմ նշանից: Հայրիկ, տուր ինձ միջոց նրան պարզերես հանդիպելու:

ԱՆԴՐ. Զեմ հասկանում, ինչ ես ուզում ինձանից:

ՄԱՐԳ. (Դողդոջուն ծայնով, բայց հաստատ) Ազնութիւն:

ԱՆԴՐ. Ես այն եմ, ինչոր կամ, ոչ աւելի, ոչ պակաս: Դու չես կարող ինձ խրատել:

ՄԱՐԳ. Մի տանջիր ինձ, հայրիկ, ես չեմ կարող գիմանալ քո անպատճեանը:

ԱՆԴՐ. Եթէ անպատիւ բան էր, ինչու ինձ ստիպեցիր անել:

ՄԱՐԳ. Ես ուզում էի անունդ խայտառակութիւնից ազատել:

ԱՆԴՐ. (Դառն հեղական ծիծաղով) Ազատել: Ոչ, ընդհակառակը, դու ուզում էիր ինձ աւելի խայտառակել: Դու ուզում էիր ինձ զոհել քո... սիրականին: (Վերջին բառը արտասանում է վիրատրական շեշտով):

ՄԱՐԳ. Հայրիկ, մի ասա այդ բանը, մի ասա:

ԱՆԴՐ. Ինչպէս չասեմ: Նրան ճանաչելու օրից հարազատ ծնողիդ մոռացել ես: Նրա մի համբոյրը քեզ համար աւելի թանդ է բան իմ պատիւը:

ՄԱՐԳ. Երդուում եմ մեր գերդաստանի անունով, որ սխալում ես: Զեմ թաղցնում, եւ սիրում եմ Օթարեանին: Բայց բո պատիւն աւելի եմ սիրել, որովհետև իմ ծնողի ազնութիւնն աւելի բարձր է ինձ համար, բան իմ երջանեկութիւնը:

ԱՆԴՐ. Սնւս, անամօթ, մի համարձակուիր

մօտա խօսել քո սիրոյ մասին: Ես շատ լաւ գիտեմ, որ դու ուզում էիր ինձանից իլել հարստութիւնս, տալ այդ գեադային, որ յետոյ միասին աւելի փառաւոր ապրէիք: Քո օժիտը քեզ քիչ էր թւում:

ՄԱՐԳ. Կարող եմ երդուել, հայրիկ, որ ինքդ էլ չես հաւատում քո ասածին: Դու շատ լաւ գիտես, որ ես երբէք քո հարստութեան վրայ աչք չեմ ունեցել:

ԱՆԴՐ. (Ժաղըրով) Ի հարկէ, դու այս աշխարհից չես, քեզ մայր չի ծնել: Բաւական է, դու սիրտ չունիս, դու ատում ես ինձ, դու իմ թըշնամին ես:

ՄԱՐԳ. Շատ լաւ, թող այդպէս լինի: Բայց մի օր կըհամոզուես, որ ոչ քեզ չի սիրել այնչափ, որչափ ես:

ԱՆԴՐ. Ինչու ես եկել գլխիս, առա կարձ, կտրական:

ՄԱՐԳ. Յետ տուր ինձ այդ թղթերը, յետ տուր:

ԱՆԴՐ. (Կծու ծիծաղ): Հա հա հա, յետ տուր: Անդրէաս էլիզբարօվ, լսում ես, տուր սուրդ թշնամուդ ձեռը, վիզդ ծովր, որ նա կտրէ: Զէ, որդի, փառք Աստծու, դեռ չեմ դժուել:

ՄԱՐԳ. Հայրիկ, մի ծաղրիր իմ տանջանքը, ես չեմ կարող գիմանալ:

ԱՆԴՐ. (Եղանակը փոխելով) Ի՞նչ թղթեր ես ուզում, ամ, ի՞նչ թղթեր: Ես ոչ մի թուզի չեմ տեսել, չեմ ունեցել և չունիմ, գնա բանիդ:

**ՄԱՐԳ.** (Չեռները ջարդելով) Աստուած իմ...  
**ԱՆԴԻ.** Այո, դու երազ ես տեսել, ուրիշ  
ոչինչ...

**ՄԱՐԳ.** Կեանքս կըտայի եթէ երազ լինէր:  
Երբ ես լսեցի բանալիների ձայնը, արթնացայ և  
լուսամտի թոյլ լուսով տեսայ քո ահեղ կերպա-  
րանքը, չըհաւատացի աչքերիս: Մի քանի բոպէ,  
աարսափից քարացած, դիմում էի արարքդ: Ախ,  
այս ինչ վայրկեան էր, երբ դու հեռացար վախ-  
կոտ քայլերով և ես հետեցի քեզ: Այստեղ, դահ-  
լիճում, քո սարսափած դէմքի վրայ կարդացի իմ  
դատավճիռը: Դա ինձ համար կայծակի հարուած  
էր: (Երեսը դարձնելով, աշխատում է արտա-  
սուը զապել):

**ԱՆԴԻ.** Երազ չէ, բաս ինչ է: Երէկ ամբողջ  
գիշերը ես տանը չեմ եղել: Քեռիդ վկայ է...

**ՄԱՐԳ.** Հայրիկ, եթէ ինձ չես ինայում,  
ինայիր քեզ: Միրաս վկայում է, որ այդ թղթե-  
րը պէտք է քո զիմին մի փորձանք բերեն:

**ԱՆԴԻ.** Դէ, հերիք է, համբերութիւնս մի  
կտրիր, ես սկսում եմ կատաղել:

**ՄԱՐԳ.** Աս, այլ ես քո սպառնալիքներից  
չեմ վախենում: Իմ ամենամեծ պատիժը երէ-  
կուայ քո արածն էր:

**ԱՆԴԻ.** (Կատաղած) Դէ դնւրս, դնւրս, ան-  
պատկառ: Դու կարող ես ինձ որդեսպան դարձնել:

**ՄԱՐԳ.** Հայրիկ, միթէ չես մտածում, որ  
ես կարող եմ քո գողութիւնը պատմել բոլորին,  
առանց քեզ ինայելու:

**ԱՆԴԻ.** Մինչև բերանդ բաց անելլ, ես այդ  
յանդուզն լեզուդ տակահան կանեմ և կըշպրտեմ  
չներին: Դէն, կորիր, քանի որ սատանան ինձ  
չի յաղթել:

**ՄԱՐԳ.** (Յուսահատ) Աստուած իմ, ինչ ա-  
նեմ: Նա սիրտ չունի: Հայրիկ, սիրելի, թանգա-  
զին ծնող, տնեւր ինձ այդ թղթերը: Այսօր ես  
պարտաւոր եմ նրանց վերադարձնել իրանց տի-  
րոջը: Ես ազնիւ խօսք եմ տուել: Նա այնտեղ,  
հիւրասենեակում սպասում է: Ես փախայ նրա-  
նից, ինչպէս գող: Տնեւր, եթէ մազի չափ յար-  
գում ես քո աղջկայ պատիւը:

**ԱՆԴԻ.** Անէծք քեզ, չար Սաթայէլ: Ասում  
եմ քեզ, որ իմ մօտ ոչինչ չըկայ:

**ՄԱՐԳ.** Հայրիկ, դու ինձ լաւ չես ճանա-  
չել: Ես քիչ եմ խօսել, բայց շատ եմ մտածել և  
դգացել: Ես պատրաստ եմ կեանքս զոհել պա-  
տուիդ համար, բայց պատիւս արատաւորել հարս-  
տութեանդ համար—չեմ կարող, անզօր եմ: Դու  
պէտք է ազատես ինձ խայտառակութիւնից: Այդ  
քո պարտքն է, որովհետեւ դու հայր ես: Տնեւր  
ինձ իմ պատիւը, ես առանց պատուի մի ժամ  
անգամ ապրել չեմ կարող:

**ԱՆԴԻ.** (Ատամները կրծտելով) Հեռացիր,  
աղջիկ, արիւնս զլխովս է տալիս:

**ՄԱՐԳ.** Ոչ, չեմ հեռանալ, մինչև որ չըս-  
տանամ այդ թղթերը: Զրկիր ինձ մի կտոր հա-  
ցից, վոնդիր փողոց: Ես պատրաստ եմ քո վեր-  
ջին գործակատարի աղախինը դառնալ, պատ-

ըաստ եմ դռնէ դուռն ընկնել, ողորմութիւն  
մուրալ, բայց գող հոչակուել, ոչ, այդ չեմ կա-  
րող: Նա ազնիւ է, նա ինձ էլ ազնիւ է համա-  
րում: Նա իմ մասին շատ մեծ գաղափար ունի: Եւ  
յանկարծ գող նրա աչքում: Ոչ, ոչ, հայրիկ, դու  
բարի ես, խելօք ես, դու այդ թոյլ չես տայ:  
Տես, հայրիկ, ես չոքում եմ քո առջև: (Չոքում է)  
Խղճա ինձ, խնայիր ինձ: Թեզանից է կախուած  
իմ կեանքը: Լաւ լսիր, կեանքս եմ ասում: Մի  
արա, հայրիկ, այդ բանը, մի՛ արա, գողութիւնը  
սոսկալի յանցանք է:

**ԱՆԴՐ.** (Կոռուլ է ինքն իւր հետ): Վեր կաց,  
ամօթ է, ներս կըմանեն, կըտեսնեն:

**ՄԱՐԳԻ.** Ոչ ոչ, ես վեր կըկենամ միայն պա-  
տիւս յետ ստացած: Տեսնում ես, խիղճդ արդէն  
տանջում է քեզ: Մի դարձնիր երեսդ, երդւում  
եմ, երբէք քեզ չեմ դատապարտիլ, երբէք, ոչ մի  
խօսքով, ոչ մի ակնարկով: Կըպապանձուեմ և  
կըյարգեմ քեզ առաջուայ պէս: Ես գիտեմ, որ  
դու մոլորուել ես և այժմ զղջում ես: Հայրիկ,  
տուր ինձ այդ թղթերը:

**ԱՆԴՐ.** (Վծուական շարժումն է անում եւ  
վեր կննում): Հոգիս բերանս բերեցիր: (Մօտե-  
նում է գրաւեղանին, արտգ բաց է անում արկողը  
եւ ծրարը հանում):

**ՄԱՐԳԻ.** (Ուրախացած ոտքի կանգնելով) Ահ,  
ես գիտէի, որ դու բարի ես, որ քո չարութիւնը  
կեղծ է: Շնորհակալ եմ, հայրիկ, դրանով դու ա-  
զատում ես ոչ միայն պատիւս, այլ և կեանք...

**ԱՆԴՐ.** Հը՛մ, ձեռք վերցրու: Ես մի հա-  
րուածով վերջ կըտամ ամեն բանի: Ի՞նչ արած,  
դու յամառ ես: (Թղթերը պատում եւ ձգում է  
վառարան): Ահա նրանց տեղը:

**ՄԱՐԳԻ.** Քարասիրտ, այդ ի՞նչ ես անում:  
(Ծալով յարձակում է, որ խանգարի):

**ԱՆԴՐ.** (Չի թողնում նրան վառարանին մօ-  
տենալ): Կաց, եթէ ոչ քեզ էլ կըգցեմ այստեղ:  
Ահ, վերջապէս, ազատում եմ ձեզանից: Վա-  
ռուեցէք, մոխիր դարձէք, դուք շատ էք այրել  
իմ սիրուրը:

Կոիւ երկուսի մէջ:

**ՄԱՐԳԻ.** Թող ինձ, թող ինձ: Դու ինձ ես այ-  
րում, ինձ: Բաց թող, բաց թող: (Ուզում է կծո-  
տել հօր ծեռները): Ահ, ես թուլանում եմ, ոյժ  
չունիմ: Լսիր, ես կըգոռամ, կըկանչեմ բոլորին  
այստեղ, որ տեսնեն քո աւագակութիւնը: Թող:  
(Ազատուելով հօր ծեռքից, մօտենում է վառարա-  
նին) Ահ, այլ ևս ուշ է: Այրուեցին, կորաւ ա-  
մեն ինչ: (Բարձրաձայն) Այստեղ եկէք, Թօզա-  
լիս, Բագրատ, ամենքդ եկէք, տեսէք ինչ է կա-  
տարւում այստեղ: Հայրն այրեց իւր աղջկայ պա-  
տիւը: Ահ, կորաւ ամեն ինչ: (Թուլացած ընկ-  
նում է աթոռի վերայ: Լուլթիւն): Բայց թող այդ-  
պէս լինի: (Քայլերն ուղղում է դէպի ծախ ողո-  
ները: Հանդիպում է Օթարեանին, որ զալիս է  
նոյն ղոներից, ցնցում է եւ անշարժ մնում):

**ԲԱԳԻ.** Ներս է մտնում նոյն ղոներից Օթա-  
րեանից քիչ յետոյ:

## ՏԵՍԻԼ VII.

ՆՈՅՆՔ, ՕԹԱՐԵԱՆ ԵՒ ԲԱԴՐԱՏ:

**ԱՆԴՐ.** Չեռնեցը մէջքին դրած, կանգնած է ուշպի ձախ:

**ՕԹԱՐ.** Վերջապէս, տեսայ քեզ: Դու հիւանդ չես և փախչում ես ինձանից: Լսիր, հայրդ ինձ անպատիւ արաւ և դուրս վոճղեց իւր տնից: Ես համարւում եմ ստոր մարդ, որ ուղեցել եմ խաբեբայութեամբ կորպել նրա հարստութիւնը: Ցոյց տուր նրան իմ թղթերը: Ցոյց տուր իսկոյն, ես այսպէս եմ կամենում: Ես ստորացած եմ, անպատուած: Ցոյց տուր այդ ապացոյցները:

**ՄԱՐԳ.** Լուր, գրնատ, դողդոջուն եւ անշարժ կանգնած է սլատի տակ:

**ՕԹԱՐ.** Ահա և՛ եղբայրդ: Այժմ նա ուրիշ լեզուով է խօսում: Այստեղ մարդկանց գերերը փոխուել են: Երեկ հայրդ էր ուղում ինձ կաշուել, այսօր—եղբայրդ: Գոնէ բացադրիր, ինչ է պատահել: (Հողութիւն) Աս, դու լո՞ւմ ես, ձայն չես հանում, կանգնած ես դատապարտեալի սլէս: Երդում եմ հօրս հարստանարուած գերեզմանով, կամ դուք էք խելազարուել կամ ես: (Մարզադատին) Ասա, այդ ի՞նչ դաւազըրութիւն է: Զէ որ քեզ ընտրեցի դատաւոր: Ա՞ւը են իմ ապացոյցները: Բեր այստեղ:

**ՄԱՐԳ.** (Երկար տատանուելով) Զըդիտեմ:

**ՕԹԱՐ.** Դէհ, լսաւմ ես, Մարգարիտ, գնաբեր այն թղթերը:

**ՄԱՐԳ.** (Մեռելոյին սառնութեամբ) Ես այբեցի այն թղթերը: Ահա այստեղ: (Ցոյց է տալիս վառարանը, սրկարատեւ, տանջանկով լի մի հայացը է ձգում հօր վրայ եւ թոյլ քայլերով հեռանում է ձախ դռներով:

**ՕԹԱՐ.** (Միաժամանակ մօտենում են վաբագր. յոարանին):

**ԲԱԳՐ.** Նսցում է, փակումէ վառարանի դըռներն եւ ուրախութիւն արտայայտում:

## ՏԵՍԻԼ VIII.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՄԱՐԳԱՐՏԻ:

Ենտոյ Սաղաթէլ եւ Սուրէն:

Պատկերաւոր տեսարան:

**ՕԹԱՐ.** (Ապշած նսցում է մերթ մէկին, մերթ միախին): Այրել է: Ուրեմն, այդ մի որոգայթ էր ինձ համար: Մարգարիտը դաշնակից մի տւազակի: Ոչ, այդ անկարելի բան է: Կասկածել նրա ազնւութեան մասին, կընշանակէ հայհոյել սրբութիւնը: Նա սուտ ասաց: Նա իրան զրպարտեց: Այստեղ մեղաւորն ուրիշ է: (Անդէասին) Արդարացը էք ձեր աղջկան, ապա թէ ոչ ես նըրան կըվիրաւորեմ:

**ՍԱՀ.** Ներս է մտնում ծախս ղոնեսըց:

**ԱՆԴԻՐ.** Մաղաթէլ, գնաճք կլուբ: (Քայլերը  
տողում է ղէպի նախասենեակ):

Բնմի ետեւից լսում է ատընանակի պայ-  
թիւն:

**ԲՈԼՈՐԸ.** Ցնցում են:

**ՍԱՀ.** Այդ բնչ էր: (Վազում է յիտ ծախս  
ղոներով):

**ԲԱԳԻՐ.** Հետեւում է Սաղաթէլին:

**ԱՆԴԻՐ.** } Քարացել են:

**ՍՈՒԻՐ.** (Ներս է վազում ծախս ղներից զու-  
նալթափուած: Տատանում է: Լուլթիւն): Մար-  
դարիսն իրան սպանեց:

**ԱՆԴԻՐ.** (Մոնչում է, ծեռը զարկելով զլիսին):  
Կէ, որդեսպան:

**ՕԹԱՐ.** Աա, այդ դժւ ես այրել: Գազան:  
Ուզում է յարձակուել Անդրէասի վրայ):

**ՍՈՒԻՐ.** (Մէջ է ընկնում) Կաց, նա արդէն  
պատժուած է: (Նայում է հօրը կատաղութեամբ  
եւ զզուանքով):

**ՕԹԱՐ.** Մարգարիտ, Մարգարիտ: (Հեկելա-  
լով վազում է ղէպի ծախս եւ անզօրացած յին-  
ում ղոներին):

ՎԱՐԱԳՈՅԵՐՆ ԻՃՆՈՒՄ Է ՀԱՆԴԱՐԸ

1904 թ. Յունիս Կօջօր:



you Sir

ՀՀ Ազգային գրադարան



NL0351715

98365